

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

1885-1908 ԹԹ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ  
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ  
ԱՐՄԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ  
ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆ 2010

9(47.925)  
U-25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

## ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

1885-1908 թթ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ  
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ  
ԱՐՄԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՄԵՏՐՈՊ ՍՐՔ. ԱՇԾԵԱՆ  
ՄԱՏԵՆԱԸՆՐ

56




ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES

56

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

2010



ԷԷԷ

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

U 259

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ  
պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պատմ. գիտ. թեկնածու  
Ռ. Օ. Սահակյան

Սարգսյան Ս.

U 259 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայ-  
քարը Արմենական գործիչների գնահատմամբ.- Եր.: Պատմ.  
ինստ., 2010.-120 էջ:

Մենագրության մեջ լուսաբանված են հայ ազգային-ազատագրական  
պայքարի պատմության 1885-1908 թթ. իրադարձություններով հարուստ ժամա-  
նակահատվածի խնդիրները և դրանց գնահատումը արմենական գործիչ-տեսա-  
բանների կողմից:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, քաղաքագետների և ընթերցող  
լայն շրջանակների համար:

*Մենագրության հեղինակ Սուրեն Սարգսյանը շնորհակալու-  
թյուն է հայտնում մեծարգո Արսեն Դեմիրճյանին՝ գրքի տպագրու-  
թյան գործում օգտակար լինելու համար:*

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010

ISBN 978-99941-73-43-3

ՀՏԴ 941(479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմագիտություն կամ պատմագիտական միտք հասկա-  
ցություններն առաջին հայացքից թվում է՝ իրար համահունչ են:  
Սակայն այդպես չէ. դրանց միջև առկա են տարբերություններ:  
Պատմագիտությունը գիտություն է, որի հիմնական նպատակն է  
աղբյուրագիտական լայն բազայով շարադրությանը զուգընթաց  
պատմագիտական հայեցակարգային մոտեցումների դրսևորումը  
պատմական որևէ ժամանակահատվածի վերաբերյալ (թեև կան  
պատմագիտության ճյուղեր, որոնք իրենցից ներկայացնում են  
պատմության փաստացի շարադրանք՝ առանց հեղինակի եզրա-  
կացությունների և հղած փաստերի նկատմամբ որոշակի վերա-  
բերմունքի):

Երբ խոսքը քննական-վերլուծական պատմագիտության  
մասին է, ապա ակնհայտ ճշմարտություն է, որ այն անպայման  
պետք է ապահովի պատմագիտական նոր միտք՝ պատմական  
դեպքերի պատճառների, ընթացքի, հետևանքների ամբողջակա-  
նացման արդյունքում: Բնականաբար անհրաժեշտ պայման է, որ  
հեղինակը քաղաքականացված ջիհի և գնահատականների հիմ-  
քում ունենա մեկ սկզբունք՝ անկողմնակալությունը և անաչառու-  
թյունը: Այլ հարց է, որ անհնար է, անկախ քաղաքականացված լի-  
նելու հանգամանքից, լրիվ գերծ մնալ անվերապահ սուբյեկտի-  
վիզմից: Այնուամենայնիվ, պատմագիտական վերլուծականնե-  
րում դրա բաժնեչափը պետք է հնարավորինս հասցվի նվազա-  
գույնի:

Այլ ձևակերպմամբ՝ պատմագիտությունը գիտություն է, որն  
սկզբից մինչև վերջ պետք է նպատակաուղղվի պատմական իրա-  
դարձությունների նկատմամբ պատմագիտական մտքի կամ  
պատմագիտական հայեցակարգի մշակմանը: Այս մոտեցումը

պարտադիր է, բայց գործնականում հաճախ ոչ կիրառելի, հատկապես՝ կուսակցական պատմագրության առումով: Սրա պատճառները հասկանալի են. կուսակցությունները քաղաքական կառույցներ են և այստեղից էլ՝ պատմաքաղաքական որևէ իրադարձության մեջ նրանց դերի գնահատականը կուսակցական պատմաբանների կողմից դարձյալ քաղաքական դրդապատճառներով դժվար է թերագնահատել: Սա, հարկավ, չի նշանակում, որ ընդհանրապես գործած պատմական սխալների մատնանշումը բացառվում է, բայց հաճախ այդ սխալների օբյեկտիվությունը հիմնավորվում է ոչ համոզիչ կերպով:

Անաչառության կամ անկողմնակալության միտումը կուսակցական պատմագիտության մեջ առաջնահերթային չէ և դա բնական է:

Ավելացնենք, որ այս հանգամանքը չպետք է հանգեցնի այն հետևությանը, որ կուսակցական պատմագրությունը երբևէ չի կարող համեմատվելու աղերսներ ունենալ անաչառ, չեզոք, գիտական կամ ակադեմիական պատմագրության հետ: Ընդհակառակը, այդ պատմագրության հայեցակարգային բազում մոտեցումներն իրենց ճշմարտությամբ կարող են արմատավորվել ակադեմիական պատմագիտության մեջ, քանի որ ոչ մեկը չի կարող ժխտել մեկ պարզ ճշմարտություն՝ պատմությունը քաղաքական գիտություն է:

Վերոշարադրյալից, սակայն, ընդհանրացումը մեկն է՝ թե անկախ և թե կուսակցական պատմագրությունը (խոսքը, անշուշտ, քննական-վերլուծական պատմագրության մասին է) նույնպես կոչված է պատմագիտական միտք կամ հայեցակարգեր մշակել և մատուցել առհասարակ պատմության կամ նրա որևէ դրվագի վերաբերյալ: Պատմագիտության գլխավոր նպատակը դա է:

Սակայն, պատմագիտական միտք կամ հայեցակարգ կարող են ներկայացվել ոչ միայն պատմաբանների, այլ նաև կուսակցական, քաղաքական գործիչների, քաղաքագետների ու տվյալ պատմական իրադարձությունների մասնակիցների հրապարակած ոչ պատմագիտական բնույթի աշխատություններում, հուշագրություններում և այլ հրապարակումներում, որոնք հաճախ նմանաբնույթ գործերի որոշ մասին հաղորդում են պատմագիտական արժեք:

Սա նշանակում է, որ պատմագիտական մտքի գնահատումը ամենևին չպետք է սահմանափակել սոսկ պատմական թեմատիկայով աշխատություններում դրանց դրսևորումներով: Եթե առաջնորդվում ենք միայն այս վերջին մոտեցմամբ, ուրեմն կարող ենք խոսել միայն որևէ ժամանակահատվածի պատմագրության զարգացման մասին: Դա կախված է թեմայի ընտրությունից:

Ներկայացվող այս ուսումնասիրությամբ մեր առջև նպատակ ենք դրել պատմաբաններին, քաղաքագետներին և ընթերցող լայն շրջաններին ներկայացնել 1885–1908 թթ. հայ կուսակցական պատմագիտական միտքը և ոչ թե պատմագրությունը: Այսինքն, մենք հակված ենք որքան հնարավոր է անաչառ և ոչ քաղաքականացված դիրքերից վերլուծել 1885–1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարի երեք դրոշակակիր կուսակցությունների (Արմենական, Ս.Դ. Հնչակյան և Հ.Յ. Դաշնակցություն), դրանց անդամ գործիչների և պատմաբանների մեր կարծիքով կարևորագույն և տարողունակ աշխատությունները, հուշագրությունները, հոդվածները, որոնք.

ա) Իրենցից ներկայացնում են զուտ կուսակցական պատմագիտական բնույթի աշխատություններ,

բ) ունեն հուշագրությունների բնույթ, բայց պատմական իրադարձությունների ընթացքի վերաբերյալ ներկայացնում են արժեքավոր պատմագիտական մոտեցումներ:

Իհարկե, դա ոչուրին խնդիր չէ, և պահանջում է եղած իրապարակումների խոր հետազոտություն և վերլուծություն, ինչում աշխատել ենք չզլանալ<sup>1</sup>:

Նախ, փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչ<sup>օ</sup> ենք առանձնացրել և վերլուծել հատկապես հիշյալ ժամանակահատվածի կուսակցական պատմագիտական միտքը: Որովհետև այդ շրջանը ներկայացնում է հայոց նոր պատմության ամենաբարդ ու հակասական ժամանակահատվածներից մեկը և մեր հետաքրքրությունների ու ուսումնասիրության շրջանակներում է:

Հայ ազգային-ազատագրական պայքարն ըստ էության վճռական փուլ թևակոխեց 19-րդ դարի 80-ական թվականների կեսերից և փաստորեն ավարտվեց 1908 թ. երիտթուրքական սահմանադրության ընդունմամբ: Առ այսօր մեր պատմագիտության մեջ բաց են մնացել այդ շրջանին վերաբերվող շատ հարցեր, որոնք կարող են լուսաբանման. այսպես՝ ազատագրական պայքարում առկա էին տարբեր ուղղություններ, որոնք ունեին ընդհանրություններ և տարբերություններ, լրջորեն չէր քննարկվել մեր ազատամարտի արդյունավետության հարցը, այդ պայքարի վերելքի շրջանում (1890-ական թթ.) տեղի ունեցան արևմտահայության առաջին զանգվածային ջարդերը, որոնց պատճառները համակողմանիորեն չեն ներկայացվել և այլն: Արդյո՞ք կապ կար հայ ազգային կուսակցությունների առավել հաճախ մեծ տերությունների միջամտության հույսով ազատագրական պայքարի կազմա-

կերպման և այդ ջարդերի միջև: Արդյո՞ք մեծ տերություններին ապավինելով և մասնակի դրվագների կազմակերպումով, թե մեկ նպատակի շուրջն ուժերի համախմբումով էր հնարավոր հասնել ակնկալած հաղթանակին: Սրանք և բազում այլ հարցեր դեռևս չեն գտել իրենց վերջնական պատասխանները: Իսկ այդ պատասխանները, թերևս, կարելի է գտնել այդ ժամանակահատվածի վերաբերյալ ստեղծված կուսակցական ստվար գրականության ուսումնասիրության և այն պատմագիտական հայեցակարգերի՝ ընդունման ճանապարհով, որոնց ընդհանրությունը տեսնում ենք երեք կուսակցությունների գործիչների և պատմաբանների գրական ժառանգություններում:

Ի վերջո, ցավալի, բայց անժխտելի փաստ է, որ հայ ազգային-ազատագրական պայքարը, որը ձևավորվեց արևմտահայ խնդրի շուրջ, պարտվեց: Այս պարտության պատճառների համակողմանի ընկալումն անհնար է առանց վերլուծելու այդ պայքարի վերաբերյալ ստեղծված բազմաթիվ ու բազմաբնույթ աշխատությունները, այնպես էլ կուսակցական պատմագիտական միտքը: Հենց այս համոզմունքը դրդեց, որ ձեռնարկենք այս բարդ ու դժվարին աշխատանքը:

Այս ուսումնասիրությամբ ընթերցողի դատին ենք ներկայացնում 1885-1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարն արմենական կուսակցական գործիչների պատմագիտական մտքի գնահատմամբ և մեր վերաբերմունքն արծարծված խնդիրներին:

Արմենական կազմակերպությունը հայ իրականության մեջ առաջին քաղաքական կուսակցությունն էր: Նա, որպես քիչ թե շատ կուռ և գործուն կառույց, ունեցավ մոտ 10-ամյա գործունեություն: Կուսակցությունը 1896 թ. հունիսի Վանի «Մեծ դեպ-

<sup>1</sup> Այս բնույթի աշխատություն գրելու, քննական-վերլուծական մեթոդը ճիշտ կիրառելու և, վերջապես, օբյեկտիվ ու ճշմարտացի եզրահանգումներ կատարելու համար մեզ անհրաժեշտ եղավ ուսումնասիրել հսկայական մասնագիտական և օժանդակ գրականություն:

քից<sup>1</sup>» հետո սաստիկ թուլացավ և, ըստ էության, այլևս երբեք նախկին ուժը, հզորությունն ու հեղինակությունը չունեցավ և չկարողացավ իրականացնել այն գործառույթները, որոնք նախանշված էին իր ծրագրերում: Արմենական կուսակցությունը միակ քաղաքական կազմակերպությունն էր, որ ձևավորվեց Արևմտյան Հայաստանում, և որի անդամներն առավել ծանոթ էին տեղական պայմաններին ու ազատագրական պայքարի կազմակերպման դժվարություններին: Նրանք հաշվի առնելով ստեղծված ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական բարդ ու ոչ նպաստավոր պայմանները՝ գիտակցում էին, որ օսմանյան բռնապետության պայմաններում հնարավոր չէր իրականացնել լայնածավալ գործողություններ: Բացի այդ, բացակայում էին անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, չկային համապատասխան փորձ և հմտություն ունեցող անհատներ, որոնք կկարողանային կրթել և ազատագրական պայքարի առաջնորդել արևմտահայությանը:

Արմենականների ղեկավարությունը, հաշվի առնելով վերը նշված պայմանները՝ հենց սկզբից որոշեցին էր յուրօրինակ մարտավարություն՝ խուսափել բացահայտ ելույթներից, գործել կշռադատված ու խոհեմ:

1890-ական թվականների երկրորդ կեսին, կորցնելով իր ղեկավար գործիչներին և դ իրքերը զիջելով ՀՅ Դաշնակցությանը, Արմենական կուսակցությունը զիջեց ազատագրական պայքարի ասպարեզը և մաս կազմեց 1908 թ. ձևավորված Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությանը (այսուհետև՝ ՀՍՌԿ): Դա էր հիմնական պատճառը (կարևոր էր նաև այն, որ ելնելով գաղտնապահության ու խոհեմության սկզբունքներից, ինչպես նաև թշնա-

<sup>1</sup> Այդ հերոսամարտի մասին մանրամասն տես Ա-Դո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Ե., 1917, Մեծ եղեռնի հերոսապատումը, 1915 թվի ինքնապաշտպանական հերոսամարտերը, Թեհրան, 1982:

մուն ավելորդ նյութեր չտալու մտայնությունից՝ արմենականները շատ քիչ էին գրում իրենց մասին, և նույնիսկ իրենց ծրագիրը, կանոնագիրը և այլ հիմնարար փաստաթղթեր այդ պատճառով չեն պահպանվել և մեզ չեն հասել), որ կուսակցությունն այնքան էլ շատ գրական ժառանգություն չթողեց իր գործունեության պատմական գնահատման տեսանկյունից: Սակայն, առկա գրականությունն էլ բավարար է, որպեսզի ուսումնասիրողը պատկերացում կազմի կուսակցության գործունեության սկզբունքների մասին և նրա պատմագիրների ու հուշագիրների պատմագիտական ընդհանրացումներից առանձնացնի այն հիմնախնդիրները, որոնք վերաբերում են հայ ազգային-ազատագրական պայքարի ընթացքին:

Արմենական կուսակցական պատմագիտական միտքը, անշուշտ, 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ ակադեմիական հայեցակարգային մոտեցումների ձևավորման համար կարևոր դեր կարող է ունենալ:

Արմենական կուսակցականների պատմագիտական միտքը 1885-1908 թթ. հայ ազատագրական պայքարի վերաբերյալ ներկայացնելուց բացի, փորձել ենք գնահատել հիշյալ ժամանակահատվածի արմենական այնպիսի նշանավոր գործիչների պատմագիտական միտքը, ինչպիսիք են Արտակ Դարբինյանը, Արմենակ Եկարյանը, Միքայել Նաթանյանը և Փանոս Թերլեմեզյանը:

Նշված այդ գործիչների աշխատություններն ունեն սկզբնաղբյուրային արժեք, որովհետև դրանց հեղինակները եղել են շատ դեպքերի անմիջական մասնակիցներն ու ղեկավարները: Դրանք ունեն նաև պատմագիտական արժեք, քանզի, հետադարձ հայացքով չափելով ոչ վաղ անցյալի պատմական իրադարձությունները,

հեղինակները փորձել են ոչ միայն արժևորել, գնահատել, այլև վերագնահատել դրանք:

Առանձնացնելով նրանց պատմագիտական մոտեցումները, մենք, հարկավ, փորձել ենք ցույց տալ, որ դրանք ոչ հաճախ են օբյեկտիվ և մասնավորապես այն դեպքերում, երբ կապված են մյուս երկու ավանդական կուսակցությունների գործունեության առանձին դրվագների հետ: Այդ կուսակցությունների նկատմամբ գնահատականներում կողմնակալության որոշ առկայությունը պայմանավորված է մի շարք դրդապատճառներով: Դրանցից հատկապես առանձնացնենք ՀՅԴ կուսակցության արդեն 1890-ական թթ.-ի կեսերից սկսած ավելի ծավալուն և ընդգրկուն գործունեությունը, որի պատճառով գրեթե ամբողջովին ստվերվեց 1896 թ. «Մեծ դեպքից» հետո կենդանի մնացած փոքրաթիվ արմենականների գործունեությունը:

Պատճառներից մեկն էլ կարելի է համարել այն, որ որոշ նախկին արմենականներ (Ա. Դարբինյան, Փ. Թերլեմեզյան) Խորհրդային Միության նկատմամբ անձնական դրդապատճառներով դրական դիրքորոշման որդեգրման պայմաններում առավել ծայրահեղ, երբեմն էլ իրականությանը չհամապատասխանող քննադատականների տեղատարափներ տեղացին այլ քաղաքական ուժերի, մասնավորապես՝ ՀՅԴ կուսակցության հասցեին: Այս հանգամանքից ելնելով՝ մենք փորձել ենք որքան հնարավոր է գնահատականների մեջ օբյեկտիվը զատորոշել արհեստականից:

Այս ամենով հանդերձ, մենք այն կարծիքին ենք, որ Արմենական կուսակցությունը որդեգրել էր հայ ազատամարտի առավել արդյունավետ մարտավարություն, որին, ի վերջո, 1898 թ. իր 2-րդ Ընդհանուր ժողովից հետո սկսել է հակվել նաև այդ շրջանում մեր ազատագրական շարժման անվիճելի առաջնորդ ՀՅ Դաշնակցությունը:

Ավելացնենք նաև, որ մեր կողմից վերլուծության ենթարկված աշխատություններից բացի, կան նաև հողվածների տեսքով մի քանի հրապարակումներ, որոնք մենք չենք վերլուծել, քանզի դրանք ավելի շատ ունեն սկզբնաղբյուրային արժեք, նկարագրական բնույթի են ու զերծ ընդհանրացումներից<sup>1</sup>:

Այլ հեղինակների ուսումնասիրություններ չենք էլ փորձում առանձնացնել, որովհետև մեր նպատակն է գնահատել միայն կուսակցական հեղինակների պատմագիտական միտքը:

Վերլուծություններն աշխատել ենք կատարել չեզոք և անաչառ դիրքերից հավատարիմ մնալով ակադեմիական պատմագրության սկզբունքներին:

Հայ առաջին քաղաքական կազմակերպության՝ Արմենական կուսակցության գործունեության առանձնահատկությունը նրանում է, որ նա, ի տարբերություն մյուս երկու՝ Ս.Դ. Հնչակյան և Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունների, իր ոչ երկարատև գործունեության ընթացքում որդեգրել էր արևմտահայ ազատագրական պայքարի կազմակերպման երկու հիմնական սկզբունք կամ մոտեցում: Այդ մոտեցումներն իրենց արտահայտությունն են գտել նրա ծրագրային դրույթներում: Դրանք են.

ա) Ազգային-ազատագրական պայքարը կազմակերպել զուսպ, առանց ժամանակավրեպ ու տարանջատ ձեռնարկների, գաղտնորեն զինվելու և ընդհանուր ապստամբություն կամ հեղափոխություն կազմակերպելու ճանապարհով:<sup>2</sup>

բ) Ազգային-ազատագրական պայքարի ընթացքում զինված ելույթների չգնալ մեծ տերությունների միջամտության հույսով,

<sup>1</sup> Տե՛ս Խսրի տուն, գրեց՝ Գ. Պեօզիկեան, «Վասպուրական» ամսաթերթ, N 3, մարտ, 1941 և N 9, սեպտեմբեր, 1941:

<sup>2</sup> Ծրագրում կուսակցության նպատակն է համարվում՝ «Յեղափոխութեամբ Թուրքիոյ հայ ժողովրդեան համար ձեռք բերել ինքզինք ազատորեն կառավարելու» իրավունք, տե՛ս ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 66, թ. 7:

այլ՝ ավելի շատ ապավինել սեփական ուժերին: Սա նախ և առաջ պայմանավորված էր նրանով, որ Արմենական կուսակցությունը հայ դասական քաղաքական կազմակերպություններից միակն էր, որ ձևավորվել էր Արևմտյան Հայաստանում (Վանում) և ի տարբերություն ՍԴՀ և ՀՅԴ կուսակցությունների, բնականաբար ավելի իրական պատկերացում ուներ այնտեղ տիրող իրավիճակի վերաբերյալ<sup>1</sup>:

Սա էր նրա իրատեսական գործունեության հիմնական խթանը: Իսկ այս գործունեության իրատեսական լինելու մեջ համոզվելու համար անհրաժեշտ է ճշտորեն ընկալել և քննական վերլուծական մեթոդով ներկայացնել այդ կուսակցության գործիչների հայ ազգային-ազատագրական պայքարի (մասնավորապես 1885–1908 թթ.) վերաբերյալ ստեղծած պատմագիտական աշխատությունները, որոնք կօգնեն որոնել և գտնել այնպիսի կարևորագույն և արդիական հնչեղություն ունեցող հարցերի պատասխանները, ինչպիսիք են.

-արդյո՞ք հնարավոր էր հայ ազգային-ազատագրական պայքարի հաջողությունը չկապել մեծ տերությունների հետ,

-հայ ժողովուրդն ընդունա՞կ էր միայն սեփական ուժերով ազատագրվել թուրքական տիրապետությունից,

-ո՞րն էր հայ ազատագրական պայքարի իրատեսական ուղին՝ հայդուկային պայքարը, թե ընդհանուր ապստամբությունը:

-ինչու՞, ի վերջո, արդյունավետ ավարտ չունեցավ արևմտահայ ազատագրական պայքարը և այլն:

Անշուշտ, այս և նման այլ հարցերի վերջնական կամ ճշմարտությանը առավել մոտիկ պատասխանը հնարավոր չէ

<sup>1</sup> Հավանաբար նման գործելակերպը պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ արմենականները հեռու են եղել այսպես կոչված բանվորական կամ սոցիալիստական շարժումներից:

գտնել միայն Արմենական կուսակցական գործիչների ստեղծած աշխատությունների կամ հուշագրությունների ուսումնասիրության և վերլուծության ճանապարհով: Այս պատասխանի որոնումը պահանջում է ոչ միայն Արմենական, այլև Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունների, ինչպես նաև չեզոք կամ ոչ կուսակցական պատմագիտական աշխատությունների լուրջ ուսումնասիրություն և արժեքավորում: Այդ ուսումնասիրության ճանապարհին պատմական իրադարձություններին տրված գնահատականները պետք է դիտարկվեն միայն հայ ժողովրդի համար ունեցած արդյունավետության տեսանկյունից:

Արմենական կուսակցությունը հիմնվելով 1885 թ. Վան քաղաքում և, դժբախտաբար, ունենալով ոչ երկարատև գործունեություն՝ չի կարելի պնդել, թե թողել է կուսակցական պատմագրության շատ հարուստ ժառանգություն: 1896 թ. Վանի ինքնապաշտպանական կռիվներից հետո, երբ կոտորվեց նրա ողնաշարը, այդ կուսակցության հատուկ գործիչներ թեպետ շարունակեցին իրենց գործունեությունը, բայց այն այլևս չկարողացավ հասնել կազմակերպչական այն մակարդակին, որն ուներ Մ. Ավետիսյանի ղեկավարության տարիներին: Նրա որոշ գործիչներ մտան Հ. Յ. Դաշնակցության շարքերը, իսկ շատերը, ինչպես հայտնի է, միավորվելով Վերակազմյալ հնչակյանների հետ, ստեղծեցին ՀՍՈԿ-ը<sup>1</sup>: Այնպես որ հայ ազատագրական պայքարի Արմենական կուսակցության հոգևոր ժառանգությունը ինչ-որ տեղ համահունչ է ՈԱԿ-ի ստեղծած ժառանգությանը, որի հանգրվանային ձևավորման ճանապարհին, որպես առաջին փուլ, առանձնացվում է Արմենական կուսակցության ձևավորումն ու գործունեությունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տես Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Երևան, 2009:

<sup>2</sup> Այդ մասին մանրամասն տես «Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ /1885-1914թթ./, հեղինակային կոլեկտիվ, Է. Ա. Կոստանդյանի խմբ., Ե., 2003:



1885-1908 թթ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ  
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՆ ԱՐՏԱԿ  
ԴԱՐՔԻՆՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Արմենական կուսակցության՝ հայ ազգային-ազատագրական պայքարի պատմության վերաբերյալ ստեղծած աշխատությունները, կարծում ենք, որ կարելի է ներկայացնել հետևյալ տարբերակումներով.

1. Քննելով և արժևորելով Արմենական կուսակցության հուշագրական բնույթի այն սկզբունքները, որոնք միաժամանակ ունեն պատմագիտական գնահատելի արժեք: Այս հուշագրություններում (Ա. Եկարյանի, Ա. Դարբինյանի և այլն) հեղինակները հանդես են գալիս ոչ միայն սոսկ որպես դեպքերի պարզ ականատեսներ և նկարագրողներ, այլև դրանք յուրովի արժևորողներ և մեկնաբանողներ: Այս իսկ պատճառով դրանք իրենցից ներկայացնում են կարևոր ու արժեքավոր սկզբնաղբյուրներ և, միաժամանակ՝ աշխատություններ, քանզի հաճախ պատմական այս կամ այն իրադարձության վերաբերյալ (պարտադիր չէ՝ դրա մասնակիցն են եղել, թե ոչ) ցուցաբերում են արդիական նշանակություն ունեցող հայեցակարգային մոտեցումներ:

2. Վերլուծելով այն պատմագիտական աշխատությունները, որոնք ստեղծել են Արմենական կուսակցության անդամ գործիչները, հայ ազգային-ազատագրական պայքարում Արմենական կուսակցության ունեցած դերի, նրա պատմության և առհասարակ 1885-1908 թթ. ընդգրկող պատմական բուռն ժամանակահատվածի, նրա առանձին դրվագների և այդ դրվագներում գլխավոր դերակատարություն ունեցողների վերաբերյալ:

Հիմք ընդունելով այս երկու տարբերակումները փորձել ենք վերլուծել և գնահատել Արմենական կուսակցության պատմագիտական արժեք ունեցող առավել կարևոր սկզբնաղբյուրներն ու աշխատությունները միաժամանակ:



Որպես հուշագրային բնույթի կարևորագույն սկզբնաղբյուր և պատմագիտական արժեք ունեցող գործ, նախ և առաջ ուզում ենք առանձնացնել Արտակ Դարբինյանի աշխատությունը<sup>1</sup>:

Դարբինյանը ծնվել է 1878 թ. Վան քաղաքում: Ամբողջ էությամբ վանեցի, հարազատ քաղաքի ծնունդ ու ավանդույթների ջերմեռանդ պաշտպանը «աչքը բացեր է դպրոցական-յեղափոխական մթնոլորտում»<sup>2</sup>: Մթնոլորտ, որն ամբողջությամբ տոգորված էր Խրիմյան, Փորթուզալյան և Ավետիսյան-Թերլեմեզյան Սկրտիչների ու Արմենական կուսակցության ազատատենչ ոգով: Նախնական կրթությունն ստացել է Վանի Սրբոց Թարգմանչաց վանքի երեկոյան վարժարանում, որի իննամյա շրջանն ավարտել է 1893 թ.: Ուսման տարիներին աչքի է ընկել բարձր առաջադիմությամբ և ընթերցասիրությամբ: 1893 թ. մարտին 1518-ամյա պատանիներից բաղկացած ազատատենչ մի խմբի հետ շուտով ընդունվեց արմենականների շարքերը: «Նորգեղացի Սախո» հեղափոխական մականունով «Ֆիրար» (փախստական) դարձած Ա. Դարբինյանը հետապնդումներից խուսափելու և ուսումը շարունակելու նպատակով 1894 թ. ընդունվեց էջմիածնի Գևորգյան ճեմարան: Ճեմարանում ուսանելու տարիներին անհանգիստ ու անհնազանդ Դարբինյանը 1898 թ. ձերբակալվեց և բանտարկվեց Երևանի բերդում: Շուտով երաշխավորությամբ ազատվեց բանտից՝ մնալով ոստիկանության հսկողության ներքո: 1899 թ. ավարտելով ճեմարանը, Ա. Դարբինյանը դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Սկրտիչ Խրիմյանին կուսակրոն օծվելու խնդրանքով: Վեհափառը մերժում է նրան՝ պատճառաբանելով, որ տվյալ պահին գերադասելի է գործուն, անմիջական մասնակցություն ունե-

<sup>1</sup> Տե՛ս Արտակ Դարբինեան, Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890 և 1940, Փարիզ, 1947 և Բ տպագրութիւն, Ե., 2003:

<sup>2</sup> Դարբինեան Ա., նշվ. աշխ., «Անձինք նուիրեալք...» առաջաբանը գրեց Ա. Հարությունյանը, էջ 4:

նալ հայրենիքի ազատագրության սրբազան գործին: Կարճ ժամանակ ուսուցիչ աշխատելով Պարսկաստանի Սալմաստ գավառի Փայաջուկ գյուղում (Րաֆֆու ծննդավայր)՝ Դարբինյանը որոշում է ուսումը շարունակել Գերմանիայում: Այնտեղ մեկնելու կես ճանապարհին՝ Օդեսայում, նամակ է ստանում էջմիածնից: Նամակում հայտնվում էր, որ ներման է արժանացել սուլթանի կողմից: Բացի այդ, Վանի Արարուց (Արարք) թաղամասի թաղական խորհուրդը խնդրանքով դիմել է կաթողիկոսին՝ իրենց դպրոցի համար ուսուցիչ ուղարկել: Մ. Խրիմյան կաթողիկոսը տալիս է իր համաձայնությունը և երաշխավորում Ա. Դարբինյանին: Ի դեպ, թաղական խորհրդի «խնդրանքի» հեղինակն իրականում Արմենական կուսակցությունն էր, որն այդ կերպ ցանկանում էր Վան վերադարձնել երիտասարդ ազգասերին: Ա. Դարբինյանը վերադառնում է էջմիածին, այցելում վեհափառ Հայրիկին ու լսելով նրա բարեմաղթանքները՝ «Գտար կեանքիդ ուղիղ ճամբան, պիտի երթաս հայրենիքիդ ծառայելու»<sup>1</sup> մեկնում է Վան: Յոթամյա բացակայությունից հետո վերադառնալով Վան՝ Ա. Դարբինյանն անցավ ուսուցչական պաշտոնի: Իսկ մի տարի անց՝ 1901 թ. ամուսնացավ: Այս հանգամանքը որոշ չափով մեղմացրեց ոստիկանական հսկողությունը: Սակայն հարաբերական այդ անդորրը երկար չտևեց: 1904 թ. մարտին նա դատապարտվեց երեք տարվա ազատազրկման, սակայն ազդեցիկ հայերի միջամտությամբ մեկ և կես ամիս հետո ազատվեց: 1905 թ. նշանակվեց Վարազա վանքի նշանավոր «ժառանգավորաց» վարժարանի տնօրեն:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո, որոշ ժամանակ աշխատակցում էր «Վան-Տոսպ» թերթին, իսկ կիրակի օրերին բանախոսում էր կուսակցական հրապարակային ժողով-

<sup>1</sup> Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 72:



ներում: 1913 թ. հուլիսին Կ. Պոլսում գումարված ՀՍՌԿ 2-րդ ընդհանուր Պատգամավորականի աշխատանքներին որպես Վասպուրականի շրջանի գործիչ մասնակցում էր նաև Ա. Դարբինյանը: Այդ նույն թվականին նա մասնակցեց նաև ՀՅԴ, ՍԴՀԿ և ՀՍՌ կուսակցությունների միջև համագործակցության նպատակով հրավիրված խորհրդակցական ժողովին՝ որպես ՀՍՌԿ-ի լիազոր ներկայացուցիչ: 1915 թ. Վանի հերոսական ինքնապաշտպանության ակտիվ մասնակից Ա. Դարբինյանը հետո ընտրվեց Վանի նորաստեղծ Նահանգային վարչության դիվանապետ: Դեպքերի հետագա զարգացման ընթացքում ժողովրդից անբաժան գործիչը 150 հազարանոց գաղթականների քարավանի հետ 1915 թ. օգոստոսին հասավ Թիֆլիս: Վանի հայությանը օգնելու նպատակով այստեղ ձևավորվեց Նպաստամատույց հանձնաժողով, որի աշխատանքներին որպես խորհրդական ակտիվ մասնակցում էր նաև Ա. Դարբինյանը: Իսկ 1915 թ. նա ստանձնեց Թիֆլիսում վերահրատարակվող «Վան-Տոսպի» խմբագրի պարտականությունները՝ թերթի տպաքանակը նախնական 500-ից հասցնելով 1800-ի: 1917 թ. մայիսին Երևանում գումարված Արևմտահայերի 1-ին համագումարն ստեղծեց Գործադիր Մարմին, որի անդամներից մեկը Ա. Դարբինյանն էր, ինչը խոսում էր արևմտահայ բոլոր քաղաքական ուժերի շրջանում նրա հեղինակության մասին: 1918 թ. Արևմտահայ խորհրդի որոշումով Ա. Դարբինյանն անցավ Հյուսիսային Կովկաս, եղավ Արմավիր, Դոնի Ռոստով և Վլադիկավկազ հայաշատ քաղաքներում՝ փորձելով գումարներ հանգանակել հօգուտ գաղթականության: 1919-ին վերադարձավ Երևան և մեծ ավանդ ներդրեց մարտի 24-ից այստեղ հրատարակությունը վերսկսած «Վան-Տոսպ», իսկ նույն թվականի սեպտեմբերի 27-ից ՀՌԿ Հայաստանի կենտրոնական խորհրդի պաշտոնաթերթ դարձած «Հայաստանի Չայն» օրաթերթի խմբագրման և հրատարա-

կության գործում: 1919 թ. դեկտեմբերի 21–27-ին Երևանում տեղի ունեցավ ՀՌԿ Հայաստանի Շրջանային 2-րդ համագումարը, որը բացեց և հաշվետու զեկուցումով հանդես եկավ Ա. Դարբինյանը: Կենտրոնական խորհրդի և Դիվանի անդամ ընտրված Ա. Դարբինյանն ըստ էության դարձավ ՀՌԿ Հայաստանի Շրջանի ղեկավարը՝ մինչև նույն ժամանակ ընտրվելով ՀՌԿ 3-րդ Համագումարի պատգամավոր: 1920 թ. վերջերին տեղի ունեցած այդ ժողովում Ա. Դարբինյանը հանդես եկավ զեկուցումով Վանի ինքնապաշտպանության, գաղթի ու գաղթականության վիճակի, անկախ հանրապետության, գրահրատարակչական և կուսկազմակերպչական գործունեության վերաբերյալ: Ա. Դարբինյանի վաստակի արժանվույն գնահատումը եղավ այն, որ նոյեմբերի 28-ի նիստում քվեների բացարձակ մեծամասնությամբ նա ընտրվեց Հայաստանի ռամկավար կուսակցության կենտրոնական վարչության անդամ:

1922 թ. հունվարին ռամկավարները որոշեցին Հայաստան ուղարկել կուսակցության Կենտրոնի անդամներից մեկին՝ բանակցելու «ինարավորութիւն ապահովելու անապաստան թուրքահայ գաղթականներուն և. Հայաստանի մեջ տեղավորելու<sup>1</sup>» հարցով և կրկին այդ կարևոր ու պատասխանատու առաքելությունը վստահվեց Դարբինյանին: 1922 թ. հունիսի 2–23-ին տեղի ունեցած ՌԱԿ Ա. Ընդհանուր պատգամավորական ժողովին, որպես Ամերիկայի Շրջանակի պատգամավոր, մասնակցեց նաև Ա. Դարբինյանը, որից հետո մեկ տարի գործեց Բուլղարիայում, ապա անցավ Փարիզ: Այստեղ նա մասնակցեց ՌԱԿ Բ. Ընդհանուր պատգամավորական ժողովին: Ի դեպ, հետագայում էլ Դարբինյանը գործուն և ղեկավար մասնակցություն ունեցավ ՌԱԿ Գ՝ 1926 թ., Դ՝ 1929 թ., Ե՝ 1931 թ., Զ՝ 1934 թ. և է՝ 1937 թ., ԸՊ ժողովներին:

<sup>1</sup> Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 316:

Ծերուկ, Արշեն, Վահրամ և Հրահատ ծածկանուններով Դարբինյանը թղթակցել է «Արծազանք», «Մշակ», «Մուրճ», «Երկրի Չայն», «Վան-Տոսպ», «Հայաստանի Չայն», «Ազգ», «Ժողովրդի Չայն», «Պայքար», «Նոր Ալիք» և այլ թերթերի: Դարբինյան հրապարակախոս-խմբագրի գրիչը հատկապես բեղուն ծառայեց ազգապահպանման ծանր ու դժվար առաքելությանը, երբ 1927–34 թթ. նա ստանձնեց ռամկավարական «Ապագայ» թերթի խմբագրի պաշտոնը: Ա. Դարբինյանի թողած ստեղծագործական ժառանգության մեջ իր նշանակությամբ առանձնանում է հատկապես «Հայ ազատագրական շարժման օրերէն» հուշագրությունը:

Արտակ Դարբինյանի հուշերն ու պատմագիտական վերլուծությունները վերաբերում են բավական երկար մի ժամանակահատվածի՝ 1890–1940 թվականներին, բայց մենք կանդրադառնանք մեզ հետաքրքրող պատմական ժամանակահատվածին՝ 1890–1908 թթ. հայ ազատագրական պայքարի ընթացքին:

Ա. Դարբինյանի «Հայ ազատագրական շարժման օրերէն» աշխատությունն ունի բավական հետաքրքիր կառուցվածք: Նրանում հեղինակը նախ առանձին փոքրիկ գլխով ներկայացնում է իր գրքի բովանդակությունը («Յուշեր»ուս բովանդակութեան շուրջ»): Դա հետաքրքիր է նրանով, որ այնտեղ հեղինակը խոսում է այն բոլոր խնդիրների մասին, որոնց անդրադարձել է իր աշխատության մեջ: Այդ հետաքրքրությունն ավելի շատ դրսևորվում է նրանում, որ հենց այդ գլխում հեղինակն արդեն հայեցակարգային մոտեցումներ է մշակում Արմենական, Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունների կազմակերպած ազատագրական պայքարի այս կամ այն դրվագների նկատմամբ, որոնք ավելի է խորացնում և հիմնավորում գրքի հետագա էջերում: Վստահորեն կարելի է պնդել, որ հենց այս գլխում նա միանգամայն իրատեսորեն է մոտենում արևմտահայերի ազատագրական խնդրի շուրջ հանդես

ելած հայկական երեք ավանդական կուսակցությունների գործունեությանը՝ փորձելով այն գնահատել միայն արդյունավետության տեսանկյունից: Այսպես, միանգամայն ճիշտ է Արմենական կուսակցության մասին նրա հայտնած հետևյալ տեսակետը. «Երկրածին այս կազմակերպությունը իր գործունեութեան ուղին գծելու ատեն աչքի առջև ունեցավ պալքանեան ժողովուրդներուն ազատագրութեան նպաստող ազդակները և իրատեսութեամբ առաջնորդուելով իր ուշը կեդրոնացուց արտակարգորէն դժնդակ պայմաններով շրջապատուած հայ ժողովուրդին ազատագրութեան համար կատարուելիք աշխատանքին և գործելակերպին վրա»: <sup>1</sup> Իսկ արմենականների իրատեսությունը, ըստ հեղինակի, արտահայտվում էր նրանում, «որ որդեգրած գործելակերպով առաջնորդուելով ընդդիմացավ անպատասխանատու ամբոխավարութեան սիրահարներուն, ճիշտ է թէ իր դէմ ցցուած հակաարմենական ճակատին վրա մղուած պայքարին, ինչպես նաեւ անսահմանօրեն ծանր, արտաքին դժուարութիւններուն հանդէպ՝ հարկադրուեցաւ կենդրոնացած պահել իր ուժերը միայն հայակեդրոն Վասպուրականի մեջ, սակայն լուրջ աշխատանք կատարեց, որուն արդիւնքը մենք տեսանք 1896 եւ 1915-ի պատմական թուականներուն»: <sup>2</sup>

Լինելով միակ ազգային քաղաքական կազմակերպությունը, որը ձևավորվել էր բուն Արևմտյան Հայաստանում՝ Արմենական կուսակցությունը, բնականաբար, շատ ավելի խոր պատկերացում ուներ տեղական պայմանների վերաբերյալ, որոնք հաշվի առնելով միայն՝ պետք է ընթացք ստանար արևմտահայ ազատագրական պայքարը: Հաշվի առել էին արդյո՞ք այդ պայմանները մյուս երկու՝ Ս.Դ. Հնչակյան և Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունները: Դեռևս իր աշխատության ներածական այս գլխում

<sup>1</sup> Ա. Դարբինյան, նշվ. աշխ., Բ տպագրութիւն, էջ 19:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 20:

Ա. Ղարբինյանը փորձում է համոզել, որ ոչ՝ այդ համոզմունքները հետագայում ավելի հիմնավոր դարձնելով՝ «Այս երկու կազմակերպությունները միեւնույն ժամանակ, միեւնույն ձգտումով և իտեալով հրապարակ կիջնեյին, բայց իրենց անուններով և «աշխարհահայեացքներու նիւանս»ներով իրարմէ կը բաժնուէին եւ տարբեր գետիններու վրայ կը կանգնէին, երկուքն ալ իրենց «սեփական տեսաբանութիւններով» զինուած կու գային ոչ թէ օգնելու թրքահայ ժողովուրդին իր ինքնագործունեութեան ճամբուն վրա, այլ այդ շարժումին դէկը իրենց ձեռքը առնելու: Երկրին ժողովուրդը իրենց «հեռաւոր սուրբի»ի խորհրդաւոր պատգամներով դէպի իր ազատութիւնը առաջնորդելու եւ իրենց վառ երեսակայութեան մեջ «հերոսական պոռթկումով», մը շահուող յաղթանակին դափնիները իրարու ձեռքին խլելու»:<sup>1</sup>

Այստեղ միգուցէ շատ խիստ է հնչում այն ձևակերպումը<sup>2</sup>, թէ այս կուսակցությունները «կու գային ոչ թէ օգնելու թրքահայ ժողովուրդին», այլ՝ շարժումն «իրենց ձեռքը առնելու», քանզի այդ կուսակցությունները ևս և մասնավորապէս Դաշակցությունը, բավական խոշոր ավանդ ունեն հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան կազմակերպման գործում, բայց, մի բան կասկածից գերծ է, որ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 19:

<sup>2</sup> Ա. Ղարբինյանի «Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուլէր 1890-էն 1940» աշխատությունը լույս է տեսել 1947 թ., երբ Երկրորդ աշխարհամարտը չավարտված՝ աշխարհը սուզվեց սառը պատերազմի մշուշում: Երկրագնդով մեկ սփռված հայությունը շփոթված էր. մի կողմից հաղթանակած ԽՍՀՄ-ի անախադեպ հեղինակությունն էր, մյուս կողմից՝ ազատ ու ժողովրդավար համակարգի ջատագով և աշխարհը կրմունիստական վտանգից գերծ պահելու ԱՄՆ-ի ներդրած ջանքերը: Այս պայմաններում գրվում էին գրքեր (նաև պատվերով), որոնք արտահայտում էին մեկ այս, մեկ մյուս խմբավորման շահերը: Իսկ այդ դեպքում հեղինակները, ջանալով ցույց տալ իրենց համակրանքը որևէ ճամբարի նկատմամբ, երբեմն ընկնում էին ծայրահեղությունների մեջ, կորցնում անաչառությունը և սուբյեկտիվ, կողմնակալ տեսակետներ արտահայտում: Ա. Ղարբինյանի սույն աշխատությունը և նրա պատմագիտական հայացքները քննելիս մենք նկատի ենք առել նաև այս հանգամանքը:

19-րդ դարի 90-ական թթ.-ից՝ ներառյալ 1904 թ., այս կուսակցությունների գործունեության մեջ մեծ տեղ էր գրավում քաղաքական ռոմանտիզմը. «Միակ հաւանական բացատրութիւնը՝ այդ անփութութեան գտնում եմ ժամանակի մեր հանրային կեանքի մէջ իշխող երազկոտ, չկշռադատուած, անկեղծ ու խորը, բայց անփորձ ու անիրատես հայրենասիրութեան մեջ»<sup>1</sup>: Իրականում հայ ազգային-ազատագրական պայքարն սկզբնավորվում և ընթանում էր նրանում առկա տարբեր ուղղությունների բախումներով: Արևմտահայ հատվածը գործում էր գլխավորապէս ապավինելով սեփական ուժերին, հույսը դնելով ժողովրդի մարտական կորովի վրա, նրան նախապատրաստելով գաղտնի կերպով՝ խուսափելով ամեն մի ժամանակավրեպ ձեռնարկից: Հայ ազատագրական պայքարի արևելահայ պատկերացումները շատ ավելի հախուռն էին, փութկոտ ու ռոմանտիկ երանգներ էին կրում, այսինքն՝ նրանում ավելի գերակշռող էր գուտ զգացմունքայնությունը, ինչը չէր կարող ընդունելի լինել արևմտահայ իրապաշտ գործիչների կողմից:

Այդ ռոմանտիզմը դրսևորվում էր երկու ձևով.

ա) հայդուկային կռիվներով կամ տարանջատ ապստամբական ձեռնարկներով և ահաբեկչական ակտերով փորձում էր մեծ տերությունների ուշադրությունը սևեռել Հայկական հարցի վրա,

բ) հույս ուներ, թէ հայդուկային կռիվներով (մասնավորապէս Դաշակցությունը) կարող է ոգևորել հայ ժողովրդին, համախմբել նրան ազատագրական պայքարի շուրջը:

Այնպէս որ այստեղ խնդիրը վերաբերվում էր ոչ այնքան պայքարն իրենց ձեռքն առնելու ձգտմանը (որը չի կարելի պնդել, թէ առհասարակ չկար), այլ՝ այդ պայքարի մարտավարությանը:

<sup>1</sup> Արամայիս Ազնաուրեանի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, 1937, թիվ 4, էջ 148:

Ահա այդ մարտավարության ոչ արդյունավետ լինելու համոզմունքն ունի Ա. Դարբինյանը, որը գնահատելի է<sup>1</sup>:

Գրքի առաջին մասում Ա. Դարբինյանը վերլուծում է ՀՅԴ ընդհանուր գործունեությունը մինչև 1918 թվականը: Այստեղից արդեն ենթադրելի է դառնում այդ գործունեության գնահատման ելակետը աշխատության հետագա էջերում: Նա դարձյալ Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակին անձանոթությամբ է պատճառաբանում այն, որ ՀՅԴ կուսակցությունը, գնալով Բանկ-Օտոմանի ձեռնարկին (1896 թ.), Խանասորի արշավանքին (1897 թ.) կամ Սասունի կռիվներին (1904 թ.), հույս ուներ դրանցով հասնել ազատագրության (այստեղ պետք չէ հասկանալ անկախություն, որովհետև հայ ազգային կուսակցությունների մարտավարության մեջ մինչև 1918 թ. այդ խնդիրը չի դրվել): Այդ մասին նա հետևյալն է գրում. «Այդքան խոր անձանոթություն էր, որ թոյլ կու տար սահմանին այն կողմը՝ Թիֆլիսի կամ ժընեւի մեջ նստած դաշնակցական ղեկավար դեմքերուն «պատմական գործեր կատարելու» յաւանականութեամբ Պանք Օթոմանեան կամ Սասունական ցույցերով եւ «Խանասորեան արշավանք»ներով պարբերաբար ջարդել տալ ժողովուրդը, ժընեւեն կամ Փարիզէ, Լոնտոնէն կամ Պոսթընէն սպառնալիքներու եւ հայիոյանքներու տարափը տեղացնել «Երլտըզի բորենի»-ին եւ Պերլինի 61-րդ յօդվուածը ստորագրող պետություններուն հասցեին, իսկ ջարդուող հայ ժողովուրդին քով ինքզինքին պաշտպանել «ազատութիւնը զոհեր կը պահանջէ» միամիտ ֆօրմիլով»:<sup>2</sup>

Այստեղ այն տպավորությունն է ստեղծվում, որ Դաշնակցությունը միտումնավոր է ջարդել տալիս ժողովրդին՝ հույս ունենալով դրանով հասնել մեծ տերությունների՝ հօգուտ հայերի մի-

<sup>1</sup> Այս և հետագա բոլոր ընդգծումները կատարված են մեր կողմից:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 21:

ջամտության: Իհարկե, այդ ձեռնարկները կազմակերպելիս միշտ էլ առկա է եղել մեծ տերությունների միջամտության հույսը, բայց, որ հետամտելով դրան՝ նախատեսել են նաև ջարդեր, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը:

Ա. Դարբինյանը միանգամայն ճիշտ է, երբ եզրակացնում է, որ նման ձեռնարկներն արդյունավետ չեն և ոչնչի չեն հանգեցնում միջամտությունների տեսանկյունից, բայց ծայրահեղ է նրա այն տեսակետը, որ դրանց դիմելիս նախատեսվել են ջարդերը: Խնդիրն այն է, որ հայոց ջարդերը պայմանավորված չէին հայ հեղափոխությամբ<sup>1</sup>, պարզապես հայ ազատագրական պայքարն այնպիսի ուղիով պետք է ընթանար, որ ավելորդ առիթ չդառնար նոր ջարդերի համար: Այս համոզումն ունեին թե Արմենական կուսակցությունը և թե ՀՅԴ որոշ գործիչներ (Հրայր Դժոխք, Գուրգեն, Վազգեն և ուրիշներ), որոնք դեռևս 1890-ական թթ. կեսերից ծագում էին ընդհանուր ապստամբության կազմակերպման ուղղությամբ կենտրոնացնել ՀՅԴ ողջ գործունեությունը:<sup>2</sup> Այս համոզումն ուներ նաև Ա. Դարբինյանը: Թերևս այդ ըմբռնման պակասն էր, որ մղում էր Հնչակյան կուսակցությանը ցույցեր կազմակերպել Կ. Պոլսում (Գում-Գափու՝ 1890 թ. և Բաբը Ալիի՝ 1895 թ.), որոնք ջարդերի ավելորդ առիթներ տվեցին թուրքական կառավարությանը և ոչ ավելին: Այսուհանդերձ, անհնար է համաձայնվել Ա. Դար-

<sup>1</sup> Այստեղ «հեղափոխություն» հասկացությանը պետք է վերաբերվել խիստ վերապահումով և չհասկանալ այն իր դասական իմաստով: Պարզապես մեր ժողովրդի ազատագրական պայքարի մվիրյալներն ու հուշագիրները հեղափոխություն ասելով պատկերացնում էին զուտ ազգային-ազատագրական պայքարը և ոչ թե դասակարգային կամ քաղաքական այլ բնույթի հեղափոխությունները, որոնք ավելի շուտ կատարվում էին սոցիալ-քաղաքական խնդիրներին լուծում տալու համար:

<sup>2</sup> Այդ մասին տե՛ս Ներսիսյան Ա. Ա., Ընդհանուր ապստամբության կազմակերպման հարցը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի արևմտահայ ազգային-ազատագրական պայքարում, «Բանբեր Երևանի Համալսարանի», թիվ 2, 1989, էջ 109-119:

բինյանի այն կարծիքին, որ 300.000 հայերի կոտորածը հնչակյանների ապստամբական գործունեության հետևանք էր, որովհետև այդ տեսակետը ոչ միայն սխալ է, այլև չի համապատասխանում իրականությանը<sup>1</sup>:

Բավական արժեքավոր են և հետաքրքիր Ա. Ղարբինյանի՝ ազատագրական պայքարի զարթոնքի հետ կապված տեղեկությունները կոնկրետ Վանում և Վասպուրականի շրջաններում: Դրանք նրա գործը գնահատելի են դարձնում՝ որպես հուշագրական բնույթի սկզբնաղբյուրի: Նրա հուշերը սկսվում են 1890–93 թթ. Վանում տիրող իրավիճակը ներկայացնելով: Սակայն հիշյալ շրջանի դեպքերին նա անդրադառնում է որպես Վանի նախորդ իրադարձությունների տրամաբանական շարունակություն: Իսկ այդ իրադարձությունները վերաբերում են Վանում և առհասարակ Վասպուրական աշխարհում ազատագրական պայքարի զարթոնքին: Անժխտելի է, որ ցանկացած ազգային ազատագրական կամ հեղափոխական պայքարի նախորդում է դրա գաղափարախոսությունը: Վանում այդ գաղափարախոսության ռահվիրաններն էին Մ. Փորթուզալյանը և Մ. Խրիմյանը, որոնց աշակերտներն էին, ըստ Ա. Ղարբինյանի, արմենականները, «որոնք մեծ ժողովրդականություն կը վայելէին»:<sup>2</sup>

Փաստորեն, ազատաշունչ գաղափարախոսությունը տվել էր իր արդյունքները, և արդեն 1890-ական թթ. սկզբից հայ ազատագրական պայքարն ընթացքի մեջ էր: Վանում դրա առաջամարտիկներն արմենականներն էին. «Քաղաքական բանտը լեցուած

<sup>1</sup> Ա. Ղարբինյան, նշվ. ախ., էջ 23:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 25: Վանում արմենականների գործունեության սկզբնական շրջանի, այդ կուսակցության ձևավորման ընթացքի ու ծրագրի մասին ավելի մանրամասն տես Է. Ա. Կոստանդյան, Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005:

էր արմենականներով, մեծ թիւ կը կազմէին նաև «Ֆիրար»ները՝ փախստականները, որոնք ձերբակալութենէ խուսափելով՝ կապրէին թաքստոցներու մեջ, քարոզչական, կազմակերպչական աշխատանքներ կը կատարէին, գավառները կերթային նույն նպատակով»:<sup>1</sup>

Վերոնշյալից եզրակացնում ենք, թե որքան բարդ և ծանր էր ազատագրական պայքարի կազմակերպումը Օսմանյան կայսրությունում: Դրա վկայությունն է այն, որ արմենականներն էլ թեպետ զգույշ և իրատես գործելակերպ էին որդեգրել, այնուամենայնիվ, չէին կարողանում խուսափել հետապնդումներից և ձերբակալություններից: Այստեղից էլ հստակ է դառնում մեկ բան, որ հայկական ջարդերն ամենևին էլ պայմանավորված չէին հայ ազատագրական շարժումներով: Պարզապես ընդհանրացնող եզրահանգում, ինչին ստիպում է հանգել Ա. Ղարբինյանը, հետևյալն էր. չափազանց զգուշության պայմաններում անգամ անհնար էր խուսափել ընդհարումներից, քանզի հայ ազատամարտը ձևավորվում և զարգանում էր թուրքական կառավարության խստագույն հսկողության պայմաններում: Այստեղ կարևորվում է, թե հայ ազգային կուսակցությունների գործունեության մեջ որքանով էր գերիշխում աղմկահարույց ձեռնարկների դիմելու ցանկությունը: Արմենական կուսակցության համար այդ ցանկությունը մղված էր երկրորդական պլան: Չպետք է նաև անտեսել մի հանգամանք. հնարավոր չէր գործել համաժողովրդական զինման (թեկուզ և հանուն ինքնապաշտպանության) և հայդուկային մասնակի կռիվների զուգորդությամբ: Դրանք անհամատեղելի էին, հայդուկային կռիվներն ու տարանջատ ձեռնարկները խոչընդոտում էին ընդհանուր զին-

<sup>1</sup> Նույն տեղում:

ման աշխատանքներին՝ առավել խստացնելով թուրքական հսկողությունը և ջարդերի հավելյալ առիթներ ստեղծելով:

Ահա այսպիսի ընդհանրացումների են մղում Ա. Դարբինյանի հուշերը, որոնք աշխատության հետագա էջերում ավելի են հիմնավորվում:

Ոչ պակաս հիմնավոր են Ա. Դարբինյանի պատմաքննական մոտեցումները 1896 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագրի վերաբերյալ: Այդ մոտեցումներում դարձյալ մեծ տերությունների միջամտության հույսով հայ ազգային մյուս երկու կուսակցությունների նկատմամբ նրա դատապարտիչ վերաբերմունքն է և միաժամանակ մեկ այլ կարևոր համոզմունքը՝ այդ տերությունների միջև առկա հակասությունները արգելք էին ծառայում Թուրքիայի վրա համատեղ ճնշմանը, որը ազատություն էր տալիս Համիդ Բ-ի ձեռքերին՝ հայկական ջարդերի առումով: Ահա այդ մասին մի ավելորդ անգամ վկայող նրա տողերը. «...«հայասեր» Անգլիացիները կ'ուզեն Թուրքիո մէջ ինքնավար Հայաստան ստեղծել, բայց Ռուսիան արգելք կ'ըլլա»:<sup>1</sup>

Ա. Դարբինյանը չի սխալվում նաև, երբ գրում է. «...զաւեշտա-ողբերգական բնույթ ստացած էր եվրոպական երեք մեծ պետութիւններուն միջամտութիւնը»:<sup>2</sup> Իսկապես «զավեշտա-ողբերգական»: Չավեշտն այն էր, որ այդ տերությունները, հետամուտ իրենց քաղաքական շահերին, շարունակ խաբում էին հայությանը, իսկ հայ ազգային կուսակցությունները, բավական երկար ժամանակ այլ ելք չտեսնելով, փայփայում էին այն դալուկ հույսը, որ ցույցերով կամ մասնակի ապստամբություններով կարող են հասնել մեծ տերությունների կողմից Թուրքիայի վրա իրական և խիստ

ճնշման՝ հոգուտ հայկական հարցի լուծման: Այս ըմբռնումն ունի արդիական հնչեղություն:

Մյուս կարևոր՝ դարձյալ արդիական հնչեղություն ունեցող եզրակացությունն այն է, որ հայ ազգային-ազատագրական պայքարը միասնական բնույթ կրելու դեպքում ավելի արդյունավետ կարող էին լինել դրա ընթացքը և արդյունքները:

Վանի ինքնապաշտպանական կռիվների (պատմության մեջ հայտնի են Վանի «Մեծ դեպք» անունով և տևել են 1896 հունիսի 4-ից 9-ը) նրա նկարագրությունից, որ ունի կարևոր սկզբնաղբյուրային նշանակություն, հետևյալ հետևությանն են հանգում. արմենականները՝ Մ. Ավետիսյանի, հնչակյանները՝ Մարտիկի (Մարտիրոս Սարուխանյան՝ 1873–1896 թթ.) և դաշնակցականները՝ Պետոյի (Ալեքսանդր Պետրոսյան՝ ծննդյան թիվը հայտնի չէ - 1896 թ.) գլխավորությամբ միավորվելով՝ ձախողում են Սահաղեղդին փաշայի ջարդարարական պլանները, որոնք, անշուշտ կիրականանային, եթե այդ կուսակցությունները չմիավորվեին<sup>1</sup>: Միանգամայն ճիշտ է Ա. Դարբինյանը, երբ գրում է. «Մեր 30-ամեա ազգային-ազատագրական շարժման ընթացքին (1890–1920) թուրք կառավարութեան կազմակերպած «կոտորածներու», «ջարդերու», «տարագրումի եւ բնաջնջման» և ասոնց ի պատասխան՝ հայ յեղափոխական կազմակերպութիւններուն կողմէ ցուցադրուած «ապստամբութիւն-ներու», «խաղաղ» կամ «զինուած ցույցերու», «արշաւանքներու» տարեգրութեան մեջ Վանի այս ինքնապաշտպանողական դիմադրութիւնը ինքնայատուկ, նշանակալից եւ պատուաբեր էջ մը կը գրաւէ»:<sup>2</sup>

<sup>1</sup> Ավելի մանրամասն տես Ա. Կարապետյան, Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ /1885-1914 թթ./, Ե., 2003 թ.:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 48:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 46:

<sup>2</sup> Նույն տեղում:

Առանց այս «96-ի մեծ Ղեպք»ին՝ համաշխարհային առաջին պատերազմին ընթացքին, երբ Թուրքիոյ Հայութիւնը բնաջնջման ենթարկուեցավ. Վան պիտի չունենար իր 1915-ի «Ապրիլեան հերոսամարտը», որով փրկուեցավ Վասպուրականի 100 000 հայութիւնը»<sup>1</sup>

Հիրավի, Վանի 1896 թ. ինքնապաշտպանությունը մեր պատմության կարևոր դրվագներից էր, թերևս հազվագյուտ իրադարձություններից մեկը, որը հաջող էլք ունեցավ (համենայն դեպս, վանեցիների ինքնապաշտպանության կազմակերպման առումով) և դրանում իր դերն ունեցավ երեք կուսակցությունների համագործակցությունը: Թերևս կարող է փոքր-ինչ տարօրինակ հնչել Ղարբինյանի այն տեսակետը, որ առանց սրա՝ Վանը չպետք է ունենար 1915 թ. ապրիլյան հերոսամարտը: Բայց դա արտաքուստ: Իրականում, 1896 թ. ինքնապաշտպանության փորձն էր, որը կիրառվեց 1915 թվականին և դարձյալ հաղթական ավարտ ունեցավ: Մյուս կարևոր համոզումը, որը ներշնչում է Ա. Ղարբինյանը, հետևյալն է՝ հայ ժողովուրդն ինչքան գործել է առանց մեծ տերությունների միջամտության հույսի և ապավինելով սեփական ուժերին՝ հաղթանակներ է տարել: Իսկ մեծ տերությունների հույսով կազմակերպված ցույցերը կամ ազատագրական պայքարի դրվագները միշտ էլ ավարտվել են կոտորածներով և պարտությամբ: Այսպիսին է Ա. Ղարբինյանի համոզումները: Նման գործողությունների նրա գնահատականները հիմք են տալիս Ա. Ղարբինյանին որակել որպես ազգային պահպանողական գործչի, որովհետև նա կողմնակից էր հայ ազատագրական պայքարի այնպիսի ընթացքին, որի դեպքում չէր ջլատվի և քայքայվի հայ տարրը: Այսպիսի եզրակացության հանգելու համար

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 52:

հիմք է դառնում նաև Մաղաքիա Օրմանյանի նկատմամբ նրա դրսևորած վերաբերմունքը: Վերջինիս՝ Իզմիրլյանին փոխարինելու կապակցությամբ նա հետևյալն է գրում. «Կ. Պոլսո պատրիարքական գահին վրայ կը հրաւիրուէր Մ. Արքեպիսկ. Օրմանեան, որ իր նախորդէն՝ Իզմիրլեանէ տարբեր ուղղութեան պիտի հետեւէր եւ պիտի փորձեր իր քաղաքագիտական եւ դիւանագիտական ձեռնութեամբ մէկ կողմէ թուրք կառավարութեան կիրքը մեղմացնել. միւս կողմէ ժընեւ նստած հայ յեղափոխականներու երեւակայութիւնը եւ պատգամները չափաւորել: Բայց ի զուր»<sup>1</sup>

Իսկապես որ իզուր, քանզի, ինչպես նշեցինք, մինչև 1904 թվականը ներառյալ, շարունակվում էր ազատագրական պայքարի տարանջատ ընթացքը՝ հիմնականում մեծ տերությունների միջամտության հույսով:

Ա. Ղարբինյանի քննական-վերլուծական կարողությունները առավել լիարժեքորեն են դրսևորվում ՀՅԴ-ի կողմից կազմակերպած՝ Խանասորի արշավանքին վերաբերող նրա անդրադարձներում: Ճշմարիտ է, դրանցում նա փոքր-ինչ ընկնում է ծայրահեղությունների գիրկը՝ առհասարակ ժխտելով այդ արշավանքի դրական հետևանքները, բայց այնուամենայնիվ, նա միանգամայն ճիշտ է, երբ գտնում է, որ այն դրական ոչնչի չի հանգեցնում համայն հայության շահերի տեսանկյունից: Հայտնի է, որ Խանասորի արշավանքը, որը հայ ազատամարտի մեծագույն դեմքերից Նիկոլ Դումանի (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) մտահղացումն էր, հետապնդել է երկու նպատակ՝ ա) վրեժխնդիր լինել Վանի 1896 թ. «Մեծ դեպքից» հետո գոհված բազում երիտասարդների համար, որում իր դերն ունեցավ քրդական «Մազրիկ» ցեղը, և բ)

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 58-59:

Հայկական հարցի վրա սևեռել Եվրոպական դիվանագիտության ուշադրությունը<sup>1</sup>:

Արշավանքի հետևանքով Մազրիկ ցեղը մեծ կորուստներ է կրում, բայց նրա երկրորդ նպատակը, բնականաբար, չի իրականանում: Նմանատիպ արշավանքներով չէ, որ հնարավոր էր հասնել միջամտության, այլ՝ համաժողովրդական, թեկուզ արևմտահայ մի քանի շրջաններ ընդգրկող ապստամբությամբ (այդպիսի ծրագիր կար, որին կանդրադառնանք): Ուրեմն, վրեժխնդրական առումով այս ձեռնարկը հաջողված էր, ինչի ժխտման հարցում չի կարելի համաձայնվել Ա. Դարբինյանի հետ: Միևնույն ժամանակ, հեղինակն իրավացի է, որ նման արշավանքները չէին նպաստում արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպմանը, որովհետև այն հնարավոր էր միայն լուռ ու գաղտնորեն ժողովրդին զինելով: Այդ օրերին Գևորգյան ճեմարանի սան Ա. Դարբինյանը կիսում է Վանի արմենականների հետևյալ տեսակետը. «Քիւրտերը վրէժի տակ չեն մնար, մշտնջենապես վրեժ լուծելու կը դիմեն: Այդ պարագային պէտք պիտի ըլլա պահել մշտական ռազմական կայան մը և ռազմիկներու զունդ մը՝ Քիւրտերով զբաղելու համար: Մենք ի վիճակի չենք ո՛չ մնայուն ռազմակայան եւ ո՛չ ալ ռազմիկներու մնայուն զունդ մը կազմելու: Արմենականները այդպիսի վտանգավոր ձեռնարկի մը փոխարէն կառաջարկեն Սալմաստ գէնքները Երկիր փոխադրել, ինքնապաշտպանութեան համար զինել ժողովուրդը»:<sup>2</sup>

Սխալվում էին արդյո՞ք արմենականները և Ա. Դարբինյանը այսպես մտածելով: Անշուշտ, ոչ: Դրանում համոզվելու համար բավական է նշել, որ Խանասորի արշավանքի վերաբերյալ Սալմաստում գտնվող դաշնակցականների միջև էլ կային տարակար-

ծություններ: Վազգենը (Տիգրան Տերոյան) և Գուրգենը (Բաղդասար Մալյան), դեմ լինելով այդ արշավանքին, արմենականների նման գտնում էին, որ պետք է գաղտնորեն զենքեր և մարտիկներ առաքել երկիր և ժողովրդին նախապատրաստել ինքնապաշտպանության:<sup>1</sup> Ուստի և, նրանք 40-հոգանոց խմբով, Խանասորի արշավանքից առաջ շարժվում են Վան:<sup>2</sup>

Նրանք, այնուհետև համագործակցում են Տարոնի և Սասունի հայտնի գործիչ Հրայրի հետ՝ փորձելով լուռ և գաղտնորեն նախապատրաստել ընդհանուր ապստամբություն:

Այնպես որ Ա. Դարբինյանի այդ տեսակետը, ըստ որի՝ նման արշավանքները չէին կարող դրական հետևանքներ ունենալ<sup>3</sup> արևմտահայության ազատագրության համար, միանգամայն ընդունելի է:

Ա. Դարբինյանը, քննադատելով Հ.Յ. Դաշնակցություն և Ս.Դ. Հնչակյան կուսակցություններին նմանօրինակ ձեռնարկների համար, ամենևին չի հետապնդում իր կուսակցության վարկն արհեստականորեն բարձրացնելու նպատակ: Այդ քննադատությունը ստիպում է գնահատել նրա իրատեսությունը և այդ կուսակցություններից այնպիսի գործունեություն ակնկալել, որի շնորհիվ առավել նվազ զոհողություններ կունենար հայությունը:

Ա. Դարբինյանը միաժամանակ դրվատանքով է խոսում առավել իրատես դաշնակցական գործիչների մասին: Այսպես, նա իրեն ոչ հաճախ հատուկ շնայությամբ է արտահայտվում հայտնի դաշնակցական գործիչ Վարդգեսի (Հովհաննես Սերենկյուլյան,

<sup>1</sup> Տե՛ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Բ(2), Lou Անճէլըս, 1952, էջ 309-310:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 408, ց. 2, գ. 8:

<sup>3</sup> Իհարկե, այդպիսի գործողությունների քարոզչական ու դաստիարակչական նշանակությունն անուրանալի է, սակայն այդպիսի զոհողությունների գնով, հաստատ՝ ոչ միշտ արդարացված:

<sup>1</sup> Տե՛ս «Դրօշակ», թիւ 1558, 27 յուլիս-10 օգոստոս, 1999:

<sup>2</sup> Դարբինեան Ա., նշվ. աշխ., էջ 63:

Զարմայր, Գիսակ)՝ Վանում ծավալած գործունեության մասին: Վերջինս 1901 թ. մուտք էր գործել Վան և Հրայր Դժոխքի ու Վահանի հետ ձեռնամուխ էր եղել Վասպուրականի, Բիթլիսի, Տարոնի, Սասունի և Էրզրումի ընդհանուր ապստամբության կազմակերպման աշխատանքներին:<sup>1</sup>

Համաձայն Ա. Դարբինյանի տեղեկությունների՝ Վարդգեսն անմիջապես տեսակցում է Վանի արմենականների հետ և հայտարարում, «թե ինք հակառակ է ցույցերու և իր աշխատութիւնն առայժմ պիտի կեդրոնանա քարոզչական աշխատանքներու մէջ՝ ժողովրդին մէջ ինքնագիտակցութիւն ամրացնելու նպատակով: Վարդգէսի համոզումով ժողովուրդը մեկ երկու տարուան մեջ չէր կրնար պատրաստուիլ ազատագրական շարժման մը համար, դպրոցական գործին պէտք էր մղում տալ, պէտք էր օգտուիլ վերջին տասնամեակին ընթացքին գործուած սխալներուն տուած դասերէն. պէտք էր զինել ժողովուրդը, բայց շատ զգուշութեամբ: Այս մարզին մէջ գլխաւոր արգելքը կու գար քիւրտերեն, որոնց հետ բարեկամանալու միջոցներ պէտք էր փնտռել»:

Շարունակելով զարգացնել այդ գաղափարը՝ այնուհետև Ա. Դարբինյանը գրում է. «Եղաւ պահ մը, որ արմենականներուն մասնաժողովը եկաւ այն եզրակացութեան, թէ կարելի է դաշնակցականներուն հետ համագործակցութիւն ստեղծել, որուն պիտի յաջորդէր երկու կազմակերպութիւններուն միաձուլումը: Վարդգէսին Վան գտնուած ժամանակ տեղի չունեցան բնաւ անհամաձայնութիւններ կամ պայքարներ, որոնք յաջորդ տարիներուն մինչև արիւնայեղութեան պիտի հասնէին»:<sup>2</sup>

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Աշոտ Ներսիսյան, Ազգային ազատագրական պայքարը Տարոնում 1894–1908 թթ., Ե., 1999, էջ 64–73:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 89–90:

Մեր ընդգծած նախադասութիւնները վկայում են երկու կարևոր իրողություն.

ա) Ա. Դարբինյանը չի առաջնորդվում կուսակցական նեղ շահերով և դրանցով չի պայմանավորված նրա քննադատական վերաբերմունքը մյուս կուսակցությունների ցուցադրական գործողությունների հանդեպ.

բ) Ղաշնակցության մեջ կային խոհեմ գործիչներ, որոնք գործում էին տեղական պայմանների ճիշտ ըմբռնումով և հանուն համաժողովրդական շահերի, ինչը նրանց մղում էր արմենականների հետ համագործակցության:

Սակայն, դժբախտաբար, Վարդգեսը 1903 թ. ձերբակալվում է, իսկ Սասունի 1904 թ. վաղահաս դեպքերը ձախողում են ընդհանուր ապստամբության ծրագիրը: Այդ դեպքերին Ա. Դարբինյանն անդրադառնում է՝ դարձյալ մեղադրելով Ղաշնակցությանը՝ սխալ մարտավարության համար: Կարելի է նրա հետ համաձայնել, որ Սասունի 1904 թ. ինքնապաշտպանությունը (որն ավելի հաճախ կոչվում է ապստամբություն, ինչը ճիշտ չէ, քանզի 1905 թ. ամռանը ծրագրված ընդհանուր ապստամբության պլանի ձախողման հետևանք էր) ոչ մի դրական արդյունքի չհանգեցրեց, նորանոր զոհերի առիթներ տալուց բացի, բայց այս անգամ նրա որոշ տեսակետներ անհնար է կիսել: Քննադատելով Ղաշնակցությանը, որն ուժեր կենտրոնացնելով Սասունում՝ թուրքական կառավարության ուշադրությունը սևեռեց նրա վրա,<sup>1</sup> նա միտում ունի Անդրանիկին (Անդրանիկ Օզանյան՝ 1865–1927 թթ.) գատելու ՀՅԴ-ից: Մինչդեռ հայտնի է և ապացուցված, որ Անդրանիկը, ի տարբերություն Դժոխք Հրայրի (Արմենակ Ղազարյան՝ 1864–

<sup>1</sup> Տե՛ս Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», հ. 3, էջ 274–302, Lou Անձէլըս, 1951:

1904 թթ.) և Կոմսի (Վահան Փափազյան՝ 1876–1973 թթ.<sup>1</sup>), ինչպես նաև Վանի շատ գործիչների, տարանջատ կամ հայդուկային ձեռնարկներով մեծ տերությունների միջամտության հասնելու հույսերով էր տոգորված: Պատահական չէ նաև այն, որ Սասունի անկումից հետո (1904 թ. ապրիլ) նա Սեբաստացի Մուրադին (Մուրադ Խրիմյան՝ 1872–1918 թթ.) ուղարկում է Վան՝ կռիվները շարունակելու համար գեներ բերելու: Ուշագրավ է նաև այն, որ 1904 թ. ամռանը հասնելով Վան, Անդրանիկը մի շարք հայդուկների հետ կրկին ձգտել է գեներ վերցնել և վերադառնալ Տարոն:<sup>2</sup>

Հետևաբար, հնարավոր չէ համաձայնել Ա. Դարբինյանի այն մտքին, թե «Անդրանիկ զայրացած էր Հ. Յ. Դաշնակցութեան կովկասեան մարմիններուն դէմ, որոնք ըստ իր ըսածին. «Վատօրեն» հրծիգի դեր կատարած եւ Սասունը երկրորդ անգամ ջարդի, ւաւերումի եւ ստրկացման մատներ էին»:<sup>3</sup>

Եթե իրոք այդպես էր, ապա դրանում հավասար չափով մեղքի բաժին ուներ և Անդրանիկը, որը տիպիկ հայդուկային հոգեբանությամբ գործիչ էր:

Կարծում ենք, որ դժվար է համաձայնել նաև Ա. Դարբինյանի՝ Վարդգեսից հետո Վանում դաշնակցականների և արմենականների փոխհարաբերությունները վերլուծելիս արտահայտած այն տեսակետին, ըստ որի՝ «Հ. Յ. դաշնակցութիւնը թրքահայ ազատագրական շարժման մէջ եղաւ այն ոյժը, որ խեղդեց Երկրին ձայնը, խոցոտեց արմենականութեան թելերը եւ տիրականօրեն իշխեց ամենուրեք...: Արմենականութիւնն ալ նոյն դաշնակցականներուն հարկադրանքով Վան-Վասպուրականի մէջ ամփոփելով իր գործունէութիւնը, դարձաւ այն ոյժը, որ կրցաւ հսկել, պայ-

<sup>1</sup> Հայ նշանավոր արձակագիր Վրթանես Փափազյանի հարազատ եղբայրը:

<sup>2</sup> Տե՛ս «Վէմ», Փարիզ, թիւ 5, 1934, էջ 68:

<sup>3</sup> Ա. Դարբինեան, նշվ. աշխ., էջ 89:

քարիլ եւ առաջքը առնել դաշնակցական արկածախնդրական գործելակերպին ու փրկեց այդ շրջանին 150.000-ի հասնող հայութիւնը սպանդանոցէն»:<sup>1</sup>

Ա. Դարբինյանի այս տեսակետին կարելի է հակադրվել հետևյալ հակափաստարկներով.

ա) Հ. Յ. Դաշնակցությունը 1908 թ. հուլիսյան հեղաշրջումից հետո փոխեց Թուրքիայի նկատմամբ իր մարտավարությունը՝ համագործակցելով երիտթուրքերի հետ, սակայն դա ոչնչով չմեղմացրեց թուրքական իշխանությունների թշնամական վերաբերմունքը հայության նկատմամբ:

բ) Վանի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանությունը ոչ միայն արմենականների, այլև որոշ չափով հնչակյանների և, հատկապես, ՀՅԴ Վանի գործիչների և մասնավորապես՝ Արամ Մանուկյանի գործունեության հետևանք էր, ինչն անհնար է ժխտել: Պա, ինչպես նշել ենք, վկայություն էր այն բանի, որ հայերի հաղթանակի գրավականը հայ ազգային կուսակցությունների միասնական գործունեության մեջ էր:

Ա. Դարբինյանի գրքի մի այլ կարևոր արժանիքը Արմենական կուսակցության՝ սոցիալիզմի նկատմամբ ունեցած ըմբռնումների վերաբերյալ շարադրանքն է: Սա ևս կարելի է համարել իրատեսական, որը ակնառու է Սեպուհի (Երվանդ Քեոսյան) խմբագրած մի թռուցիկի հետևյալ տողերից, որը մեջբերում է Ա. Դարբինյանը. «...Եթե դրացի ժողովուրդները, թուրքերը, քիւրտերը եւ այլ ազգեր այն աստիճան անկեղծ լինին, որ հայ յեղափոխութեան եւ ժողովրդին առաջարկեն համասօսմանեան յեղափոխութեան գործակցիլ, այս ապացույց է ինքնին, թե հայերին հավասար իրաւատեր են ճանաչում իբրեւ երկրին զաւակ եւ որու համար գործնա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 95:

կան երաշխիքներ պետք է տուած լինին անշուշտ: Այն ժամանակ անջատ Հայկական հարցը իրականութեան մէջ լուծուած կը համարուի եւ թրքահայ ժողովուրդը ուրախութեամբ կ'աջակցի ընդհանուր ազատագրական գործին՝ ռամկավարական սկզբունքների հեռանկարով»:<sup>1</sup>

Հիրավի, բազմազգ Օսմանյան կայսրության մեջ ժողովրդավարական կարգերի արմատավորումը հնարավոր էր միայն ու միայն այս ճանապարհով: Հայ ժողովուրդը միայնակ այդ հարցը կարող էր լուծել Թուրքիայից բացարձակ անկախանալու դեպքում միայն, ինչը դյուրին խնդիր չէր: Կարծում ենք, որ այստեղ երկրորդ կարծիք չի կարող լինել:

Կարծում ենք, նաև որ սրանք են այն հիմնական հայեցակարգային մոտեցումները կամ դրանք մշակելուն նպաստող տեսակետները 1885-1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ, որոնք առկա են Ա. Դարբինյանի աշխատության մեջ: 1908 թվականին հաջորդած դեպքերի շարադրանքի ընթացքում նրա արտահայտած նման մոտեցումներին անդրադառնալը մեր խնդիրը չէ: Կան իրադարձություններ էլ, որոնց նա սուկ անդրադարձել է (օրինակ՝ 1908 թ. ՀՅԴ-երիտթուրք հարաբերությունները)՝ առանց վերաբերմունք ցույց տալու, ուստի դրանք չենք առանձնացնում: Երբեմն էլ որոշ անձանց՝ Վանի հայտնի Իշխանին, Արամ Մանուկյանին և այլն, ներկայացնում է կուսակցական դիրքերից և իր մեղադրականներում այնքան էլ համոզիչ չէ:

Ամփոփելով նշենք՝

ա) Ա. Դարբինյանի աշխատությունը ոչ միայն հուշագրական բնույթի առանձնահատուկ սկզբնաղբյուր է, այլև պատմագիտական արժեք ունեցող կարևոր ուսումնասիրություն,

բ) նրա պատմագիտական հայացքների հիմքում ընկած է հայ ազգային կուսակցությունների գործունեության միասնականության ձգտումը, որի դրական արդյունքները ներկայացնում է փաստերով,

գ) սխալ է համարում եվրոպական տերությունների միջամըտությամբ հայ ազատագրական պայքարի տարանջատ ձեռնարկների կամ ցույցերի միջոցով հասնել Հայկական հարցի լուծման,

դ) հակված է դեպի լուռ և գաղտնորեն ընդհանուր ապստամբություն կազմակերպելու ուղղությանը՝ առանց ցնցումների, ժամանակավրեպ ձեռնարկների և թշնամուն հայությանը ջլատելու առանց նոր առիթներ տալու:

Այս ամենը լիարժեք հիմք են տալիս, թերություններով, արտահայտած որոշ սխալ տեսակետներով ու դրսևորած կողմնակալությամբ հանդերձ, Արտակ Դարբինյանին դասելու հայ ազգային-ազատագրական պայքարի սակավ իրատես գործիչների թվին:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 110:

ԱՐՄԵՆԱԿ ԵԿԱՐՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ Գ. Յ. ՆՈՒՅԻՍՅԱՆԻ ԿՐԹՆԵՐԱՆ ԵՎ ԵՐԱՆԻ ԵՐԱՐԵՆԻ ԵՎՈՐԹԵՐ

ՅՈՒՆՆԵՐ  
ԱՐՄԵՆԱԿ  
ԵԿԱՐՅԱՆԻ

Գ. ՆՈՒՅԻՍՅԱՆ

Պէյքաթ  
1985



1885–1908 թթ. հայ ազատագրական պայքարի պատմության համար կարևոր հուշագրական սկզբնաղբյուրներից է նաև Արմենական կուսակցության և հայ ազգային-ազատագրական պայքարի նշանավոր ներկայացուցիչ Արմենակ Եկարյանի հուշագրությունը, որում նույնպես առկա են հայեցակարգային նշանակություն ունեցող եզրահանգումներ<sup>1</sup>:

Ազգային ազատագրական մաքառումների երկար ու ձիգ տարիների ընթացքում հայ ժողովուրդն ունեցել է նվիրյալների մի կոհորտա. եղել են գործիչներ, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն մեծարվել, սակայն իրենց կատարած գործերով ետ չեն մնում փառաբանված շատ հերոսներից և իրավամբ արժանի են ամենայն գնահատության ու պատվի: Այդպիսի գործիչներից է Արմենակ Եկարյանը, որն ապրած 55 տարիներից չորս տասնյակը նվիրեց իր ժողովրդին, պսակվեց Վանի ինքնապաշտպանության հերոսի դափնիներով, այրվեց իր ժողովրդի ազատագրման հրով, բայց չզիտես ինչու մնաց ստվերում, մի տեսակ աննկատ: Եվ գուցե զարմանալի է, բայց նրա մասին տակավին գրեթե ոչինչ չի գրվել, եթե բացառենք մի քանի փոքրիկ հուշ-հոդվածներ, որոնք գրվել են այս կամ այն առիթով և այն, որ զանազան հրապարակումներում շատ հաճախ հանդիպում ենք նրա անվան հիշատակությանը: Իր «Կարո» և «Ղարաբեկ» մականուններով հայտնի, ավարառու քուրդ և թուրք բնակչության աչքում անխոցելի մարտիկի առասպելական համբավին տիրացած, մյուս հայդուկների կողքին ու նրանց լավագույն բնութագծերը ժառանգած Արմենակ Եկարյանի անցած ճանապարհից կարելի է կյանքի ու պայքարի դասեր քաղել:

<sup>1</sup> Տե՛ս Յուլեթ Արմենակ Եկարեանի, Պէյրուք, 1985:

Ծնվել է 1870 թ. Վանում: 1887 թ. ընդունվում է Արմենական կուսակցության շարքերը, իսկ 1889 թ. հրաժարվելով դերձակի իր մասնագիտությունից, ամբողջովին նվիրվում է «զինատարական աշխատանքի»: Պարսկաստանից Երկիր գաղտնի գեներտեղափոխելու ժամանակ ընկերոջ հետ ձերբակալվում է և բանտարկվում: Դժոխային չարչարանքներն ու բանտային դժնդակ պայմաններն ի վիճակի չեղան կոտրել աննկուն երիտասարդին և յուրովի մկրտություն դարձան ապագա ազատամարտիկի համար: Նոր բանտարկությունից խուսափելու համար Ա. Եկարյանը հեռանում է Պարսկաստան: Այստեղ համախոհների հետ վերաշինում են Դերեկի վանքը, ամրացնում այն ու վերածում հենակետի: Այստեղից Երկիր՝ կոնկրետ՝ Վան էր փոխադրվում գեներ և զինամթերք: Բայց շուտով Դերեկը դավադրաբար ավերվում է, և Ա. Եկարյանն ու իր ընկերները հաստատվում են Սալմաստի Հավթվան վայրում: Ա. Եկարյանի գլխավորությամբ հաջողվում է մի շարք անգամներ Սալմաստից Վան գեներ տեղափոխել: Հենց այս նպատակով 1896 թ. մայիսի 27-ին Եկարյանը «300 օսմանեան ոսկի հետն առած, 10 ընկերներու հետ կմեկնե Պարսկահայք՝ մեծ քանակութեամբ զինամթերք փոխադրելու Վան, ի նախապատրաստութիւն հավանական ինքնապաշտպանութեան մը»: Սակայն առեղծվածային պայմաններում ձերբակալվում է և այդպիսով զրկվում «1896-ի Վանի հունիսյան ինքնապաշտպանութեան իր մասնակցութիւնը բերելու հնարավորութենէն»<sup>1</sup>: Այնուհետև վերադառնում է Վան, որտեղ կայսերական ներման է արժանանում, սակայն 1902 թ. ստիպված կրկին թողնում է հայրենի քաղաքը և խուսափելով նոր հետապնդումներից, անցնում է Պարսկաստան: 1904 թ.

<sup>1</sup> Եկարեան Ա., նշվ. աշխ., «Կենսագրութիւն Եկարեանի» բաժին, էջակալված չէ:

հաստատվում է Պարսկաստանի Ռերմիա գավառաքաղաքում և զբաղվում առևտրական գործունեությամբ:

1908 թ. հուլիսի 11-ին հրապարակվեց օսմանյան սահմանադրությունը, որն առժամանակ հնարավորություն տվեց շատ տարագրված հայերի վերադառնալ հայրենի տուն: Ժամանակավոր այդ դադարը, սակայն, շուտով անցավ, և սկսված Բալկանյան պատերազմի պայմաններում թուրքական իշխանությունները վերսկսեցին իրենց հայակուլ քաղաքականությունը: Ի տարբերություն հայաշատ մյուս վայրերի, որտեղ միջկուսակցական տարածայնությունները հաճախ խանգարում էին միասնաբար գործելուն՝ Վանում ինքնապաշտպանության մարտերի նախօրեին ծնվեց Զինվորական մարմինը Եկարյանի ղեկավարությամբ<sup>1</sup>, որը փայլուն կատարեց իր խնդիրը և փրկեց Վասպուրականի հայությանն անխուսափելի կործանումից:

1915 թ. օգոստոսի 1-ին ռուսները նորից մտնում են Վան, այս անգամ այնտեղ հիմնավոր մնալու մտադրությամբ, որի առիավատչյան փոխգնդապետ Ալֆրեդ Տերմենին Վանի նահանգապետ նշանակելն էր: Վերաշինաց հանձնաժողովը վերջինիս խնդրանքով Երկրապահ գնդի<sup>2</sup> (միլիցիա) հրամանատար է նշանակում Արմենակ Եկարյանին: Ի վերջո կազմակերպվում է գունդը և Իգդիրի վրայով շարժվում դեպի Վան՝ խնդիր ունենալով անկորուստ Վան հասցնել սահմանագլխին հավաքված շուրջ 10 հազար զաթականությանը: Բայց Երկրապահ գնդին վիճակված չէր երկար գործել. նախ՝ ցարական կառավարությանը ձեռնադրել չէր թեկուզ փոքրաթիվ, բայց զուտ հայկական ռազմական ուժի առկայություն:

<sup>1</sup> Վանի պաշտպանության ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր հայականավոր գործիչ, դաշնակցական, ազգային-ազատագրական պայքարի նվիրյալ Արամ Մանուկյանը:

<sup>2</sup> Իրականում այն ըստ էության վաշտ էր՝ թվով մոտավորապես 200 հոգի, սակայն ժամանակակից գրականության մեջ հիշատակվում է որպես գունդ:

նը հայկական տարածքում, ապա՝ նրա ֆինանսավորման հարցի շուրջ առկա էր միջկուսակցական զգվածություն, և հետո՝ Ա. Եկարյանը քաջ, անվախ կռվող էր, սակայն՝ ոչ փայլուն կազմակերպիչ<sup>1</sup>:

Ռուսական հերթական նահանջի ժամանակ հայ քաղաքական ուժերը կրկին ստիպված էին կազմակերպել Զինվորական մարմին՝ այս անգամ ժողովրդի նահանջը անկորուստ կազմակերպելու համար: Դեկավարներից մեկը Եկարյանն էր, որին խնդրում են ստանձնել ամենակարևոր՝ Բերկրիի գծի պաշտպանությունը: Այլևս չհանդուրժելով վատ բեմադրված այդ խեղկատակությունը, հիասթափվելով ցարական իշխանությունների վարած հակահայկական քաղաքականությունից՝ Ա. Եկարյանը 1916 թ. հուլիսի 30-ին հասնում է Իզդիր և ապա Վաղարշապատի վրայով անցնում է Թիֆլիս: Կուսակցության հրահանգով նա 1918 թ. սկզբներին մեկնում է Կիլիկիա՝ կազմակերպելու կիլիկյան հայկական ուժերը, ապահովելու Կիլիկիայի ինքնավարությունը: Ֆրանսիական իշխանությունները, սակայն, որոշել էին Կիլիկիան վերադարձնել Թուրքիային, ինչը և արեցին 1921 թ. հոկտեմբերի 21-ին Անկարայի (պատմագիտական գրականության մեջ ավելի հաճախ կիրառվում է Էնկյուրի անվանումը) դաշնագրով:

Հուսախաբ Ա. Եկարյանը թողնում է Կիլիկիան և մեկնում Եգիպտոս: Հայրենիքի ցավով տառապած, հայդուկային բազմամյա կյանքում կրած դառնություններից տվայտած նրա մարմինը շատ էր տկարացել՝ Եգիպտոսում վրա հասած ժանտախտին դիմալայելու համար: 1925 թ. հոկտեմբերի 19-ին 55-ամյա հերոսը կնքեց իր մահկանացուն:

Ա. Եկարյանի հուշերի առաջին հրատարակության (1947 թ., Գահիրե), նախաբանից տեղեկանում ենք, որ այն գրվել է

<sup>1</sup> Այսպես են նրան բնութագրում ժամանակակիցները, ինչպես օրինակ՝ Փ. Թերլեմեզյանն իր հուշերում:

Ռամկավար ազատական կուսակցության ակնառու գործիչ, եգիպտահայ մտավորական Լևոն Աճեմյանի խնդրանքով: Այս հուշերն, ի տարբերություն Ա. Դարբինյանի հուշերի, առանձին գլուխներով կամ պարբերացումներով չեն ներկայացվում, այլ պարզապես շարադրված են «Յուշեր Արմենակ Եկարեանի» ընդհանուր վերնագրի տակ: Բայց կարելի է համաձայնել Լ. Աճեմյանի հետ, որը 1870-ական թթ. մինչև 1916 թ. ընդգրկող հուշերը ենթարկել է հետևյալ բաժանումների.

ա) Ազգային-ազատագրական պայքարի նախապատրաստական շրջան (1870–ական թթ. մինչև 1895 թ.),

բ) 1995–1908 թթ. ընդգրկող ազատագրական պայքարի շրջան,

գ) 1908–1916 թթ., երբ տեղի ունեցավ երիթթուրքական հեղաշրջումը, սկսվեց առաջին աշխարհամարտը, և ռուսական զորքերը գրավեցին Արևմտյան Հայաստանի մեծ մասը:

Փորձենք առանձնացնել այս արժեքավոր հուշերում մեզ հետաքրքրող ժամանակահատվածի վերաբերյալ հեղինակի արտահայտած գնահատելի և արդիական հնչեղություն ունեցող տեսակետները: Դրանք հատկապես գնահատելի են Արևմտյան Հայաստանի ազատագրման համար մղվող հայ ազգային-ազատագրական պայքարի ընթացքը, հերոսական փայլատակումները, հիշարժան իրադարձությունները, խելացի ու համարձակ գործիչներին և, վերջապես, այդ պայքարի պարտության պատճառները ճիշտ ընկալելու տեսանկյունից:

Արտաքուստ այն տպավորությունն է ստեղծվում, թե հուշերը կրում են սոսկ նկարագրական բնույթ, քանզի այնտեղ ներկայացվում են դեպքերն իրենց շարունակական ընթացքով, հաճախ առանց եզրակացությունների: Սակայն այդ դեպքերի նկարագրության տրամաբանությունը ինքնին ունի հայեցակարգային նշա-

նակություն: Ղրանում համոզվում ենք դեռևս 1885 թ. առաջ, 1870-ական թթ. վերջերի և 1900-ական թթ. սկզբներին առնչվող իրադարձություններին նրա որոշ անդրադարձներից, որոնք, ի դեպ, համընկնում են ոչ միայն Արմենական կուսակցության, այլ նաև ժամանակի հայ հասարակական-քաղաքական որոշակի շրջանակների տեսակետներին: Այսպես, 1877–78 թթ. ռուս-թուրքական պատերազմի վերաբերյալ նա գրում է. «Երկար ժամանակ էր, որ վասպուրականցին կ'երագեր քրիստոնեայ պետության մը ձեռքին տակ ազատ շունչ քաշել, ու հիմա, ան վերջնականապես համոզուած էր թէ հասած էր արդէն իր իտէալինը: Պատերազմի վախճանն ու Ս. Ստեֆանոյի դաշինքը չյուսահատեցին զինքը: Կիպրոսն ու Պերլինն իսկ խիստ քիչերու աչքերը բացին:

Ռուս-թրքական պատերազմին, ուրեմն, Վասպուրականը ուղքի կոխան եղաւ արշաւող ու նահանջող կանոնավոր ու անկանոն բանակներուն: Այս հանգամանքը իր ահաւոր անդրադարձումը ունեցաւ ամբողջ ազգաբնակչութեան վրայ, զայն մատնելով սովի մը, որուն նմանը, գէթ այդ օրերուն, ան չէր յիշեր բնաւ: Միայն հայը չէր որ կը մեռնէր անօթեթենէն, այլև թուրքն ու քիւրտը, միայն քաղաքացիները չեն, որ հաց չէին գտներ այլև գիւղացիները, որոնց մէջ, կըսուէր, մարդակերութեան դեպքեր ալ պատահած էին: Դժբախտութիւններ ետեւէ ետեւ, - հրդեհ, պատերա՛զմ եւ սո՛վ»: <sup>1</sup> Այս ընդարձակ մեջբերումը և մասնավորապես մեր ընդգծած տողերը հիմք են տալիս եզրակացնելու.

ա) Ա. Եկարյանը հասկանում է, որ թուր էին այն համոզումները, թե հասել է վերջապես քրիստոնյա պետությունների օգնությամբ ազատագրվելու բաղձալի պահը: Ղա պարզ երևում է Կիպրոսի գործարքի և Բեռլինի վեհաժողովի մասին նրա ակնար-

<sup>1</sup> Եկարեան Ա., նշվ. աշխ., էջ 4-5:

կից: Երկու կարևոր իրադարձություն, որոնք ըստ նրա՝ դարձյալ դաս չեղան հայերի համար, նրանց աչքերը չբացեցին Ռուսաստանի և Եվրոպական մեծ տերությունների, հատկապես՝ Անգլիայի, դավադիր քաղաքականության ըմբռնման տեսանկյունից:

բ) Ընդհակառակը, այդ պատերազմն աղետալի հետևանքներ է ունենում արևմտահայության և նրա մի ստվար հատվածը կազմող Վասպուրականի հայության համար, որը բանակների առաջընթացի և նահանջի հետևանքով ոտնակոխ եղավ, ջլատվեց ու քայքայվեց: Արդյունքում՝ ռուս-թուրքական պատերազմը գրոյական օգուտ բերեց արևմտահայության համար: Այս ճիշտ համոզմունքն է ներշնչում Ա. Եկարյանը:

գ) Պատերազմը ցավալի հետևանքներ է ունենում ոչ միայն հայության, այլև թուրք և քուրդ բնակչության համար: Ուրեմն, բոլոր դեպքերում այն դատապարտելի երևույթ է:

Ա. Եկարյանի այս ըմբռնումներին մենք անդրադառնում ենք նաև այն պատճառով, որ հետագա տարիներին, երբ նա արդեն դառնում է ազատագրական պայքարի գործիչ և կազմակերպիչ, ավելի են խորանում և երկրորդական, երրորդական են դառնում մեծ տերություններից հայության ազատագրությունը կախյալ համարելու ձգտումները:<sup>1</sup>

Արդեն 1880-ական թթ. սկզբի արևմտահայության զարթոնքին Ա. Եկարյանի անդրադարձները այն համոզումներն են ձևավորում, որ նա շատ ճիշտ է ընկալում լուսավորական կամ կրթական շարժման ունենալիք դերը ազգային-ազատագրական պայքարի

<sup>1</sup> Եկարյանն իր հուշերը գրում էր այն ժամանակ, երբ ականատես էր եղել 1890-1923 թթ. տեղի ունեցած Հայոց ցեղասպանությանը և մեծ հիասթափություն էր ապրում (հիասթափություն և խորը հուսախաբություն էր ապրում հայ ժողովրդի մեծ մասը) թե՛ մեծ պետություններից և թե՛ նույնիսկ հայ ազատագրական շարժումից: Անշուշտ, դրանով էին պայմանավորված նրա հայացքներում տեղ գտած կտրուկ փոփոխությունները:

նախօրյակին: Կարծում ենք՝ չենք սխալվի, եթե պնդենք, որ ցանկացած ազգային-ազատագրական պայքարի նախորդում է դրա գաղափարախոսությունը, որը հետագայում ավելի է հղկվում այդ պայքարի ընթացքում: Անվիճելի ճշմարտություն է, որ մասնավորապես 1885–1908 թթ. հայ ազգային-ազատագրական պայքարն ընդհանուր առմամբ ընթացավ ոչ վերջնականապես հստակեցված և ճշգրտված գաղափարախոսությամբ: Հայ քաղաքական կազմակերպություններում նույնիսկ առկա էին հակասական մոտեցումներ այն կարևորագույն հարցի շուրջ, թե, ի վերջո, հաղթանակից հետո ինչպիսի քաղաքական կարգավիճակ պետք է ստեղծվեր Արևմտյան Հայաստանում: Հայ ազատամարտի գաղափարաբանության հակասական ելևէջները հաճախ պայմանավորված էին նաև մեծ տերությունների օգնությամբ ազատության հասնելու ակնկալիքներով:

Ա. Եկարյանը, ի տարբերություն շատերի, ճիշտ է ընկալել Խրիմյան Հայրիկի «Երկաթե շերեփի» կոչը, որն ամենևին չէր նշանակում առանց լուրջ նախապատրաստության, ահաբեկչական գործողություններով և տարանջատ ձեռնարկներով ուշադրություն գրավելու հորդոր, այլ՝ համազգային նախապատրաստություն: Իսկ այդ նախապատրաստությունը նախ և առաջ ենթադրում էր լուսավորական կամ կրթական գործունեություն: Անկախ կուսակցական պատկանելությունից՝ այդպես էին մտածում Վանի շատ գործիչներ: Այդպես էր մտածում և Ա. Եկարյանը:

Վասպուրականում ծավալած կրթական շարժումը դրվատանքով ներկայացնելուց հետո նա հետևյալն է գրում. «Հին օրերու թանձրացած խաւարը տեղի կուտար լուսապայծառ օրուան մը առջեւ: Ջարթնումի այս շարժումը հետզհետե կ'ընդհանրանար նորահաս երիտասարդութեան մէջ: Ընթերցասիրութիւնը մեծ ծաւալ գտած էր: Գամար-Քաթիպայի հայրենաշունչ երգերը գիշերները

կ'արծագանքէին Այգեստանի սաղարթախիտ պարտէզներուն մէջ: Ռաֆֆիի եւ Ծերենցի վէպերը նոր եւ անդիմադրելի թափով մը կը հրդեհէին մոխիրներու տակ թաղուած կայծերը...»:<sup>1</sup>

Հետևությունը մեկն է՝ Ա. Եկարյանը ճիշտ է ընկալում կրթական շարժման դերն ազատագրական պայքարի կազմակերպման գործում և Վասպուրականի օրինակով ապացուցում է նման շարժման հետևանք պայքարի արդյունավետությունը: Մի բան ակնհայտ է, որ գալիք ազատագրական պայքարում Վանի գործիչների խոհեմ գործելակերպը պայմանավորված էր հենց կրթական կամ, որ նույնն է, գաղափարախոսական գործող շարժումով:

Բավական հետաքրքիր և պատմագիտական հնչեղություն ունեն Ա. Եկարյանի տեսակետները կովկասահայության վերաբերյալ: Հետաքրքիր է, որ ինչպես նա, այնպես էլ իր նման վանեցի շատ երիտասարդներ այն կարծիքն ունեին, թե Կովկասում հայությունը տոգորված է ազատագրական գաղափարներով: Նա գրում է. «Կովկաս, ան դիութական երկիրն էր այդ օրերուն մեզի համար (1980–ական թթ. վերջերին - Ս. Ա.): Չէ՞ որ հոն կ'ապրեին, կը գործէին Արծրունիներն ու Ռաֆֆիները: Այդ հրաշալի երկրին մէջ, ուր հայ ազատ էր իբրեւ մարդ ապրելու, ես կ'ենթադրէի թէ բազմաթիւ են «Կարօներ», «Ֆարհատներ» եւ «Ասլաններ», ի՜նձի ընկերակցելու համար...»:<sup>2</sup>

Ա. Եկարյանը համոզված էր, որ կովկասահայությունը պատրաստ է միավորվելու արևմտահայությանը՝ հանուն վերջինիս ազգային-ազատագրության: Նրա մոտ փաստորեն առկա էր արևմտահայության խնդրի շուրջը ողջ հայությանը միավորված

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 8:

տեսնելու ցանկությունը: 1888 թ. սկզբներին հասնելով Թիֆլիս՝ Ա. Եկարյանը հայտնվում է միանգամայն հուսախաբ վիճակում:

«Տգիտութեան եւ անգիտակցութեան թանձր խաւարը, 88 թուականներուն անգամ, շատ ավելի զգալի էր Թիֆլիսի մէջ, քան Վասպուրականի: Եւ Արծրունիներու, Ռաֆֆիներու եւ Պատկանեաններու դէմքերը այդ խաւարին ընդմէջէն պլպլացող աստղեր էին միայն: Տգետ էին հոն հայ քահանան եւ ուսուցիչը, եւ հայ ընտանիքներէն հալածուած՝ հայ լեզուն, հայ սովորութիւնն ու վարքութարքը: Թիֆլիսեցիին համար, իր քաղաքը ամբողջ տիեզերքն էր, իր Քուռը թէ՛ ծով, թէ՛ գետ այն որ թիֆլիսեցի չէր գիտացի էր, իսկ Արեւմտահայաստանը գրեթէ բոլորին համար «Կռօ»ներու երկիր: Եվրոպան անգամ, այս օրերուն, թիֆլիսեցիին համար «ֆրենկ» անունով ծանօթ էր...»:<sup>1</sup>

Այսինքն, Ա. Եկարյանի կարծիքով կովկասահայությունն իրականում դեռևս չէր ապրել այն զարթոնքը, որն արդեն կար Արևմտյան Հայաստանում և իր հայրենի Վանում: Չկար համահայկական պայքարի անհրաժեշտության ըմբռնումը, որն աստիճանաբար ձևավորվեց արդեն 1890–ական թվականների առաջին կեսերին, երբ քաղաքական ասպարեզ իջավ Հայ Յեղափոխական Ղազնակցություն կուսակցությունը: Բայց թերևս կարելի է պնդել, որ ամբողջ արևելահայությունը չէր, որ տողորվեց Արևմտյան Հայաստանի ազատագրության ցանկությամբ նաև Ղազնակցության քաղաքական ասպարեզ իջնելուց հետո: Այնպես որ, Ա. Եկարյանի տեսակետը թեև խիստ ու անհանդուրժող բնույթ ունի, սակայն պարունակում է ճշմարտացի տարրեր և գրեթե խոցելի չէ:

<sup>1</sup> Նույն տեղում: Այս նկարագրությանը հարկավոր է մոտենալ որոշակի վերապահումով. այստեղ ընդգծված դրսևորվում է ռեգիոնալ մտածողությունը, ինչը բնորոշ է եղել (և է) բոլոր հայերիս բոլոր ժամանակներում:

Մյուս կարևոր դրույթը, որը զարգացնում է Ա. Եկարյանը, կապված է արևմտահայ ազատագրական պայքարի օրինաչափության հարցի հետ: Նա իրավացիորեն կարծում է, որ այդ պայքարը հետևանք էր թուրքական իշխանությունների վարած դաժան ազգային և սոցիալական քաղաքականության, և դա ցույց է տալիս Վասպուրականի օրինակով: 1880–ական թթ. վերջերին տարվող այդ քաղաքականության մասին նա գրում է. «բանտերը այլևս շատ նեղ կուզային գիողերէն ու քաղաքներէն հաւաքուած ծաղիկ երիտասարդութեան համար, եւ ամէն օր խցիկներու թիւը կ'աւելանար: Չկար աչքի զարնող երիտասարդ մը, որ ճաշակած չըլլար այդ սարսափելի զնտաններուն կեանքը»,<sup>1</sup> ապա ավելացնում. «/18/ 89 թուականներուն, թուրք քաղաքականութիւնը հայերուս վերաբերմամբ աւելի քան բացորոշ էր: Հետզհետէ կը պարզուէր նաեւ մեր ընելիքը: Անիկա նոյնիսկ կը հարկադրուէր մեզի: Բանտէն դեռ նոր ազատուած մեր վերո յիշեալ ընկերները, փոխանակ ընկձելու եւ իրենց խաթարուած առողջութեան դարմանումին աշխատելու, աւելի ոգելորութեամբ ասպարէզ իջան: Բոլորին մտածածը, բոլորին զգացածը մէկ էր, - զինուի՛լ...»:<sup>2</sup>

Ասվածից պարզորոշ երևում է (հատկապես մեր ընդգծված նախադասություններից), որ հայ ժողովրդին իր վարած հակահայ քաղաքականությամբ ստիպում էր գինվել Օսմանյան կառավարությունը: Սա մի ավելորդ անգամ գալիս է ապացուցելու, որ ստահող են այն թուրքանպաստ տեսությունների հեղինակների բարբաջանքները, համաձայն որոնց հայոց ջարդերը պայմանավորված էին հայ ազգային-ազատագրական պայքարով: Այլ հարց է, որ այդ պայքարի որոշ տարանջատ ձեռնարկներ ջարդերի առիթներ էին տալիս: Պայքարի նման ձևերին դեմ էին արմենա-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 10:

կանները և, բնականաբար, նրանց լավագույն գործիչներից մեկը՝ Արմենակ Եկարյանը: Բայց ազատագրական պայքարի զարթոնքն օրինաչափ էր:

Անշուշտ, զինման գործը դյուրին չէր, և դրա ուղիների որոնումները երկար շարունակվեցին: Զենք հիմնականում ներկրում էին Կովկասից Պարսկաստանի վրայով: Սակայն Հնչակյան, Պաշնակցություն և Արմենական կուսակցությունների զենքերի ներկրման մեթոդների միջև տարբերություն կար: Եթե առաջին երկուսը մինչև 1904 թվականը ներառյալ զենքեր ներմուծում էին հայդուկային խմբերով՝ հաճախ ցուցադրական բնույթ հաղորդելով այդ գործողություններին, իսկ երբեմն էլ բախվում ու մարտի էին բռնվում թուրք և քուրդ զինյալ խմբերի հետ՝ հույս ունենալով, թե մեծ տերությունները կմիջամտեն խնդրին և կօգնեն հայերին, իսկ Արմենական կուսակցությունն այդ հարցում զգուշավոր էր: Ղազալիս էր նրանց տեղացիներ լինելուց և կուսակցության ծրագրային դրույթներից, ուր հստակ դրված էր ժամանակավրեպ ձեռնարկներով ջարդերի առիթներից զգուշանալու պահանջը. «Մասնակի եւ տկար ուժերի շարժումները, ցույցերը բացառիկ հանգամանքներից դուրս ընդունելի չեն, ընդհակառակը՝ վնասակար են»:<sup>1</sup>

Արմենական Ա. Եկարյանը ևս նույն կերպ էր մտածում: Այսպես, երբ նա դեպքերի բերումով (որոնց անդրադառնալը մեզ նպատակ չենք համարում) անցնում է Պարսկաստան և հաստատվում Դերեկ<sup>2</sup> վանքում, այնտեղ են գալիս «հայրենասիրական շունչով զինովցած երիտասարդներ»: Վերջիններս գալիս էին «մեծամեծ հույսերով, ոսկեզօծ երազներով, համոզուած թէ սահմանազըլ-

<sup>1</sup> Տե՛ս Ռամկավար Ազատական Կուսակցություն, Ուղեցույց և համառոտ պատմություն, Ե., 1991, էջ 42:

<sup>2</sup> Գրականության մեջ երկու ձևով էլ՝ «Դերեկ» և «Դերիկ» հանդիպել ենք: Մեր կարծիքով երկուսն էլ համագոր կիրառելի են:

խի վրայ կազմ ու պատրաստ խումբերը շուտով Երկիր պիտի արշաւեն՝ ազատելու համար հայն ու Հայաստան»:<sup>1</sup>

Որ Եկարյանը չէր կիսում նրանց մտայնությունը և նման ճանապարհով գնալը համարում էր ոչ արդյունավետ, երևում է նրա հետևյալ տողերից. «Ատիկա իրենց վառ երեւակայութիւններուն համար նոյնքան դիւրին գործ էր, որքան դիւրութեամբ անոնք կարդացեր էին «Կայծեր» ու «Խենթ»ը, «Թորոս Լեւոնի»ն ու «Երկունք»ը...»:<sup>2</sup>

Եկարյանը համաձայն էր Մ. Ավետիսյանի այն տեսակետին, (վերջինս նույնպես գալիս է Պարսկաստան՝ Երկիր անցնելու համար), «թէ արեւմտահայ ժողովուրդին իրապես օգտակար ըլլալու համար, պէտք էր մտնել Երկիր, ծանօթանալ այն ժողովուրդին՝ որուն համար պիտի աշխատուէր, ծանօթանալ այն պայմաններուն՝ որոնց մէջ կ'ապրեր հայ ժողովուրդը, ինչպէս նաեւ այն նիւթական ու բարոյական արգելքներուն որոնց պիտի բախէ ամեն գործիչ »:<sup>3</sup>

Հիրավի, եթե այս ըմբռնումով ընթանային բոլոր հայ քաղաքական ղեկավարները, ապա, վստահորեն կարելի է պնդել, որ առավել արդյունավետ ընթացք կունենար ու առավել քիչ զոհողություններով կընթանար հայ ազգային-ազատագրական պայքարը:

Եվ պատահական չէ, որ Ա. Եկարյանը Մ. Ավետիսյանի հրահանգով Վան է մեկնում առանց զենքի, մուրացիկի հագուստով՝ տանելով իր հետ նամակներ և բերելով դրանց պատասխաններն իր ուսուցչին, ով այդ ժամանակ ղեկավարում էր Սալմաստում իր ստեղծած մասնաճյուղը:

<sup>1</sup> Յուշեր Արմենակ Եկարեանի, էջ 23:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 25:

Ա. Եկարյանի այս ըմբռնումը հայ ազատագրական պայքարի մարտավարության վերաբերյալ երևում է նաև 1890 թ. սեպտեմբերին ձեռնարկած Ս. Կուկունյանի արշավախմբին նախորդող լուրերի նրա մեկնաբանությունից: Անդրադառնալով այդ խնդրին նա գրում է. «Բավական ժամանակ ի վեր էր, որ կը խոսվուէր Կովկասէն դէպի Արեւմտահայաստան ըլլալիք շարժումի մը մասին: Եւ այս գործին պատրաստութեան արձագանքները մինչեւ Պարսկաստանի խուլ անկիւնները հասնելով, կը մեծնային, կը չափազանցուէին ու կը ընդունէին դիւցազնական քայլի մը երեւոյթը, բոլոր հայրենաբաղձ սրտերու մէջ առաջացնելով գոհունակութեան զգացում մը: Ի հարկէ, ինծի պէս մտածող երիտասարդները պիտի ուզէին մասնակցիլ այս հրաշավիպային, այս նուիրական գործին: Արշաւել դէպի Հայաստան, ջարդել մեր դարաւոր թշնամին եւ ազատել մեր եղբայրները գերութեան ծանր լուծէն: Առաջին անգամն էր, որ հայ ըմբոստ ոգին հրապարակ կ'իջներ իր բախտը փորձելու: Եւ այս արշաւանքը կազմակերպողներուն մէջ ոգետրութիւնը այնքան վառ էր ու նպատակը այնքան նուիրական, որ ոչ ոք կ'անդրադառնար այն քաղաքական դժուարութեանց, խոչընդոտներուն, որոնցմով շրջապատուած էր այդ գործ...»:<sup>1</sup>

Այս ընդարձակ մեջբերումը և հատկապէս մեր ընդգծած նախադասությունները մեկ անգամ ևս վկայում են, որ հայտնի գործիչը պատմական իրադարձություններին նայում է քննախույզ հայացքով: Մի կողմից նա օրինաչափ է համարում հայոց ոգևորությունը, մյուս կողմից էլ նման ձգտումները փաստորեն համարում է քաղաքական ռոմանտիզմի արտահայտություն, որի պայմաններում երկրորդական պլան էր մղվում տեղական դժվարին պայմանների հաշվառումը:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 28-29:

Ճշմարիտ է, Ա. Եկարյանը նույնպես ոգևորվելով անհաջող փորձ է անում Կովկաս անցնելու և արշավախմբին միանալու, բայց հետագայում արշավախմբի առումով գրված նրա վերոհիշյալ տողերը փաստորեն հայեցակարգային մոտեցում են տվյալ պատմական իրադարձությանը:

Հարկավ, չպետք է մոռանանք նաև, որ շրջապատող ցեղերի, հատկապէս քրդերի աննպաստ դիրքորոշումը հաճախ անխուսափելի էին դարձնում զինված ընդհարումները նաև Ա. Եկարյանի նման մտածող գործիչների համար: Բայց այստեղ կարևորն այն է, որ նրանց գործունեության մեջ նման կռիվների կազմակերպումը պլանավորված չէր, մի բան, որ ինչպէս նշեցինք, չես կարող պնդել դաշնակցական և հնչակյան գործիչների դեպքում:

Այնպէս որ չկանխատեսված ընդհարումներ պատահել են նաև Ա. Եկարյանի հետ: Բայց Դերեկում հաստատվելու շրջանում նա կարողացել է անադնուկ գեները հասցնել Վան՝ ինքնապաշտպանության նախապատրաստման, ինչպէս նաև Երկրի հետ անադնուկ հարաբերվելու համար կայաններ ստեղծել Կոտուրում:

Լինելով գաղտնորեն ընդհանուր զինման և նախապատրաստման կողմնակից՝ Ա. Եկարյանը դրական է արտահայտվում նման ըմբռնումներ ունեցող այլ կուսակցական գործիչների նկատմամբ: Այսպէս, նա դրվատանքով է ներկայացնում Վանում ՀՅԴ առաջին գործիչ Պետոյի գործունեությունը, որով օգնում է առավել լավ պատկերացում ունենալ ազատագրական պայքարի վերաբերյալ իր ունեցած հայացքների մասին: Նա գրում է. «Վան հասնելէ հետո ան (Պետոն - Ս. Ս.) իր շրջահայաց եւ լուրջ գործունէութեամբը մեր ընկերներուն համակրութիւնը գրաւած էր եւ ամբողջովին նուիրուած սրբազան գործին: Առանց կառավարութեան ուշադրութիւն գրավելու, ազատ պտտիլ կարենալու համար, ան թելին տակ առած հիսուածեղենի քանի մը կտորներ, խանութ

խանութ, հավաքոյթ հաւաքոյթ կ'երթար, ուժ տալու ինքնապաշտպանութեան գործին: Յաճախ ալ, որպէս ջրաբաշխ, բահ մը ուսին, թաղէ թաղ, այգիէ այգի կը դեգերէր, առանց մասնաւոր կեդրոնի եւ հետեւորդներու, միշտ մեր ընկերներու ցուցումներուն հետեւելով եւ համաձայն տեղական պայմաններու հարկադրանքներուն»:<sup>1</sup>

Այսպիսով. ա) Ա. Եկարյանը ճիշտ էր համարում անաղմուկ գործունեությունը, որը կառավարությանը չէր տա ջարդերի հավելյալ առիթներ, բ) գտնում էր, որ ինքնապաշտպանությունը պետք էր նախապատրաստել գաղտնորեն, գ) դրսից եկած գործիչների համար կարևոր էր համարում գործունեությունը տեղական պայմանների առանձնահատկությունների հաշվառումով, և ով ընկալում էր դրանք, անկախ կուսակցական պատկանելությունից, համագործակցում էր նրանց հետ:

Եվ իսկապես, հայ ազգային-ազատագրական պայքարն անհամեմատ ավելի արդյունավետ կլինէր, գուցե՛ն Մեծ եղեռնը չընդգրկէր այդքան ողբերգական մասշտաբներ և չկորսվէր ողջ Արևմտյան Հայաստանը, եթէ մի շարք նպաստավոր պայմանների կողքին նաև հայ ազգային երեք կուսակցությունները գործէին համատեղ և միասնականության խոր ըմբռնումով: Բայց, դժբախտաբար նրանք չգործեցին ընդհանուր ձակատով, այլ ընդհակառակը՝ հաճախ որդեգրեցին միմյանց նկատմամբ թշնամական դիրքորոշում, որը ոչնչով չի արդարացվում: Հայ ազգային կուսակցությունների անմիաբանության պատճառների մասին, որոնք հաճախ համարժեք են պատմագիտական հայեցակարգերին, Եկարյանը համոզիչ տեսակետներ է հայտնում: Փորձենք ներկայացնել դրանք: Ըստ նրա՝ Հնչակյան կուսակցության սկզբնավորումից առաջ տարածայնություններ են առաջանում Ա. Նազարբեկյանի,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 33-34:

դոկտ. Ս. Գաբրիելյանի և Մ. Փորթուգուլյանի միջև: Այդ տարածայնություններին, այնուհետև ձևավորված մյուս կուսակցությունների գործունեության եղանակներին Ա. Եկարյանի անդրադարձները կրում են քննական բնույթ:

Նա դրանց անդրադառնում է ոչ որպես անմիջական մասնակից, այլ գնահատող և վերլուծող՝ այդ վերլուծություններին ինքնին տալով պատմագիտական արժեք:

Մինչև Հնչակյան կուսակցության ստեղծումը վերոհիշյալ գործիչների միջև առաջացած տարածայնությունների մասին նա գրում է. «Նազարպեկ և Գաբրիելեան Հայաստանի կեանքին անծանոթ էին եւ .... առաջինը եւրոպական, իսկ երկրորդը՝ ամերիկեան դաստիարակութամբ. անոնք կը ձգտէին հայրենասիրականին («Հայ հայրենասերների միությունը», որի անդամներից էր Ա. Եկարյանը - Ս. Ս.) տալ ընկերվարական ուղղութիւն մը, ինչ որ բոլորովին խորթ էր ու Տաճկաստանը, հայն ու Հայաստանը, եւ չէին ուզեր մտիկ ընել Փորթուգալեանին, որ երկարատեւ գտնուած էր Պոլսէն գաւտ՝ Եւրոկիա, Սեբաստիա, Տիգրանակերտ ու Վան եւ ուսումնասիրած երկիրը իր բոլոր կարիքներովը»:<sup>1</sup>

Ի՞նչ հետևություններ կարելի է անել այս դիտարկումից.

Առաջին. իսկապես անվիճելի ճշմարտություն է, որ հայ ազգային կուսակցությունների գաղափարական դրույթների վրա իր խորը կնիքն էր դրել այն միջավայրը, որում նրանք կրթվել էին, և ընկերվարական գաղափարախոսության ներմուծումն այդ դրույթների մեջ հիմնականում գալիս էր եվրոպական ազդեցություններից:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 34:

Երկրորդ. ընկերվարական գաղափարախոսությունը չէր կարող արմատանալ արևմտահայության մեջ, որը նախ և առաջ ուներ ազգային-ազատագրության խնդիր:

Երրորդ. Օսմանյան Թուրքիայի էության մեջ խորասույգ գործիչը չէր կարող չհամոզվել Մ. Փորթուգալյանի տեսակետների ճշմարտացիության մեջ:

Իսկ ի՞նչ էր ուզում Մ. Փորթուգալյանն արդեն հայ ազգային մյուս երկու կուսակցությունների ձևավորումից հետո: Հետևյալը՝ «որ նոր շարժումները կատարուէին իր ուղղութեան համաձայն (որը նաև արմենականների ուղղությունն էր - Ս.Ս.) [ուռ եւ անշշուկ պատրաստութիւն, յարմար թոպէին միայն շարժուելու համար, մինչ հնչակեանները կը հավատային ցոյցի և Եվրոպական միջամտութեան...»:<sup>1</sup>

Պատմական հետազա իրադարձություններն ապացուցեցին, որ միանգամայն ճիշտ էր ազատագրական պայքարի կազմակերպման Մ. Փորթուգալյանի (նաև Արմենական կուսակցության) ըմբռնումը: Մասնավորապես՝ 1890-ական թթ. կազմակերպված հնչակյանների ցույցերի (Գում Գափուի, Բաբը Ալիի, Սասունի 1894 թ. ապստամբության), Եվրոպական միջամտության անուպատ հետևանքները, որոնք հիմնականում տեղական պայմաններին անձանոթ լինելու հետևանք էին: Ուստի և դարձյալ հայեցակարգային նշանակություն ունի Ա. Եկարյանի ընդհանրացումը՝ «հնչակեանները կը հավատային ցոյցի ու Եվրոպական միջամտութեան...»:<sup>2</sup>

<sup>1</sup> Նոյն տեղում, էջ 35:

<sup>2</sup> Իհարկե Եվրոպայի օգնության խնդիրն ամբողջովին մերժելը և «դրսից եկած» գործիչների տեղական պայմաններին անձանոթ լինելով միայն բացատրելը ճիշտ չէ: Նրանք հաճախ ստիպված էին դիմում Եվրոպային օգնության խնդրանքով, որովհետև նախ՝ ուժերն անհավասար էին և հետո՝ Եվրոպացիների տված

Հաստատելու համար բավական է դիտարկել Սասունի օրինակը: 1891–93 թթ. մղված հերոսական և հաղթական կռիվներից հետո, այնտեղ ապաստանած Միհրան Տամատյանը և Մուրադը (Համբարձում Պոյաճյան) Եվրոպական միջամտության հույսով կրկին ըմբոստություն էին քարոզում այն դեպքում, երբ ժողովուրդը բոլորովին անպատրաստ էր դրան:

Դեռևս Մուրադի Սասուն անցնելուց առաջ Հնչակյան կուսակցությունն արդեն խոսում էր նրա ապստամբության մասին այն դեպքում, երբ կառավարությունն առիթ էր որոնում հաշվեհարդար տեսնելու 1891–93 թթ. կռիվներից հաղթական դուրս ելած Սասունի հետ:<sup>1</sup>

Իսկ Սասունի 1894 թ. ապստամբությունն ավարտվեց պարտությամբ և սոսկալի կոտորածներով, ինչը տեղացի արևմտահայ գործիչների տեսակետների անտեսման հետևանք էր նաև:

Բավական հետաքրքիր և ցայսօր անտեսված ՀՅԴ-Արմենական կուսակցությունների համագործակցության ցավոտ խընդրին անդրադառնալով՝ Եկարյանը գրում է, որ երբ 1892 թ. Թիֆլիսում գումարվում է ՀՅԴ 1-ին Ընդհանուր ժողովը, դրան հրավիրվում են նաև Վանի արմենականները՝ «անոնց հետ համաձայնութեան մը գալու նպատակաւ»:

Արմենականները Թիֆլիս են ուղարկում Գր. Պետզիկյանին և Գ. Բաղեշջյանին: Մեկնում է նաև Պետոն (Ալեքսանդր Պետրոսյանը): «Սակայն, համաձայնութիւնը չի կայանար, որովհետև Ղաշնակցութիւնը մերիներեն կը պահանջէր տառացիօրեն հպատակիլ իր բոլոր ցուցումներուն, որպէս կենդրոնական մարմնի: Այս յա-

շռայլ խոստումներն ու միջամտությունները որոշ դեպքերում հույսեր էին ներշնչում:

<sup>1</sup> Տե՛ս Սերոբեան Մ., Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, վերլուծումներ հայկական հարցին շուրջը, Գահիրե, 1948, էջ 191:

լակնոտ պահանջքը, ի հարկէ, կը մերժուի մեր պատգամաւորներուն կողմէ, որոնք կը խօսէին յանուն մեծ կազմակերպութեան մը՝ որ ծնունդ առած էր իրական կարիքներէն եւ կը գործէր Երկրի մէջ, բայց որ, անտարակոյս, պէտք ունէր արտասահմանի օժանդակութեանը, զալիք փորձութիւններուն պատրաստ ըլլալու համար: Ուստի մերիմները պահանջ կը դնեն օգնել միայն իրենց եւ չխառնուիլ իրենց ներքին գործունեութեան, ինչ որ կը մերժուի դաշնակցականերէն...:

Մեր ընկերները ետ եկան ձեռնունայն: Այսուամենայնիւ մեր յարաբերութիւնները Ղաշնակցութեան հետ աւելի սերտ մնացին քան թէ հնչակեաններու հետ»<sup>1</sup>:

Այստեղ դժվար է կողմնորոշվել, թե ովքեր էին ավելի ճիշտ: Բնականաբար, երկկողմանի առաջարկներն էլ մեկ նպատակ են ունեցել՝ գործի ղեկավարությունը վերցնել իրենց ձեռքը, սակայն երկու կուսակցությունների համար էլ դժվար էր գրկվել իրենց ղեկավար դերից:

Իսկ ինչով էր պայմանավորված Եկարյանի հայտնած հետևյալ կարծիքը. «Ղաշնակցութեան հետ մեր հարաբերութիւններն աւելի սերտ մնացին քան թէ հնչակեաններու»: Կարծում ենք հետևյալ հանգամանքով՝ չնայած իր գործողություններում եվրոպական միջամտության նախատեսմանը, ՀՅԴ-ը կատարում էր նաև զինման աշխատանքներ: Բացի այդ Վանում ազատագրական պայքարի արմենականների ավանդույթներն արդեն արմատացած էին, ինչը զոնե սկզբնական շրջանում ամբողջովին չէր անտեսվում դաշնակցականների կողմից: Այսպիսով, մյուս հայեցակարգային մոտեցումը, որին հիմք է տալիս վերոշարադրյալը, հետևյալն է՝ հայ ազատագրական պայքարի հաղթական ավարտի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 36:

գրավականը նրա միասնականության մեջ էր, որի բացակայությունը դժբախտաբար, իր ազդեցությունն ունեցավ այդ պայքարի անհաջող ելքի վրա: Սա պատմական ճշմարտություն է, որն ընկալել է օգնում նաև Ա. Եկարյանը:

Կարծում ենք, որ պակաս կարևոր նշանակություն չունի նաև արմենականների գործունեության արդյունավետության Ա. Եկարյանի գնահատականը. «Տարդ պատմուած եղանակով, ուրեմն, առանց ցուցամոլութեան եւ աղմուկի, մանաւանդ առանց զանազան նուիրական անուններու շահագործումին, մենք արմենականներս, յաջողած էինք բաւական զենք փոխադրել Վան՝ զալիք օրերուն անպատրաստ չգտնուելու համար: Ըսել չեն ուզել, անշուշտ, որ այդ զէնքերով մենք պիտի կարենայինք ինքզինքիս պաշտպանել կառավարութեան մը դէմ, ո՛չ, այլ զէթ՝ արմենականներս այս կերպ գործունէութիւն մը ունէինք»<sup>1</sup>:

Հատկապես մեր ընդգծումներից պարզ է, որ Ա. Եկարյանը արմենականների գործունեությունը գնահատում է բավական օբյեկտիվ և գտնում է, որ իրենց ստեղծած միջոցները թեպետ քիչ էին ողջ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման համար, բայց անկախ դրանից՝ նախապատրաստության իրենց ուղին զերծ էր ավելորդ ցուցամոլությունից:

Ա. Եկարյանի այս վկայությունը մի անգամ ևս օգնում է ճշգրիտ պատկերացում կազմել Արմենական կուսակցության գործունեության եղանակների մասին:

Ղաշնակցության գործունեության առաջին շրջանի համար (1892–1898 թթ.) (որոշակի վերապահումով)<sup>2</sup> բնորոշող են նրա հետևյալ տողերը. «Կովկասահայ դաշնակցականները, որոնք

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>2</sup> Խոսքը չի վերաբերում որոշ անհատ գործիչների՝ Պետո, Վարդգես և այլն, որոնք մուտք գործելով Երկիր հենց առաջին պահից սկսած որդեգրեցին հավասարակշռված, զուսպ ու զգուշավոր մարտավարություն:

արևմտահայոց փրկութեան գործը կը վարէին այնպես, ինչպէս կարդացած էին վեպերու մեջ»<sup>1</sup>:

Հետաքրքիր է, որ նա գործածում է «Կովկասահայ դաշնակցականներ» դարձվածքը: Կարծում ենք, որ դա պատահական չէ, քանզի արևմտահայ դաշնակցական գործիչները (Հրայր, Կարդգես, Մշո Գեղամ և այլք) ավելի իրապաշտ էին և գերծ կովկասահայ գործիչների որոշ ժողովուրդները: Ըստ նրա՝ այդ ժողովուրդները հետևանք էր նաև զինված խմբերով նրանց Պարսկաստանում շրջելը, Դերեկի պարիսպների կառուցումը և այլն, որը հանգեցնում է թուրք հյուպատոսի միջամտությանը, ինչի արդյունքում պարսկական կառավարության կողմից քանդվում են պարիսպները և ուժեղացվում հսկողությունն այդ տարածքներում: Մի բան ակնհայտ է, որ անաղմուկ և գաղտնի գործունեությունն էր հայ ազատամարտի ճշմարիտ ուղին: Սա արդեն նշանակում էր, որ առաջնայինը պետք է դառնար սեփական ուժերին ապավինելու գաղափարը, ինչը ընդունելի էր արմենականների մեծամասնության կողմից: 1895 թ. սեպտեմբերին Թիֆլիս հասած Մ. Ավետիսյանն, ըստ Ա. Եկարյանի «Երկրի գործիչներուն (կովկասահայ – Ս. Ս.) կ'ըներ թելադրություններ՝ անաղմուկ, անշշուկ, յոյսը սեփական ուժի վրա դրած, աչալուրջ կերպով պատրաստուելու մասին»<sup>2</sup>:

Քննողի հայացքով է ներկայացնում Ա. Եկարյանը 1895 թ. ջարդերը և համարձակ եզրակացությունների է հանգում դրանց պատճառների վերաբերյալ: Նրա դատողությունները որակյալ առումով մոտենում են անաչառ պատմաբանի դատողությունների: Նա գրում է. «Անծանոթ հայ իրականութեան, երկրի դրութեան, թշնամիին զօրութեան, այլև Եւրոպական դիւանագիտական բուն

նպատակներուն, ռուսահայ մեր այս տաք գլուխներէն ղեկավարուած մեր զոյգ յեղափոխական կուսակցութիւնները, տարածուած Փոքր Հայքի և մասամբ ալ Հայկական Նահանգներու մէջ, իրենց անթաքթ, անխորհուրդ եւ անժամանակ պայքարովը փութացուցին 95-ը, որ մեզի արժեց աւելի քան 300.000 հայերու կորուստ, չհաշուելով ուրիշ կարգի փճացումները»<sup>1</sup>:

Շարունակելով թեման Եկարյանը պարզաբանում է. «Սխալ չհասկացուինք, սակայն: Մենք դէմ չենք յեղափոխութեան եւ չենք ալ կրնար ըլլայ, բայց այն յեղափոխութիւնը, որ մեր երկու կուսակցութիւններունն էր, բռնազբօսիկ էր, չմտածուած, անժամանակ եւ հիմնուած այն կոյր հաւատքին վրայ, թէ թուրք տէրութիւնը փտտած վերջացած է, ու կարելի է զայն փլցնել քանի մը հրացանով կամ հայ արեան քիչ մը զօրաւոր հեղեղով...»<sup>2</sup>:

Ա. Եկարյանը շոշափում է կարևոր հարց, այն է՝ արդյո՞ք հայերի ջարդերը պայմանավորված էին հայոց հեղափոխությամբ: Այս հարցի շուրջ պատմագրության մեջ եղել են և կան տարբեր դիրքորոշումներ: Կարծում ենք, որ ճիշտ չէ հայերի ջարդերի ողջ մեղքը զցել հայ ազատամարտի վրա, այսինքն՝ այդ ջարդերի պատճառ համարել հայերի ազգային ազատագրական պայքարը: Պարզապես 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում Օսմանյան թուրքիան, կորցնելով իր եվրոպական տիրույթների գերակշիռ մասը և վախենալով շրթայական ռեակցիայից, ինչպես նաև զգուշանալով մեծ տերությունների ավելի ու ավելի հաճախակիացող միջամտություններից, «կծկվեց» ասիական տիրույթներում և իր ամբողջ ջանքերը ներդրեց դրանք պահելու

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 54: Ակնհայտ ու վաղուց ապացուցված ճշմարտություն է, որ հայերի կոտորածներն Օսմանյան կայսրությունում պետականորեն ծրագրված բաղաբականություն էր: Խոսքն այստեղ ընդամենը այդ անմարդկային մեթոդներով Հայկական հարցը լուծելու «գործընթացին» ավելորդ առիթներ տալու մասին է: Նույն տեղում:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 52:

համար՝ ոչ մի խտրականություն չդնելով միջոցների մեջ: Բայց միաժամանակ կարծում ենք նաև, որ, իսկապես, հայ ազատագրական պայքարի տարանջատ դրվագները ջարդերի առիթներ էին տալիս թուրքական կառավարությանը: Սակայն մեկ բան է պատճառը, մի այլ բան՝ առիթը: Իր՝ Ա. Եկարյանի հուշերից ակնհայտ է, որ այդ պայքարը հետևանք էր թուրք-քրդական դաժան քաղաքականության: Ուստի և, նա նույնպես նկատի ունի ջարդերի առիթները (և ոչ պատճառները), քանզի հայ հեղափոխությունը համարում է օրինաչափ: Ակնհայտ է նաև մի բան, որ ջարդերն Արևմտյան Հայաստանում զանգվածային են դառնում հայ ազգային կուսակցությունների գործունեության շրջանում:

Սրանից, հարկավ, չի բխում, որ կուսակցությունները դրանց գնում էին միտումնավոր. պարզապես նրանց անկեղծ գործունեության մեջ հաճախ անտեսված էր սեփական ուժերին ապավինելով գործելու գաղափարը, որի դեպքում ավելի իրական կլինեին հաջողությունը: Փաստորեն այս հայեցակարգն է՝ հուշում Ա. Եկարյանը: Եվ միանգամայն ճիշտ են նրա հետևյալ եզրակացությունները. «Իսկ ինչո՞վ օգնեց մեզի Եվրոպան, որուն վրայ էին դրած մեր յեղափոխականները իրենց ամբողջ յույսը: Ոչնչով, շատ մը կրակոտ ճառեր՝ խորհրդարաններու կամ միթինկներու ամբիոնէն, կարգ մը պաշտօնագրերու փոխանակութիւն, նույնիսկ անգլիական նաւատորմի... միչեւ Տարտանելի ջուրերը գալ ու անմիջապէս յետոյ ետ ընկրկիլ... որովհետեւ, ան չէր կրնար բարձրանալ Արարատը, որուն միւս գառիթափին վրայ կար Լուպանֆի<sup>1</sup> Ռուսիան, որ մայիսի 31-ին բացէ ի բաց յայտարարած էր - «Ոչ մէկ պարագայի տակ Ռուսիա ճնշում գործածելու կը միանայ», եւ վերջացաւ: Ահա թէ ինչու արմենականներս հաստատ մնացինք մեր

<sup>1</sup> Լոբանովն այդ տարիներին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարն էր:

սա տեսակետին վրայ, թէ ինչքան ալ առատորէն թափենք մեր արիւնը, Եւրոպա, երբ իր շահը այդ չի պահանջեր, պիտի չմիջամտէ մեր խնդրոյն ու հետեւաբար պէտք է զգուշանալ զուր տեղ կոտորուելէ եւ տկարանալէ»<sup>1</sup>:

Հատկապես մեր ընդգծածը պատմականորեն հիմնավորված և արդիական հնչեղություն ունեցող եզրակացություն է:

Միանգամայն ճիշտ, բայց ցայսօր քիչ շրջանառված է Ա. Եկարյանի եզրակացությունն այն մասին, թե ինչու՞ Վասպուրականը վերջինը եղավ կոտորված նահանգներից, այն է՝ «այդ կը պարտինք արմենականներուն, որոնք ի գործ կը դնէին առանց աղմուկի եւ ցուցադրութեան զինուելու եւ պատրաստուելու միայն ինքնապաշտպանութեան համար»<sup>2</sup>:

Պատմագիտական հայեցակարգի աղերս ունի նաև նրա տեսակետն այն մասին, որ «Վանի ջարդերը ընդհանուր բնույթ կրող կոտորածներ չէին, այլ՝ թշնամիին հետ յեղափոխական խումբերում հանդիպումներ, եւ այս պատճառով առաջ եկած մասնակի սպանութիւններ, զիւղական շրջաններու մէջ»<sup>3</sup>:

Եվ սա այն պատճառով, որ նախ՝ Վանը համեմատաբար լավ էր նախապատրաստված: Եվ հետո՝ ռուսական Կովկասյան բանակի առաջխաղացումը և հատկապես հայ կամավորների՝ առանձնապես Արարատյան գնդի կողմից ռուսական բանակի դեկավարության հրամանի անտեսումն ու շուտափույթ օգնության հասնելու իրողությունը փրկեցին արդեն գրեթե բոլոր ռեսուրսներն սպառած Վասպուրականի հայությանը:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 55:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 56: Այստեղ ակնհայտ է Եկարյանի կուսակցականությունը: Իհարկէ, անժխտելի է արմենականների մեծ ներդրումը, սակայն ամբողջովին բացառել մյուս ուժերի դերակատարությունը՝ ճիշտ չէ:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 55:

Արմենականների որդեգրած քաղաքական նպատակների մասին Ա. Եկարյանը հետևյալն է գրում. «Գալով ծրագրին՝ հեռու ընկերային բարդ խնդիրները գրչի մէկ հարուածով լուծելու յաւակնոտութենէն... ան կը դաւաներ մէկ բան - արթնցնել հայ ժողովրդեան մէջ ինքնագիտակցութիւնը, դնել զայն ամէն տեղ ինքզինքը պաշտպանելու վիճակին մէջ ու սպասել յարմար առիթի մը, - քաղաքական բարդութեան մը, ուր մտած ըլլար նաեւ Թուրքիան, եւ այն ատեն միայն դուրս գալ միահաղոյն ընդվզումով մը՝ իրականացնելու համար ազգային իտէալը»<sup>1</sup>:

Փաստորեն՝ ա) արմենականները նախատեսում էին գաղտնի գինում՝ ինքնապաշտպանության համար, բ) Օսմանյան Թուրքիայի աննպաստ կացության մեջ հայտնվելու պահին՝ ընդհանուր ապստամբություն:

Սա միանգամայն իրատեսական ծրագիր էր, որն ընդունում էին նաև Դաշնակցության մի խումբ գործիչներ, և որը ողջ ՀՀ-ի համար միայն 1905 թ. սկսած դարձավ գործունեության պարտադիր ուղեցույց:

Հետաքրքիր է, որ Ա. Եկարյանի, Մ. Ավետիսյանի և նրանց նման մտածողների տեսակետները ականա կիսում էին մեծ տերությունների որոշ ներկայացուցիչներ: Վերլուծելով նրանցից Վանի անգլիական հյուպատոս Հովվարդի տեսակետները՝ Ա. Եկարյանը գրում է, որ ըստ նրա՝ «հայ ղեկավարներու ամբողջ ջանքը ըլլալու է կարելի եղածին չափ քիչ կորուստով դուրս գալու աշխատիլ փոխանցման այս շրջանէն, եւ մանաւանդ աշխատիլ չթշնամանալ մնակակից ուրիշ տարրերու հետ:.... Չգրգռել թուրք մոլեռանդ ժողովուրդը ընդհակառակն, սիրաշահիլ եւ զայն բաժնել

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 64:

օրուան կառավարութենէն, ահա անգլիական հիւպատոսին խորհուրդը մեր յեղափոխականներուն»<sup>1</sup>:

Այս գաղափարը, որով Ա. Եկարյանը փորձում է ավելի համոզիչ ներկայացնել հայ ազատագրական պայքարի վերաբերյալ իր համոզմունքները, միանգամայն ճիշտ հետևության տեղիք են տալիս. այն է՝ հայ ազատագրական պայքարը պետք է ընթանար այնպիսի ճանապարհով, որը չհանգեցներ արևմտահայության կոտորվելուն, քայքայելուն և ջլատվելուն: Սակայն բրիտանական դիվանագետի տեսակետն այնքան էլ անկեղծ չէր, որովհետև Անգլիան ընդհանրապես և այդ շրջանում մասնավորապես վարում էր երկդիմի քաղաքականություն. մի կողմից հրահրում էր հայերին նախապատրաստվել, իսկ մյուս կողմից հորդորում՝ չշտապել:

Մենք փորձեցինք առանձնացնել 1885–1896 թթ. տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ Ա. Եկարյանի պատմագիտական հայեցակարգային արժեք ներկայացնող ընդհանրացումները: Քանի որ մեր նպատակն է ներկայացնել Արմենական գործիչների պատմագիտական միտքը ներառյալ մինչև 1908 թվականը, ուստի՝ մեր ուսումնասիրության այս մասը հարկ ենք համարում ավարտել 1908 թ. իրադարձություններին Ա. Եկարյանի տրված գնահատականների վերլուծություններով: Իսկ 1909–1916 թթ. իրադարձությունների մասին Ա. Եկարյանի շարադրանքը, որը խմբագրել է Լ. Աճեմյանը, դուրս է մեր հետաքրքրությունների շրջանակներից, և ավելի մանրամասն դրանց կանդրադառնանք մի ուրիշ անգամ: Միայն ասենք, որ դրանք ավելի շատ նկարագրողական բնույթ ունեն և ավելի շատ կապված են Վանում հետսահմանադրական շրջանի իրավիճակի քննարկման հետ: Այսպես, հետաքրքրությունից գերծ չեն նրա հետևյալ տողերը. «Օս-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 66:

մանեան Սահմանադրութենէն յետո Վանը եռուզեռի մէջ էր. ազատութիւնը թռիչք տուած էր հասարակական գործունէութեան եւ մասնաւորապէս մշակութային գործը արագ թափով մը առաջ կ'ընթանար:

.... Բայց միայն հայը չէր որ տենդոտ աշխատանքի մէջ էր: Թուրք ու քիւրտ տարրերն ալ արտակարգ գործունէութեան մէջ էին եւ կ'աշխատէին ետ չմնալ հայէն: Այդ շրջանին Վան եկած էին իրօքիատական նոր դէմքեր եւ անոնց փրոփականտին ազդեցութեան տակ էր որ կը գործեր տեղացի թուրքը: Տեղացի թուրքին ցուցադրած շարժումը ուրեմն, ինքնեկ չէր, ինչպէս էր հայունը, ոչ ալ ամբողջութեամբ մշակութային: Իրօքիատը իր հեռավոր ծրագիրներն ունէր եւ ասիկա բոլորովին աննկատելի չէր Վանի փորձառու հայութեան համար»<sup>1</sup>:

Այսպիսով, փաստորեն, ա) հայութիւնը սահմանադրութիւնից հետո ապրում էր մշակութային վերելքի շրջան, բ) այդ վերելքը հանդուրժելի չէր քրդի և թուրքի կողմից, որը թաքուն դավեր էր նախապատրաստում:

Կարծում ենք, որ այդ իրադարձության հետ կապված ՀՅԴ դիրքորոշման վերաբերյալ Ա. Եկարյանի արտահայտած տեսակետները դժվար խոցելի են. «Եթէ Դաշնակցութիւնը քաջութիւն մը ունենար եւ օգտուելով իր բացառիկ նպաստաւոր դիրքէն, Պոլսէն սկսեալ մինչեւ գավառները աշխատէր թափանցել իր եղբայրակցին գաղտնիքներուն, ինչպէս եղբայրակիցը ըրած էր իր մասին, ես շատ բան պիտի չունենայի ըսելիք յետսահմանադրութեան իր գործունէութեան մասին»<sup>2</sup>:

Թերևս շատ խիստ է ասված՝ «եղբայրակից», բայց մի բան ակնհայտ է, որ ՀՅԴ-ն 1908 թ. հեղաշրջման և Սահմանադրության


<sup>1</sup> Նույն տեղում, էջ 130-131:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 132:

հռչակման գործում ունենալով իր լուրջ ներդրումն ու դերակատարությունը, հետագայում լրիվ տարվեց մշակութային և խորհրդարանական գործունէութեամբ՝ երկրորդական պլան մղելով ինքնապաշտպանությունը: Եվ միայն երիտթուրքերի հետ հարաբերությունների խզումից հետո (1912 թ.) զգաց, որ լուրջ բացթողում է կատարել՝ կորցնելով նպաստավոր պահն ու պայմանները զինվելու համար: Սա խոստովանել են Ռուբենը, Իշխանը և ՀՅԴ նշանավոր այլ գործիչներ:

Ահա սրանք են այն արժեքավոր պատմագիտական հայեցակարգերին համարժեք հիմնական ընդհանրացումները, որոնք կատարել է Ա. Եկարյանը 1885-1908 թթ. ազգային-ազատագրական պայքարի ընթացքի վերաբերյալ:

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԹԱՆՅԱՆԻ ՊԱՏՄԱՔՆՆԱԿԱՆ  
 ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ  
 ՀԱՅ ԱԶՏԱՍՄԱՐՏԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ



Արմենական կուսակցության գործիչներից Մ. Նաթանյանի «Արմենական կուսակցութիւնը, ծագումէն սկսեալ մինչեւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան կազմութիւնը»<sup>1</sup> աշխատությունը նույնպէս կարևոր է հայ ազգային-ազատագրական պայքարի 1885–1908թթ. շրջանի իրադարձությունները պատմաքննական վերլուծության ենթարկելու և դրանք հնարավորինս ճիշտ գնահատելու համար:

Արևմտահայության ազատագրության գործի նվիրյալ, Արմենական, ապա՝ Հայ Սահմանադրական ու այնուհետև Ռամկավար ազատական կուսակցությունների աննկուն գործիչ Մ. Նաթանյանը ծնվել է Վանում 1867 թ.: Նախնական կրթություն ստացել է Արարատյան միացյալ վարժարանում, ապա՝ Մ. Փորթուգալյանի Կեդրոնական վարժարանում (1879–1885 թթ.): 1887–1891 թթ. քաղաքական հայացքների համար աքսորվել է Կոնիա: 1881–1896 թթ. ապրել ու աշխատել է Վանում: 1896 թ. անցել է Կովկաս: 1897 թ. իբրև ըմբոստ հեղափոխական բանտարկվել է Թիֆլիսում գտնվող Մետեխի բանտում: 1899–1904 թթ. սովորել է Նանսիի (Ֆրանսիա) երկրագիտական բարձրագույն դպրոցում: 1903–1904 թթ. գործել է Եգիպտոսում՝ աշխատելով որպես Ազգային առաջնորդարանի քարտուղար և միաժամանակ՝ Պողոս Նուբարի կալվածքների տեսուչ: Հանդիսանում է ՀՍՈԿ-ի (1908 թ.) հիմնադիրներից: 1910 թ. ստանձնել է Սիրիայի և Կիլիկիայի 42 ուսումնական տարբեր հաստատությունների կրթական տեսուչի պաշտոնը: 1919 թ. նշանակվել է հայկական ջարդերի պատասխանատուները ճշտող Հալեպի հարցաքննիչ հանձնախմբի անդամ, որի տեղեկագրի հիման վրա անգլիական իշխանությունները դատապարտում են Հալեպի

<sup>1</sup> Տես Միքայել Նաթանյան, Արմենական կուսակցութիւնը, ծագումէն սկսեալ մինչեւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան կազմութիւնը, խմբագրութիւն եւ ներածութիւն Տիգրան Գէորգեանի, Գահիրե, 1990:

ջարդերն իրականացնողներին: Կիլիկիայի հայաթափումից հետո անցել է Կահիրե (1920 թ.), որտեղ ապրել է մինչև 1933 թվականը՝ վարելով «Արեւ» թերթի խմբագրի պատասխանատու պաշտոնը: Այնուհետև ՀԲԸՄ-ի կողմից նշանակվել է Ալեքսանդրեթի գավառի և Սիրիայի 130 կրթական հաստատությունների տեսուչ, մինչև 1945 թ.: Եղել է ՌԱԿ-ի նշանավոր անդամներից: Վախճանվել է 1954 թ.:

Միքայել Նաթանյանի աշխատասիրած գործը արժեքավոր է և գնահատելի երեք տեսանկյունից. ա) այն պատմագիտական ուսումնասիրություն է, ընդ որում բավական անաչառ և հաջողված, բ) ունի հուշագրային սկզբնաղբյուրի արժեք, որովհետև ներկայացնում է հեղինակի հուշերն ազատագրական պայքարի իր մասնակցած դրվագների վերաբերյալ, գ) պարունակում է արխիվային նյութեր Արմենական, ՀՍՌ և ՌԱ կուսակցությունների ձևավորման պատմության մասին, ծրագրային փաստաթղթեր, շրջաբերականներ և այլ բնույթի սկզբնաղբյուրներ:

1885–1908 թթ. հայ ազգային–ազատագրական պայքարի պատմության այս նշանավոր կուսակցական (արմենական, ապա՝ ռամկավար), հանրային քաղաքական և մշակութային գործչի վերլուծականները օգնում են ճիշտ պատկերացում կազմել հայ ազատագրական պայքարի արմենական ըմբռնումների, նրա մարտավարության՝ մյուս երկու կուսակցությունների մարտավարություններից տարբերվող հիմնական կողմերի, այդ պայքարի քիչ արդյունավետության պատճառների և տարաբնույթ այլ խնդիրների վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ, Արմենական կուսակցության գործունեության պատմության և ողջ հայ ազատագրական պայքարի ետնախորքի վրա դրանց գնահատականը տվել են նաև նախորդ գործիչները, որոնց անդրադարձանք: Եվ այդ գնահատականներ

րում կան շատ ընդհանրություններ, բայց տեսակետների հիմնավորումների առումով երբեմն դրանք խոցելի են: Մ. Նաթանյանի հիմնավորումները հազվագյուտ դեպքերում են անհամոզիչ, խելացի են և գնահատելի՝ հայ ազատագրական պայքարի առավել արդյունավետ ուղին ընկալելու տեսանկյունից:

Աշխատության ներածականում («Նօթեր և նիւթեր ժամանակակից պատմութեան համար») արդեն նա կատարում է հարցադրումներ՝ դրանց ճշմարիտ պատասխանների որոնման ջանքերով: Եվ այդ պատասխանների հետ գրեթե անհնար է չհամաձայնել: Անհնար է չհամաձայնվել նրա այն հիմնավորման հետ, թե ինչու ձախողվեց հայ ազատագրական պայքարը, ինչու՞ կորցրինք Արևմտյան Հայաստանը, այն է՝ «հայկական ազատագրական շարժումը ձախողեցավ քաղաքական եւ աշխարհագրական բազմատեսակ աննպաստ բարդ պատճառներով, որովհետև մեր քաղաքական յեղափոխականները՝ որոնց ղեկավար դեմքերէն շատեր թրքահայաստանցի (արևմտահայ – Ս. Ս. ) չըլլալով, ի սպառ անծանօթ երկրին ճշգրիտ պայմաններուն եւ նույնքան տգէտ արտաքին քաղաքական իրադարձութեանց, չկրցան նախատեսել եւ պէտք եղած կերպով առաջնորդել մեր ազատագրական գեղեցիկ՝ բայց խութերով եւ խոչընդոտներով լի շարժումը, եւ յաճախ խուլ մնացին ողջամտութեան թելադրանքներուն»<sup>1</sup>:

Այս տեսակետը նոր չէ, և այն արտահայտել են նաև արմենական նախորդ հեղինակները: Սակայն միանգամայն նոր են և գնահատելի այս տողերին հաջորդող հետևյալ եզրահանգումները. «Սակայն ասոնք պատճառ մը չէն, որ առանց այլեւայլի դատապարտենք հայ յեղափոխութիւնը ու յեղափոխականները, չգնահատենք շարժումի ոգին, ճշմարիտ եւ գիտակից յեղափոխականներ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ ԺԸ:

րու աննման զոհաբերութիւնները, որոնք եթէ՝ ըստ այդ քննադատներուն, անօգուտ ալ անցան բուն նպատակին տեսակէտով, բայց իրենց բարոյական նշանակութեամբ ու ազդեցութեամբ՝ կարծուածին չափ ապարդիւն չանցան եւ պիտի չըլլան»<sup>1</sup>:

Իսկապէս, անկախ այն հանգամանքից, որ հայ ազատամարտն ավարտվեց ոչ արդյունավետ, անհնար է ժխտել այն կերտողների անձնագոհությունը և անօրինակ նվիրումը հայոց ազատագրության դատին: Ճշմարիտ է, մեծ տերությունների միջատությանը հասնելու հույսով կազմակերպված շատ ցուցադրական և ահաբեկչական գործողություններ հաճախ միայն այն հետևանքն էին ունենում, որ անտեղի մահվան էին տանում հայ երիտասարդությանը, բայց այդ գոհողությունների քարոզչական նշանակությունը չի կարելի ուրանալ:

Տրամաբանական է նաև Մ. Նաթանյանի այն կարծիքը, թե անկախ նրանից հայ ազատամարտն ինչպես ավարտվեց, միևնույն է, Առաջին համաշխարհային պատերազմի թոհուրոհում ոչ միայն հայության նման «փոքր եւ լքուած ժողովուրդ մը, այլևս մեզմէ անհամեմատօրէն աւելի մեծ եւ զօրաւոր ազգեր՝ ինչպէս Աւստրիա-հունգարական կայսրութիւնը, պիտի սարսէին»<sup>2</sup>:

Հարկավ, Առաջին համաշխարհային պատերազմը մեծ դժբախտություն բերեց հատկապէս փոքր ազգերին: Հայության քաղաքական աննպաստ կացության պայմաններում անհնար էր չճաշակել ողբերգություններ: Բայց այստեղ պետք է ունենալ մի փոքր վերապահություն, այն է՝ առավել խոհեմ և մեծ տերությունների ու մասնավորապէս ցարիզմի դավադիր քաղաքականությունը ճիշտ ընկալելու պայմաններում (որի համար կար անհրաժեշտ

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ ԺԹ:

պատմական փորձը) հնարավոր էր առավել քիչ գոհողություններով դուրս գալ այդ պատերազմից:

Մ. Նաթանյանը չի սխալվում՝ գտնելով, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հայ ժողովրդի միանգամայն արդարացի պայքարի արդյունքում և մեծ տերությունների ճնշումներին ստիպված տեղի տալով էր, որ Արևմտյան Հայաստանի վեց նահանգների համար նշանակվել էին եվրոպացի կառավարիչներ, և Թուրքիան ընդունել էր բարենորոգումների ծրագիրը. «Ռուսիոյ պաշտպանութեամբ եւ Մեծ պետութիւններու հավանութեամբ»<sup>1</sup>, որը, սակայն, ձախողվեց պատերազմի սանձազերծման հետևանքով:

Սակայն, ո՞վքեր սկսեցին պատերազմը: Հասկանալի է, որ նույն Ռուսաստանը և եվրոպական մեծ տերությունները:

Գնահատելի է այն, որ Մ. Նաթանյանը կարծում է, թե հայ քաղաքական ղեկավարների զգալի մասը թերի պատկերացում ուներ «մեր թշնամիին զօրութեան եւ քաղաքական տիրող պայմաններուն մասին»<sup>2</sup>: Բայց դրանով հանդերձ անհնար է վիճարկել նրա այն տեսակետը, որ տեղին չի քննադատել իրենց կյանքն ու հարստությունը հայոց ազատագրության զոհասեղանին նվիրած հերոսական սերնդին: Պայքարի արդյունավետության հարցի քննարկումը երբեք չպետք է ընթանա այնպիսի եզրակացության հանգեցնելու հունով, որ այդ պայքարի բազում զոհերն իրենց ընտրած, թեկուզև ոչ արդյունավետ ճանապարհի մեծ նվիրյալները չէին: Ուստի և, «Քննադատելի պետք է գտնել միայն անցեալ եւ ներկայ դառն փորձառութիւններէն օգտակար եւ հրահանգիչ դա-

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

սեր չուզելը եւ փորձուած ու վնասակար տեսնուած սխալներու վրայ յամառած մնալը...»<sup>1</sup>:

Այժմ փորձենք գնահատել աշխատության հիմնական, առանցքային մասերը: Մ. Նաթանյանի աշխատասիրած երկի առաջին գլուխը նվիրված է Վանում ազատագրական պայքարի նախնական ձևավորման շրջանին (1878–85 թթ.): Այդ զարթոնքը ներկայացնելով՝ հեղինակը փաստորեն տալիս է Արմենական կուսակցության սկզբնավորման նախադրյալները կամ նախապայմանները: Հետաքրքիր է, որ Մ. Նաթանյանը 1885 թվականը համարում է Արմենական կուսակցության «պաշտոնական» սկզբնավորության տարի: Նա այդ անում է՝ գտնելով, որ փաստացի «ազգային յեղափոխության գաղափարը» արդեն սկզբնավորվել էր 1878 թ., և այդ գաղափարի շուրջ միավորվել էր Փորթուգալյանի և Մ. Խրիմյանի հայրենաշունչ քարոզներով վերափոխված երիտասարդական լայն զանգված: Այդ քարոզների գլխավոր ազդակներից մեկը Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի փաստացի ծախսողումն էր, որն ստիպեց հայոց ազատամարտի նվիրյալներին փարվել գինված պայքարի գաղափարին և Մ. Խրիմյանի հանրահայտ «երկաթե շերեփի» կոչին<sup>2</sup>: Մ. Նաթանյանը ճիշտ է ընկալել այդ կոչը «որուն իմաստը սա էր՝ թէ առանց այդ իրական պատրաստության եւ զօրավոր պայքարի կարելի չէր անկախութիւն ձեռք ձգել, ինչ որ հայկական դատին յաջողութեան տեսակէտով իրատես թելադրութիւն մը կը հանդիսանար»<sup>3</sup>:

Իսկապես մի բան արդեն ըմբռնելի էր, որ զուտ աղերսանքով անհնար էր հասնել հաջողության կամ քրիստոնյա մեծ տերությունների կարեկցության: Պետք էր ստիպել հաշվի նստել հայ

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Մանրամասն տես՝ Է. Կոստանդյան, Մկրտիչ Խրիմյան հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 1-2:

ժողովրդի ազատագրական պայքարի հնարավորությունների հետ: Սակայն, դժբախտաբար, այս ըմբռնումն ազատագրական շարժումն ընդհանուր կամ միասնական պայքարի հունով գրեթե չտարավ և շատերի մոտ, պայքարի աղմուկը մինչև Եվրոպա հասցնելը նույն Եվրոպայի կողմից կամ նրա օգնությամբ ազատագրվելու թյուր համոզմունքն արմատավորեց: Արդյունքում՝ ազատագրական պայքարի դիմելու անհրաժեշտության գաղափարը կյանքի չկոչվեց ազգային հնարավորությունների ճիշտ հաշվառումով, այդ պայքարի արդյունավետության հարցը ազգային ներուժի հետ կապվեց մակերեսորեն և ոչ խորը, այլ հիմնականում՝ մեծ տերությունների: Այլ կերպ ասած՝ հայ ազատագրական պայքարի ընթացքն ինչ-որ տեղ դարձավ կախյալ մեծ տերություններից: Սա անվիճելի ճշմարտություն է գոնե մինչև 1904 թ. սազատագրական պայքարը ներառյալ:

Այդ կախյալությունը չի ընդունում նաև Մ. Նաթանյանը, բայց այդ մասին քիչ անց: Մինչև այդ՝ շեշտենք, որ նա միանգամայն իրավացի է, երբ գտնում է, որ եթե մինչև 1878–80 թթ. Հայկական հարցը սահմանափակվում էր Կ. Պոլսի Պատրիարքարանի շրջանակներում, ապա՝ այդ թվականներից այն փոխադրվում է գավառներ, «ժողովրդականանում» և ձեռք բերում նոր բովանդակություն: Հենց այդ գործընթացն էլ հանգեցնում է հայ կուսակցությունների ձևավորմանը և ազգային-ազատագրական պայքարի վերելքին:

Գնահատելի է, որ հենց այդ տարիների Վանի զարթոնքը նկարագրելիս Մ. Նաթանյանն իրական գույներով է ներկայացնում մեծ տերությունների հակասական քաղաքականությունը: Այսպես, ռուսական կառավարությունը 1877–78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո գնդապետ Կոստանդին Կամսարականին նշանակում է Վանում փոխիյուպատոս: Անգլիական իշխանություն-

ներն էլ հյուպատոս են նշանակում հարյուրապետ Քլեյթընին, որը հաստատվում է ճիշտ Կանսարականի բնակարանի դիմաց: «Ու անոնք, - գրում է Մ. Նաթանյանը, - պահելով հանդերձ դրացիական քաղաքավար յարաբերութեանց բոլոր երեւոյթները, հակոտնեայ քաղաքականութեանց այդ ներկայացուցիչները, բնականաբար ջանացին իրարու գործը ջլատել եւ չեզոքացնել»<sup>1</sup>:

Եզրակացությունը պարզ է. մեծ տերությունների շահերն ստիպելու էին նրանցից որևէ մեկին պաշտպանել Օսմանյան Թուրքիային մյուսից, և ստիպող կողմի համար երկրորդական էր դառնալու Հայկական հարցը:

Մ. Նաթանյանը սա լավ է հասկացել: Բայց Արմենական կուսակցությանը նախորդող զարթոնքի փուլում ազատագրական գաղափարներով տոգորված Կանի երիտասարդությունը հանդես էր բերում մտավոր կարճատեսություն, ոգևորված էր քաղաքական ռոմանտիզմով, մասնավորապես եվրոպական տերությունների հետ ակնկալիքների առումով և չէր կարողանում ըմբռնել այդ պարզ ճշմարտությունը: Ահա այդ մասին Մ. Նաթանյանի դիպուկ բնորոշումը, որն ունի հայեցակարգային նշանակություն. «Գինովութեան, յափշտակութեան եւ վառ ու յորդ գգացումներու հով մը կը փչէր, եւ ամէն ինչ վարդագոյն կը թուէր: Եւրոպական թերթի մը քանի մը տողերը, այս ու այն դիվանագէտին կամ քաղաքական անձնավորութեան մէկ խոսքը ամէնուն այն հավատը կը ներշնչէր թէ՛ այդ կերպով հնարաւոր կըլլայ հայկական հարցին արժանաւոր եւ արդար լուծում մը ձեռք բերել... դիրութեամբ»<sup>2</sup>:

Պատահական չէ, որ նա այդ շրջանը համարում է հայ քաղաքական կյանքի «երջանիկ անգիտութեան շրջանը», որովհետև թե՛ ժողովուրդը և թե՛ նրա քաղաքական ղեկավարները անկարող

գտնվեցին նախատեսելու բոլոր այն դեպքերը, «քաղաքական ծախողութիւնները եւ արիւնոտ յուսահատութիւնները, որոնք հակառակ ազգին եւ հայ յեղափոխական կազմակերպութեանց ըրած անօրինակ զոհողութիւններուն, մնացին կիսատ, չըսելու համար ապարդիւն՝ Թրքահայաստանի ազատագրութեան տեսակէտով»<sup>1</sup>:

Իսկապես, զոհողությունները չտվեցին անհրաժեշտ հետևանքները, և դրանում իրենց բացասական դերակատարությունն ունեցան մեծ տերությունները: Սակայն, 1885 թ. Կանում սկզբնավորված Արմենական կուսակցության գործիչներն այդ քաղաքականության ընկալման առումով առավել ընդունակը գտնվեցին: Եվ դրանում անուրանալի դեր ունեցավ նրանց հոգևոր հայրը՝ Մ. Փորթուգալյանը: Արմենական կուսակցության ձևավորման գործում վերջինիս ունեցած դերակատարության առումով ևս Մ. Նաթանյանն արտահայտում է պատմականորեն հիմնավորվող տեսակետ, այն է՝ «Մ. Փորթուգալեան իր «Արմենիա»-ով, ուղղակի եւ անմիջական հիմնադիրը չեղաւ անդրանիկ հայ յեղափոխական թերթին պէս նաեւ անդրանիկ հայ յեղափոխական կազմակերպութիւնը եղող «Արմենական» կուսակցութեան: Բայց սա բացորոշ է՝ թե՛ այդ կուսակցութեան կազմութեան ներշնչողը եղաւ ան, նույնիսկ դեռ Մարտէյլ չհաստատուած եւ Կան գտնուած ատեն»<sup>2</sup>:

Մ. Նաթանյանը համոզված հայտարարում է, թե Մ. Փորթուգալյանն առաջինն էր, որ հասկանալով օտար պետությունների նկատմամբ տածած հույսերի սին լինելը և այն, որ ազատությունը կամ անկախությունը խոսքով կամ համակրանքով չի տրվում, այլ առնվում է ուժով, համախմբվածությամբ և կազմակերպված պայքարի միջոցով, դրանով դաստիարակեց մի ամբողջ սերունդ, որը

<sup>1</sup> Նույն տեղում: Այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 5:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 13-14:

նրա գաղափարները կյանքի կոչելու մղումով հիմնադրեց Արմենական կուսակցությունը:

«Վերջապես անոր (Մ. Փորթուզալյանի – Ս. Ս.) քարոզուն հետեւած եւ հետապնդած սկզբունքներուն համաձայն է նույնպէս, - գրում է նա, - որ Մ. Աւետիսեանի (Մկրտիչ Ա. Թէրլէմէզեան) եւ ընկերներու ձեռքով սկիզբը դրուեցաւ «Արմենական» կուսակցութեան, որ միանգամայն հայ յեղափոխական միակ կազմակերպութիւնը եղաւ, որ իր ծրագրով եւ գործունէութեամբը ամենէն իրատեսքը, քիչ միջոցի մէջ անսպասելի ծաւալում մը ունեցաւ Վանայ, Վասպուրականի եւ Պարսկահայաստանի (Ղարէժ-Սալմաստ-Ուրմի) շրջանակին մէջ»<sup>1</sup>:

Ինչպէս տեսնում ենք, Մ. Նաթանյանը ամենևին չի գերազնահատում իր կուսակցության հնարավորությունները, այլ ընդունում է, որ այն թեպետ իրատեսական գործունէություն էր ծավալել, սակայն բավականին նեղ էին այդ գործունէության շրջանակները: Արմենականների իրատես լինելը Մ. Նաթանյանը փորձում է ապացուցել մյուս երկու՝ ՍԴՀ և ՀՅԴ կուսակցությունների գործունէության և ծրագրային դրոյթների հետ զուգահեռներ անցկացնելով: Այսպէս, անդրադառնալով Հնչակյան կուսակցության ձևավորմանը, նա այն կարծիքն է արտահայտում, որ վերջինիս կողմից օտար ազդեցությամբ ընկերվարական գաղափարների որդեգրումը միանգամայն անհամատեղելի էր Հայկական հարցի կամ հայ հեղափոխական շարժման հետ հետևյալ պատճառներով. ա) Թուրքիայում զարգացած, թերևս ձևավորված էլ չէին դրամատիքական կամ կապիտալիստական հարաբերությունները, հայությունը չունէր դասակարգային պայքարի խնդիր (և ոչ միայն հայությունը), չկային կապիտալիստ-դրամատեր և գործավոր-բանվոր

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 14-15:

հարաբերություններ՝ շահագործողական մեխանիզմով, մարքսիստական գաղափարախոսությունն այնտեղ արմատավորվելու համար հիմքեր չունէր, բ) հայությունը ծայրահեղ հետամնաց Թուրքիայում դաժանորեն կողոպտվում, թալանվում և հարստահարվում էր, ենթարկվում էր էթնիկական խտրականության և անմարդկային ճնշման ու նախ և առաջ նրան անհրաժեշտ էր ազգային ազատագրություն:

Բավականին իրատեսական և միանգամայն հասուն գնահատական է Մ. Նաթանյանի հայտնած հետևյալ տեսակետը. «Ռուսիոյ համեմատաբար հանգիստ եւ եւրոպական ազատ միջավայրերու մէջ աչք բացած, անոնք (հնչակյանները – Ս. Ս.) իսպառ անգիտակ թրքահայ իրականութեան, արդարեւ կը մոռնային թէ Հայաստանի մէջ հող կա պուրժուայի ու պրոլետարի հարցեր ունենալու համար, ամէն րոպէ առաջ հարկ էր ջախջախել թրքական լուծը, ստեղծել ապրելու բնական վիճակ մը՝ ապահովութիւն, հաղորդակցութեան միջոցներ, խճուղի եւ երկաթուղի, ունենալ խոշոր դրամազուլիներ, հիմնել գործարաններ, այդ գործարաններուն համար ունենալ աշխատողներ՝ հարիւրներով եւ հազարներով, վերջապէս ունենալ ճարտարարուեստի ճշմարիտ ձեռնարկներ... անկէ վերջ զբաղելու համար դրամազուլիի եւ սպառումի միջեւ եղած տարբերութիւններով եւ ակնհայտ անիրաւութեանց դարմանումի բարդ հարցերով, զորս անկէ կէս դար ետք անգամ չեն յաջողած դէռ արմատապէս լուծել Եւրոպացիները եւ Ամերիկացիները նունիսկ ընկերվարութենէն աւելի ծախակողմեան եղող համայնավար սկզբունքներով»<sup>1</sup>:

Իսկապէս, հատկապէս մեր ընդգծած տողերը պարունակում են միանգամայն նոր և հիմնավոր ընդհանրացումներ:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 12-13:

Մարքայան սոցիալիզմը այդպես էլ իրականություն չդարձավ դասակարգային պայքարի արդյունքում նույնիսկ ամենազարգացած կապիտալիստական երկրներում: Իսկ բոլշևիկյան սոցիալիզմը մարքսիզմի թերի յուրացումներով ոչ թե դասակարգային պայքարի հետևանք էր, այլ իշխանության բռնազավթման: Եվ այս ամենից կարելի է եզրակացնել, որ, իրոք, միանգամայն չհիմնավորվող էր Արևմտյան Հայաստանում սոցիալիզմի հասնելու հնչակյանների ձգտումը, թեկուզ և եթե փորձ արվեր այն կառուցելու Արևմտյան Հայաստանի ազատագրումից հետո, որպես մաքսիմում նպատակ (ինչպես ձևակերպված է այդ կուսակցության ծրագրում): Այս առումով երկրորդ կարծիք լինել չի կարող: Ի վերջո, չպետք է մոռանալ նաև, որ հիմնականում այս հողի վրա 1896 թ. Լոնդոնում այդ կուսակցությունը պառակտվեց:

Տրամաբանություն կա նաև ՀՅԴ կուսակցության գաղափարական դրույթների վերաբերյալ Մ. Նաթանյանի որոշ դիտարկումներում: Լինելով բավական անաչառ վերլուծաբան՝ նա ընդունում է, որ «Ղաշնակցութիւնը մեր մէջ եղաւ ամենէն զորաւորը, ազդեցիկը, տարածուածը եւ ըստ կարի՝ կուսակցական կարգապահութեան ընդունակը, այնքան անշուշտ՝ որքան կը ներեն հայ նկարագիրը եւ իրականութիւնը»<sup>1</sup>:

Փոքր-ինչ վերապահությամբ կարելի է ընդունել նաև նրա հետևյալ գնահատականի ճշտությունը. «Ղաշնակցութիւնը իր կովկասահայ եւ Թրքահայաստանը չճանչցող վարիչներով անհաշիւ եւ անելի ցուցային գործունէութեամբը փոխանակ Հայկական Ղատին օգտակար ըլլալու, վնասակար եղաւ, ի գուր վատնելով իրենց հաւատացող հարիւրաւոր հետետորդներուն աւիւնը, անձնուիրութիւնը եւ արիւնը, որոնք հիացում միայն կ'առթեն»<sup>2</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 15–16:

Վերապահությունը վերաբերում է հետևյալին. ողջ Ղաշնակցությունը չէ, որ հակված էր ցուցական գործունեության: Նրա մեջ ի սկզբանե կային գործիչներ, որոնք իրենց մտածողությամբ հիշեցնում էին արմենականներին (Հրայր, Գուրգեն, Վահան և այլք): Բացի այդ, այն տպավորությունն է ստացվում, որ այդ կուսակցությունը դիտավորյալ կերպով էր հեղում հայ դատին նվիրյալների արյունը, ինչը ճիշտ չէ իհարկե: Պարզապես ընտրված մարտավարությունը, որն արդյունավետ դուրս չեկավ, ուներ իր բազում հավատացյալները: Չպետք է նաև անտեսել մի հանգամանք, որ այդ մարտավարությամբ առանձին կոմիտեներ առաջնորդվում էին (մասնավորապես 1898 թ. երկրորդ ընդհանուր ժողովից հետո)՝ անտեսելով կենտրոնի դիրքորոշումը և ընդհանուր ժողովի նոր որոշումները:

Մ. Նաթանյանը գտնում է, որ ավելի խոհեմ գործելակերպի դեպքում Ղաշնակցությունն իրեն նվիրված ուժերով «իրաշքներ պիտի գործեր»: Թերևս «իրաշքներ» ասելով չափազանցության գիրկն է նետվում, քանզի Արևմտյան Հայաստանում գործելու բարդ պայմանները բացառում էին դրանք: Բայց, որ առավել արդյունավետ կլինեի այդ կուսակցության առաջնորդած պայքարը, անվիճելի է: Որ իսկապես իրաշքներ գործել դժվար խնդիր էր, ականա հաստատում է ինքը՝ Մ. Նաթանյանը՝ գրելով՝ «Իր մտադրութիւնները (Հ. Յ. Ղաշնակցության – Ս. Ս.) գործադրութեան չդրուած, ականջը կը հասնէին թշնամիին, որ զայնս ի դերեւ կը հանէր արիւնահեղ հակադարձութեամբ մը ....»<sup>1</sup>:

Սա հենց վկայում է հայ ազատամարտի առջև ծառայած բազում խոչընդոտների մասին:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 16:

Դրվատելի է, որ քննադատելով Ղաշնակցությանը, Մ. Նաթանյանը ընդունում է, որ նրա մեջ «սթափում» է տեղի ունեցել «ոչ թե Ղաշնակցութեան քանդումին տեսակէտով, այլ անոր բարեփոխութեան եւ ազգային օգտակարութեան համար...»<sup>1</sup>:

Սա արդեն նշանակում է, որ նա իր քննադատությունների մեջ չի հասնում ծայրահեղության և առաջնորդվում զուտ կուսակցական մտածումներով, այլ ազգին առավել օգտակար լինելու սկզբունքով և ցանկությամբ: Մի բան, որ չես կարող պնդել շատ այլ կուսակցական գործիչների ու հուշագիր-ուսումնասիրողների վերաբերյալ, որոնք մյուս կուսակցությունների գործունեության մեջ ուզում են տեսնել և անպայման ընդգծել միայն բացասականը:

Աշխատության Դ գլխում Մ. Նաթանյանը նկարագրում է արմենականների գործունեությունը և առհասարակ Վանի իրավիճակը 1880-ական թթ. երկրորդ կեսին: Հատկապես գնահատելի են Մ. Ավետիսյան-Թերլեմեզյանի Վանում կատարած կազմակերպչական աշխատանքների նրա գնահատականները: Ըստ նրա՝ այս անձնավորության ջանքերի արդյունք էր այն, որ Վանի երիտասարդությունը, «որուն գլխավոր գեղունն ու նպատակը եղած էր միայն կերուխումը եւ թաղային կռիւները» համախմբվեց ազատագրական գաղափարների շուրջը՝ դառնալով արմենականների կարևորագույն մի մասը: Մ. Փորթուզայանի հետնորդները, որոնց Մ. Նաթանյանը կոչում է «Փորթուզալեաններ», այս երիտասարդներին կրթում են և դաստիարակում: Նրանք Հայնկույսների թաղի եկեղեցուն կից ծխական վարժարանում բացում են կիրակնօրյա վարժարան, «ուր ամէն Կիրակի, կէսօրեն ետք, ձրիաբար հայերէնի, պատմութեան, թվաբանութեան եւ գրավարժութեան դասեր կը տրուէին անոնցմէ փափաքողներուն»<sup>2</sup>:

Այս վարժարանում կրթվելու արդյունքում էր, որ իրար հետ անընդհատ վեճերի և կռիվների բռնվող երիտասարդները «գաղափարական եւ ընկերական անքակտելի կապերով իրարու կապուեցան»<sup>1</sup>:

Կիրակնօրյա վարժարանի գլխավոր նախածեռնողը Մ. Ավետիսյանն էր, որն ուներ մեծ հմայք և ազդեցություն: Եվ փաստորեն, ըստ Մ. Նաթանյանի, Կիրակնօրյա վարժարանը Կենտրոնական վարժարանի փոխարինողն էր: Մ. Նաթանյանի տեղեկությունները հիմք են տալիս անելու հետևյալ հետևությունը, որ Վանում ազատագրական պայքարին նախորդող շրջանը (կամ գաղափարական արթնացման շրջանը) Մ. Փորթուզայանի շնորհիվ ապրել է զարթոնք, իսկ Մ. Ավետիսյանի ջանքերի արդյունքում հասունություն: Պատահական չի, որ նա գրում է. «Կիրակնօրյա Վարժարանը իր ուղղութեամբը եւ ձգտումովը տեսակ մը լրացումը եւ շարունակութիւնը եղաւ փակուած եւ խափանուած Կեդրոնականին, որուն ընթացաւարտ կամ անաւարտ ուժերուն իրենց գաղափարակցական նմանութեամբը եկան միանալ նաեւ Կիրակնօրեայի եւ անոր անհամար համակիր, թարմ, անձնուէր, պատուական ուժերը՝ այլեւս անբաժան իրարմէ»<sup>2</sup>:

Իր ուսումնասիրության մեջ Մ. Նաթանյանը տալիս է Արմենական կուսակցության ազատագրական պայքարի առաջին քայլերից մինչև ամենավերջին գործողությունների նկարագրությունը՝ միաժամանակ գնահատելով դրանք: Եվ հատկապես սրանում է կայանում այդ ուսումնասիրության պատմագիտական արժեքը:

Արմենականների առաջին հեղափոխական քայլը կամ ծեռնարկը նա համարում է Մ. Փորթուզայանի աշակերտներից Հովհաննես Ագրիպայանի և նրա ընկերներ Կարապետ Գուլաքսըզ-

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 18:

<sup>2</sup> Նույն տեղում:

յանի և Վարդան Գոլոշյանի Չուխ Կետուկում թուրք ոստիկանների հետ ունեցած կռիվը և նահատակությունը:

Նա միանգամայն ճիշտ է գնահատում այս ընդհարման հետևանքները: Ըստ նրա՝ մինչ այդ Վանի արմենականները Րաֆֆու և մյուսների վեպերի ազդեցության տակ էին (այդ թվում և նահատակվածները) և հեղափոխությունը պատկերացնում էին տեսականորեն՝ չխորհելով նրա վտանգավոր կողմերի մասին: Այս դեպքից հետո արմենական երիտասարդությունը, որը մինչև այդ գոհողության դաշտ էր ընտրել բանտն ու աքսորը, մղվեց պատրաստվելու և հարկ եղած պարագային պայքարելու «բռնապետության դեմ ի սէր հայրենիքին»<sup>1</sup>: Եվ սկզբնական շրջանում նա պայքարի գնաց ոչ խոհեմ և կշռադատված քայլերով: Այդ քայլերը նախատեսում էին փոխվրեժ՝ բանտարկված ավագակապետ Ավոյի մեթոդներով: Վերջինս Ռուսաստանի և Պարսկաստանի սահմանազուլխների գավառներն ահ ու սարսափի մեջ էր պահել իր ավագակային խմբով: Արմենականները ծրագրում են նրան փախցնել բանտից և նրա ընկերությամբ կազմել ուժեղ հրոսակային խումբ՝ թուրքերին և քրդերին երկյուղի մեջ պահելու և հայկական գյուղերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով: Այս մտահղացումը Մ. Նաթանյանը համարում է «անիմաստ եւ չկշռուած արարք», որովհետև այն ոչ մի դրական արդյունքի չի հանգեցնում: Նրա հեղինակները (Գարեգին Բաղեշյան, Կարապետ Զարեհյան, Արմենակ Եկարյան և այլք) թեև փախցնում են Ավոյին, բայց Աբաղայի մեջ ձերբակալվում են: Փաստորեն արմենականների գործունեությունն էլ սկզբնական շրջանում կրում է հայդուկային նկարագիր, բայց նմանօրինակ պայքարի անարդյու-

նավետության գիտակցումը նրա ղեկավարների կողմից նպաստում է դրանից արագորեն հրաժարվելուն:

Մ. Նաթանյանը չի սխալվում նաև, երբ գրում է, որ Հայկական հարցն իր «ծագումի և իսկութեան» մեջ բարենորոգումների հարց էր:

Իրոք, հայ քաղաքական ղեկավարները բարենորոգումների պահանջից այն կողմ չեն անցել: Իսկ ազգային կուսակցությունները, չնայած իրենց ծրագրում դրել են տնտեսական և քաղաքական ազատության կամ անկախության հարցեր (մասնավորապես ՍԴՀ և ՀՅԴ կուսակցությունները), բայց գործնականում նրանք առաջնորդվել են առավելագույնը ինքնավարության պահանջով:

Մ. Նաթանյանը կարևորագույն տեղեկություններ է հաղորդում կուսակցությունների կազմակերպչական ընդգրկվածության կամ սահմանների վերաբերյալ: Նա այն կարծիքն է հայտնում, որ Վանի մեջ Հնչակյան կուսակցության առաջին կառույցը ստեղծել է Հ. Երամյանը: Վերջինիս և իր խումբը ազատագրական պայքարի առումով նա համարում է ծայրահեղ պահպանողական, որը բացատրում էր նրանց պահվածքով և ծավալած միայն կրթական գործունեությամբ: Ըստ նրա՝ Հնչակյան կուսակցությունը առավել լուրջ նկարագիր է ձեռք բերում հատկապես Մարտիկի՝ 1895 թ. ձմռանը Վանում հաստատվելուց հետո: Դրանով հանդերձ, նա այն ճիշտ տեսակետն է հայտնում, որ այդ կուսակցությունն իր տարածական սահմաններով և ազդեցությամբ միշտ զիջում է արմենականներին և դաշնակցականներին<sup>1</sup>: Մ. Նաթանյանը չի սխալվում նաև, երբ գրում է, որ Հնչակյան կուսակցությունը համեմատաբար ազդեցիկ էր Կ. Պոլսում, Կիլիկիայում և Փոքր Հայքում:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 22:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 25:

Հետաքրքիր է նրա հայեցակարգային գնահատականը ՀՅԴ կուսակցության մասին, այն է՝ Դաշնակցություն կուսակցությունը ունեցել է ծայրահեղ, երբեմն չհամադրվող գաղափարական ուղղվածություններ (ծայրահեղ ընկերավարությունից մինչև ծայրահեղ ազգայնականություն), միշտ որպես ղեկավարներ ունեցել է արևելահայերին, իսկ արևմտահայերը, մնալով նրանց հյու կամակատարները, երբեմն տուժել են որդեգրված որոշ սխալների հետևանքով:

Թերևս նրա այս տեսակետը այնքան էլ հեռու չէ իրականությունից:

Ինչպես Ա. Դարբինյանը, Մ. Նաթանյանը նույնպես դրվատանքով է խոսում դաշնակցական այն գործիչների մասին (արևմտահայ կամ արևելահայ), որոնք ընտրել էին զուսպ և անաղմուկ գործելակերպ: Վանում այդ առումով աչքի էին ընկնում Պետրոն և Վազգենը, որոնք համագործակցում էին թե արմենականների և թե հնչակյանների հետ: Նրանց տրված գնահատականներում Մ. Նաթանյանը չի սխալվում, քանզի այդ համագործակցության արդյունքում էր, որ Վանը գերծ մնաց 1890-ական թթ. կեսերի ջարդերից:

Սրանով հանդերձ, չի կարելի համաձայնվել Վասպուրականում 20-րդ դարասկզբին գործած Արամի և Իշխանի գործելակերպին Մ. Նաթանյանի տված բացասական գնահատականների հետ: Թերևս դա կարելի է բացատրել նրանով, որ վերջիններիս գործունեության շրջանում Արմենական կուսակցությունը գրեթե մարեց, և նրա շատ անդամներ մտան ՀՅԴ շարքերը: Մի բան ակնհայտ է, որը չի ընդունում Մ. Նաթանյանը, որ Արամի և Իշխանի գործունեության շրջանում (1903–1908 թթ.) Դաշնակցությունը Վասպուրականում հասնում է իր կազմակերպչական բարձրակետին և նույնիսկ սկսում է կատարել պետական գործառույթներ:

Մ. Նաթանյանը գնահատելի պատմաքննական մոտեցումներ է արտահայտում 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագրի չիրականացման պատճառների և դրանց հաջորդած հայկական առաջին զանգվածային ջարդերի վերաբերյալ: Նրա կարծիքով, որը միանգամայն ճիշտ է, այդ ծրագիրը չիրականացավ մեծ տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունների պատճառով և նույն այդ հակասություններից օգտվելով էր, որ Համիդ 2-րդը ձեռնարկեց այդ զանգվածային կոտորածները:

Իսկապես, մեծ տերությունների միջև եղած հակասություններն արգելք էին հանդիսանում Թուրքիայի վրա նրանց միասնական ճնշման գործադրման համար, որը սուլթանին ձեռքերի ազատություն էր տալիս Հայկական հարցում:

Իսկ ինչո՞ւ Վասպուրականի հայությունը գերծ մնաց ջարդերից: Բնականաբար դրան նախ նպաստեց երեք կուսակցությունների կազմակերպած ինքնապաշտպանությունը: Բայց դեպի Պարսկաստան նահանջի ճանապարհին Վանի երիտասարդության կոտորածից հետո խաղաղ բնակչության չկոտորվելու խնդրի կապակցությամբ Մ. Նաթանյանը հետևյալ ինքնատիպ եզրակացությունն է կատարում. «Կառավարութիւնը իր նպատակին հասած ըլլալով (երիտասարդութանը կոտորելով – Ս. Ս.), այլևս պէտք չտեսաւ շարունակել Վանայ ջարդը: Այդ ջարդ կատարուած էր հայ ընտրելագոյն սերունդին կորստեան դաւադրական եւ դաւաճանական եղեռնով: Ուստի մունետիկները հայտարարեցին՝ թէ խաղաղութիւնը վերահաստատուած ըլլալով, ամէն մարդ ազատ էր այլևս իր տունը վերադառնալ»<sup>1</sup>:

Մ. Նաթանյանի գործը արժեքավոր է նաև նրանով, որ այնտեղ տրված է Արմենական կուսակցության ներքին կանոնագիրը,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 38:

որը կարևոր սկզբնաղբյուր է: Սակայն այն չենք վերլուծի՝ մեր հիմնական նպատակից չչեղվելու համար:

Ուշադրության արժանի են հայ ազատամարտի նշանավոր դրվագներից մեկի՝ Խանասորի արշավանքի Մ. Նաթանյանի գնահատականները: Հարկ ենք համարում հենց սկզբից շեշտել, որ այդ գնահատականների որոշակի մասի հետ անհնար է համաձայնվել: Այսպես, նա հետևյալն է գրում. «Դաշնակցականները այդ արշավանքը կազմակերպեցին, ըստ երևույթին, Ավետիսեանի 7-800անոց խումբը Բարթուղիմեոսի վանքին առջեւ եւ Պետոյի ու Մարտիկի, դաշնակցական եւ հնչակեան խումբը Գարահիսարի մօտ կոտորող քիւրտերէն եւ Մէրզկցի աշիրաթէն ու անոնց ցեղապետ Շարաֆ պէյէն վրէժ լուծելու համար, չխորհելով սակայն թե իրենց այդ անհաշիւ ընթացքով վերստին ծանր վտանգի մը կենթարկէին Վասպուրականի ուժասպառ եւ դեռ տարի մը առաջ աւելի քան 20 000 հոգի կորուստ տուած եւ իր պաշտպան ուժերէն զրկուած հայութիւնը»<sup>1</sup>:

Մենք արդեն նշել ենք (մասնավորապէս Ա. Դարբինյանի և Ա. Եկարյանի գործերի վերլուծականներում), որ Խանասորի արշավանքը իսկապէս վրեժխնդրական ձեռնարկ էր: Բացի դրանից, Մազրիկ ցեղին թուլացնելը նպատակ էր հետապնդում Պարսկաստանից Վասպուրական գեներ ներմուծող հայդուկային խմբերին ազատել մի մեծ խոչընդոտից: Այս երկու առումով էլ արշավանքը գրեթե հասավ իր նպատակին: Այն ուներ մի երրորդ նպատակ ևս՝ մեծ աղմուկ բարձրացնելով՝ Եվրոպական տերությունների ուշադրությունը սևեռել Հայկական հարցի վրա: Սակայն, այս վերջին նպատակը չիրականացավ:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 51:

Ինչ վերաբերվում է Մ. Նաթանյանի այն կարծիքին, թե այս արշավանքով ծանր վտանգի էր ենթարկվում Վասպուրականի դեռ նոր գոհողությունից դուրս եկած հայությունը, իրականությանը չի համապատասխանում: Նման եզրակացության համար հիմք հանդիսացող որևէ փաստ չկա:

Թուրքական կառավարությունը Վասպուրականում այդ արշավանքի առիթով նոր ջարդեր չի կազմակերպում: Դա հաստատում է նաև հենց ինքը՝ Մ. Նաթանյանը: Հակասելով իր քիչ առաջ մեր մեջբերած տեսակետին՝ նա գրում է. «Թուրք կառավարութիւնը զգուշացաւ հետևանք տալու այդ դեպքին, վախճալով անոր քաղաքական բնոյթէն»<sup>1</sup>: Ապա մանրամասնում, որ. «Կառավարութիւնը՝ Վանայ մտաւորականութեան ջարդովը, արդեն իր նպատակին հասած էր, եւ քաջ գիտնալով Խանասորի եւ նման մեքենացուած շարժումներին բուն դրդապատճառը, ու չուզելով ռուսական միջամտութեան պատրուակ հայթայթել, թոյլ չտուաւ որ գրգռուած թուրքերը ու քիւրտերը նոր խռովութիւն մը եւս հանեն»<sup>2</sup>:

Այսպիսով, նախ միանգամայն պարզ է դառնում, որ Մ. Նաթանյանը հակասելով ինքն իրեն, չի ապացուցում Վասպուրականի հայության Խանասորի արշավանքի բացասական հետևանքները:

Երկրորդ. նա ներկայացնում է բոլորովին նոր մի եզրակացություն, ըստ որի՝ այդ արշավանքի հետևանքով թուրքական իշխանությունները ջարդերի չեն գնում՝ վախենալով ռուսական միջամտությունից: Բայց, տվյալ իրավիճակում ռուսական միջամտության ոչ մի հնարավորության հարց չկար, որովհետև եթե ռուսները նման առիթ էին փնտրում, ապա՝ դա նրանց հեշտորեն տրվել էր 1895–96 թթ. արևմտահայության զանգվածային ջարդերով: Այնպես որ, Խանասորի արշավանքը հազվագյուտ հաջող-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>2</sup> Նույն տեղում:

ված վրեժխնդրական ձեռնարկ էր, որը շատ ավելի դրական ավարտ կունենար, եթե դրա հրամանատար ընտրվեր նրա գաղափարի հղացողը՝ Նիկոլ Դումանը, որի ծրագիրը փորձում է քննադատել Մ. Նաթանյանը:

Մ. Նաթանյանն ռուսական միջամտության հնարավորության հարցով ինքն իրեն հակասում է նաև, երբ Խանասորի արշավանքին անդրադառնալուց և այն ռուսական ներշնչումներով անհիմն պայմանավորելուց հետո, հետևյալն է գրում. «Այդ միջոցին, իշխան Շերեմետիեֆի յաջորդելով, Կովկասի ընդհանուր կուսակալ անուանուած էր իշխան Լոբանոֆի դպրոցին եւ Ռուսիոյ հակահայ քաղաքականութեան մարմնացումներէն՝ տխրահռչակ իշխան Գոլիցին: Ան սաստիկ հակառակութիւն մը կը մշակէր մասնաւորապէս Խրիմեան Հայրիկի դէմ՝ անոր ազգային գործունէութեան եւ թրքահայերու համար ըրած դիմումներուն եւ ցույց տուած հոգածութեան պատճառաւ»<sup>1</sup>:

Այսպիսով, ստացվում է, որ ռուսական քաղաքականությունը տվյալ պահին միանգամայն հակահայ էր: Թուրքիան տվյալ իրավիճակում նրա միջամտությանը չէր սպասում (մի բան, որ տեղի չունեցավ մեծ ջարդերի շրջանում), ուստի և Խանասորի արշավանքի պատճառների և հետևանքների Մ. Նաթանյանի գնահատականներն այնքան էլ չեն բխում ռեալ իրավիճակից ու չեն համալսատասխանում իրականությանը:

Մենք միանգամայնորեն համաձայն ենք, որ ինչպես հնչակյան, այնպես էլ դաշնակցություն կուսակցությունների որոշ գործողություններ անհեռանկարային էին, քանզի կրում էին ցուցադրական բնույթ: Բայց Խանասորի արշավանքը նման գործողություն-

ների շարքում դասելը սխալ է, իսկ այն արկածախնդրական համարելը մեր կարծիքով՝ ոչ իրատեսական<sup>1</sup>:

Մ. Նաթանյանի ուսումնասիրության հետագա մասերը կրում են ինքնակենսագրական և հուշագրական բնույթ և պատմագիտական առումով առանձնապես հետաքրքրություն չեն ներկայացնում:

Ներառյալ մինչև 1908 թ. Վասպուրականի կազմակերպչական աշխատանքներին անդրադառնալիս, Մ. Նաթանյանն ընդունում է, որ արդեն 20-րդ դարակգրին Արմենական կուսակցությունն ապրում է անկումային շրջան: Սակայն, դժբախտաբար, հեղինակը դա պայմանավորում է միայն Դաշնակցության ազդեցության աննախադեպ աճով և արմենականների նկատմամբ այդ կուսակցության բացասական դիրքորոշումով: Բայց մի բան ակնհայտ է, որ եթե վանեցիները, որոնք հակված էին գործունեության առավել խոհեմ ուղղությունների, պիտի որ չկարողանային հանդուրժել Մ. Նաթանյանի կողմից խստորեն քննադատվող Վահան Փափագյանին, Արամ Մանուկյանին և Իշխանին (Նիկոլ Պողոսյան), եթե իսկապես վերջիններս ընտրել էին տեղի պայմանների համար խորթ գործելակերպ: Իրականում անհնար է ժխտել, որ այս գործիչները, ճիշտ ընկալելով տեղի պայմաններն ու հոգեբանությունը և գործելով դրանց լրիվ հաշվառումով, նույնչափ սիրելի դարձան վանեցիների համար, ինչպես շատ արմենական գործիչներ: Այսինքն՝ Արմենական կուսակցության թվաքանակի և ազդեցության նվազումն ուներ ավելի խորքային պատճառներ, քան առաջին հայացքից կարող էր թվալ:

Մ. Նաթանյանը տեղեկություն է հաղորդում նաև Արմենական կուսակցության նախ Վերակազմյալ հնչակյանների հետ

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 52:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 57:

միաձուլումով ստեղծված «Հայ յեղափոխական միութիւն» ապա «Միացյալ Հայ Յեղափոխական կազմակերպութիւն» կուսակցութիւնների, ապա՝ 1908 թ. վերջերին՝ «Սահմանադրական Ռամկավար» կազմակերպության առաջացման վերաբերյալ: Կարևոր սկզբնաղբյուրներ են հանդիսանում այդ կազմակերպությունների ստեղծման, նրանց ծրագրային դրույթների վերաբերյալ նրա հրատարակած վավերագրերը: Դրանց վերլուծությունը մեզ կհեռացնի մեր նպատակից:

Ընդհանրացնելով նշենք, որ ա) Մ. Նաթանյանի աշխատության մեջ կարևորագույն և գնահատելի պատմագիտական հայեցակարգեր են մշակված ինչպես Արմենական կուսակցության, այնպես էլ մյուս երկու ավանդական կուսակցությունների սկզբնավորության և գործունեության վերաբերյալ, բ) այդ գործունեությունները նա գնահատում է՝ արևմտահայ դատի լուծման տեսանկյունից դրանց արդյունավետությունն հաշվի առնելով, գ) որոշ վերապահումներով հանդերձ, փորձում է անաչառ լինել հայ ազատամարտի ընթացքին իր տված գնահատականների մեջ, դ) բացի պատմագիտական արժեքից, նրա գործն ունի կարևորագույն սկզբնաղբյուրային արժեք: Անկախ ինչ-ինչ թերություններից Մ. Նաթանյանը լուրջ ներդրում է կատարել կուսակցական պատմագրության բնագավառում:

ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ  
ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ



ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ

Հայ մեծանուն գեղանկարիչ Փանոս Թերլեմեզյանը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարասկզբի հայ ազատագրական շարժման նշանավոր դեմքերից է: Փանոս Պողոսի Թերլեմեզյանը (Արմենական կուսակցության հիմնադիր-առաջնորդ Մ. Ավետիսյան-Թերլեմեզյանի հորեղբորորդին) ծնվել է Վանում 1865 թ. մարտի 11-ին: Սովորել է Վանի Կեդրոնական վարժարանում 1881–1886 թթ., որտեղ էլ միացել է այդ տարիներին բոլորի շունչն ու ոգին դարձած Արմենական կուսակցությանը և ամենակտիվ պայքար մղել սուլթան Աբդուլ Համիդի դժնդակ վարչակարգի դեմ: Թուրքական իշխանությունների հետապնդումներից խուսափելով՝ մեկնել է Թիֆլիս: 1895–1897 թթ. սովորել է Պետերբուրգի Գեղարվեստը խրատար ընկերության դպրոցում: 1897 թ. թուրքական կառավարության պահանջով ձերբակալվել է և աքսորվել Իրան, որտեղից մի կերպ կարողացել է ազատվել և մեկնել Փարիզ: 1899–1904 թթ. սովորել է ժյուլիան ակադեմիայում: 1904 թ. վերադարձել է Հայաստան, այնուհետև կարճ ժամանակ հետո կրկին մեկնել Փարիզ: 1910–1912 թթ. ապրել է Կ. Պոլսում, որտեղ մտերմանում է Կոմիտասի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Ե. Օտյանի և ուրիշ հայ մեծերի հետ:

Եղել է Վանի 1915 թ. հերոսական ինքնապաշտպանության ղեկավարներից, քաջաբար մարտնչել թուրք ջարդարարների դեմ: 1915 թ. հուլիսին Վանի հայության հետ գաղթել է Անդրկովկաս: 1917 թ. եղել է Դոնի Ռոստովում, 1919–22 թթ.՝ Պոլսում, Իտալիայում, Ֆրանսիայում, իսկ 1923 թ. մեկնել է ԱՄՆ: 1928 թ. վերադարձել է Խորհրդային Հայաստան և լծվել բուռն ստեղծագործական աշխատանքի՝ ստեղծելով բազմաթիվ մնայուն կտավներ, արժանանալով մի շարք պատվավոր կոչումների ու վայելել ժողովրդի անկեղծ սերն ու հարգանքը:

Վախճանվել է 1941 թ. ապրիլի 30-ին Երևանում<sup>1</sup>:

Փ. Թերլեմեզյանը թողել է արժեքավոր հուշեր, որոնք պահվում են Հայաստանի ազգային պատկերասրահում, ձեռագիր վիճակում<sup>2</sup>: Այդ հուշերն ունեն կարևոր սկզբնաղբյուրային նշանակություն, քանզի բազում մանրամասներ են պարունակում մինչև 1915 թվականն ընդգրկող հայ ազգային-ազատագրական պայքարի և հայկական կուսակցությունների գործունեության վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, դրանք կրում են նկարագրական բնույթ, բայց այնտեղ առկա են նաև տեսական ընդհանրացումներ: Այդ ընդհանրացումները վերաբերում են՝

ա) Հայկական հարցին և դրա նկատմամբ մեծ տերությունների վերաբերմունքին,

բ) հայ կուսակցությունների գործունեության ձևերին և դրանց արդյունավետությանը,

գ) ազատագրական պայքարի զարթոնքին,

դ) հայկական ջարդերին և դրանց պատճառներին:

Փորձենք ի մի բերել և գնահատել դրանք:

Փ. Թերլեմեզյանը Հայկական հարցին անդրադառնում է՝ սկսած Սան-Ստեֆանոյի դաշնագրից և Բեռլինի վեհաժողովից՝ փորձելով բացահայտել նրա ձախողման պատճառները: Նրա կարծիքով, որի հետ կարելի է համաձայնվել մասամբ, որովհետև պակաս դերակատարություն չունեն նաև Ավստրոհունգարիան, դրանում զլխավոր դերակատարությունը պատկանում է Անգլիային: Վերջինս «որպեսզի Սան-Ստեֆանոյի դաշնագիրը ոչնչացնի, պահանջեց, որ Թուրքիայի գործերի առթիվ, վեց պետությունների

<sup>1</sup> Մարտիկյան Ե., Փանոս Թերլեմեզյան, Ե., 1964:

<sup>2</sup> Թերլեմեզյան Փ., Կյանքիս հուշերը, տե՛ս Հայաստանի ազգային պատկերասրահ, գույքահամար 423, ֆոնդ 60, թղթապանակ 3: Մոտ ապագայում նախատեսում ենք համապատասխան առաջաբանով և ծանոթագրություններով հրատարակել դրանք:

վեհաժողով գումարվի Բեռլինում: Մեծ տերությունները որոշեցին փոխարինել Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը Բեռլինի 61-րդ հոդվածով, որով իրենք, բոլորը միասին, լիազոր պիտի հանդիսանային՝ հսկել հայկական բարենորոգումների գործադրմանը: Այդպիսով, ռուսական բանակը ստիպված Կարինից ետ քաշվեց պատերազմից առաջ եղած իր սահմանների վրա»<sup>1</sup>:

Այսպիսով, ըստ Փ. Թերլենեզյանի ստացվում է, որ մեծ տերությունները դավաճանել են Հայոց բարենորոգումների ծրագրերին, քանզի եթե Սան-Ստեֆանոյի դաշնագրով (16-րդ հոդված) պետք է ռուսական զորքերը մնային արևմտահայ գրավյալ տարածքներում մինչև բարենորոգումների իրականացումը, ապա Բեռլինի դաշնագրով մեծ տերությունների բարենորոգումների երաշխիք հանդիսանալու պայմանը ենթադրում էր բացառել այդ նույն զորքերի մնալու անհրաժեշտությունը:

Սա հերթական խաբկանքն էր, որ ճաշակեց դյուրահավատ հայությունը, բայց, իհարկե, ոչ վերջինը: Խաբկանք էր այն պատճառով, որ «հետո Անգլիան կաշառք ստացավ Կիպրոս կղզին Թուրքիայից, փակեց հայկական գավառներում եղած իր հյուպատոսարանների մեծ մասը և դազաղեց մեծ աղմուկով պահանջված հայկական բարենորոգումները: Հայերը իրենց անսահման ուրախության այդ օրերին հանկարծ լքվեցին և նորից թուրք ու քուրտ յաթաղանի շնորհաց ապավինեցին»<sup>2</sup>:

Այլ կերպ ասած՝ մեծ տերությունների միջև եղած հակասությունները Հայկական հարցով ձեռքերի ազատություն տվեցին Թուրքիային<sup>3</sup>:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակը և պատմության դասերը, գիտաժողովի նյութեր Ս. Ստեփանյանի խմբագրությամբ, Ե., 2009:

Բավական հետաքրքիր պատմագիտական գնահատական է տալիս Փ. Թերլենեզյանը Բեռլինի վեհաժողովին հաջորդած հայոց զարթոնքի Վասպուրականի ռահվիրաներ Մ. Խրիմյանի և Մ. Փորթուգալյանի գործունեությանը: Հարկավ, նորություն չէ այն, որ «Այս երկու հայրենասերները, հայ ժողովուրդը լուսավորելու և նրա թմրած գիտակցությունը արթնացնելու ձգտումով, հախտուն ու տենդագին աշխատանք են տարած 1870–1883 ( Մ. Խրիմյանը Վանում էր 1879–84 թթ. - Ս. Ս.) թվականներին»<sup>1</sup>: Բայց ահա թե ինչ է գրում քիչ անց. «Բայց նրանց ոգևորությունը, իմ կարծիքով, տարերային էր, որովհետև ժողովրդին առաջնորդելու պատասխանատվություն ստանձնողները պարտավոր էին զգոն լինել, քանի որ Օսմանյան պետությունը գինված էր կառավարելու դարավոր փորձով, խորամանկ էր, բռնապետ և աչալուրջ»<sup>2</sup>:

Այս ընդհանրացումն ընդհանուր առմամբ ճիշտ է այն տեսանկյունից, որ Բեռլինի վեհաժողովին հաջորդած «երկաթե շերտի» քարոզը հայ ժողովուրդն ընկալեց այնպես, որ որդեգրեց մի գործելակերպ, որի համաձայն անհրաժեշտ էր կռվով Եվրոպային ցույց տալ ազատության արժանի լինելը, նպաստեց ազատագրական պայքարում զգացմունքի չափաբաժնի գերակայությանը, որի արդյունքում պայքարն սկսվեց տարերային, իրապաշտ և զգացմունքային ուղղվածություններով միաժամանակ: Սկսվեց պայքար սեփական և թշնամու հնարավորությունների իրական հաշվարկի անտեսումով:

Այնպես որ Փ. Թերլենեզյանը գրեթե չի սխալվում, թեպետ կարծում ենք, որ Մ. Փորթուգալյանին շատ խիստ է մեղադրում «զգոն» չլինելու մեջ:

<sup>1</sup> Թերլենեզյան Փ., նշվ. աշխ., էջ 43:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 44:

Քանի որ Փ. Թերլենեզյանը դեմ էր ոչ կշռադատված և տարերային պայքարին, բնական է, որ պետք է քննադատական մոտեցում ցուցաբերեր բոլոր այն ձեռնարկների նկատմամբ, որոնք կատարվում էին մեծ տերությունների միջամտության հույսով: Այդ քննադատական մոտեցումը երևում է դեռևս 1889 թ. Չուխ Գետուկի դեպքի նրա գնահատականներում: Նրա կարծիքով այդ դեպքը նպաստում է, որ թուրքական կառավարությունը, մամուլում այն ուռձացնելով, սաստկացնի բռնությունները, իսկ Կ. Պոլսի հայերն այնքան էին դյուրահավատ, որ տեղի հայ և օտար մամուլում աղմուկ բարձրացրին այդ դեպքի շուրջ «հայկական հարցը արթնացնելու նպատակով»<sup>1</sup>:

Առավել խստորեն է նա քննադատում Գում-Գափուի (1890 թ.), Սասնո (1894 թ.), Բաբը Ալիի (1895 թ.) և Բանկ-Օտոմանի (1896 թ.) իրադարձությունները:

Գում-Գափուի ցույցը, որի գլխավոր դեմքն էր հնչակյան Հ. Ճանկյուլյանը, նա համարում է «Եվրոպական գիշատիչ պետությունների «արդարամտության» վրա ունեցած միամիտ հավատքի» հետևանք<sup>2</sup>: Իսկ նրա կազմակերպիչներին մեղադրում է նրանում, որ սուլթանին բացարձակ կերպով պատերազմ հայտարարել նշանակում էր «սուկալի կացություն» ստեղծել «բուն Հայաստանի հայության համար»<sup>3</sup>:

Հնչակյանների կազմակերպած Սասնո 1894 թ. դեպքերը, որին զոհ գնացին հազարավոր հայեր, Փ. Թերլենեզյանի կարծիքով նույնպես պայմանավորված էին Եվրոպայի միջամտությանը հասնելու սին հույսերով: 1895 թ. մայիսին սուլթանին ներկայացվում է բարենորոգումների մի համեստ ծրագիր, բայց դա էլ չի

իրագործվում: Փ. Թերլենեզյանն այդ ծրագրի ձգձգմամբ է պայմանավորում նույն հնչակյանների 1895 թվականին կազմակերպած Բաբը-Ալիի ցույցը: Դրա հետևանքների մասին նա հետևյալն է գրում. «Այդ անգեւն և խաղաղ ցույցը հայությանը խոշոր դժբախտություն բերեց: Այս անգամ սուլթանը դեսպանների աչքի առաջ սկսեց կոտորել հանդիպած հայերին և այդ արյան ճապաղիների մեջ վավերացրեց մայիսյան ծրագիրը, որպեսզի Շաքիր փաշայի հետ ուղարկի գավառները գործադրելու»<sup>1</sup>:

Հայտնի է, որ Շաքիր փաշան բարենորոգումներն «իրականացրեց» հայերի մասսայական ջարդերով՝ սկսած Տրապիզոնով և վերջացրած բոլոր հայաշատ գավառներով: Իսկ ինչո՞ւ պետք է սուլթանը չգնար ջարդերի: Չէ որ դրանցով վերացնում էր մեծ տերությունների Թուրքիայի հետ խնդիրներ լուծելու հարմար առիթներից մեկը:

Նույն Մայիսյան ծրագրերի իրականացման հույսով (անշուշտ մեծ տերությունների միջամտությամբ) է պայմանավորում Փ. Թերլենեզյանը ՀՅԴ կազմակերպած Բանկ-Օտոմանի ձեռնարկը (1896 թ. օգոստոս):

Իրավացիորեն քննադատելով այս ձեռնարկները, քանզի դրանք բարենորոգումների իրականացման առումով մնում էին անհետևանք, Փ. Թերլենեզյանը, թերևս այլ, սուբյեկտիվ դրդապատճառներով պայմանավորված կատարում է ոչ ընդունելի մի ընդհանրացում: Նա գրում է. «Թվում է, թե այսքան վարարող արյունը պետք է խելքի բերեր մեր ազգային փրկիչներին, որ թքեին եվրոպական միջամտության վրա: Սակայն, ավաղ, այդ «հեղափոխականները» խելքի չեկան և մեր արյունը շարունակեց հոսել եր-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 51:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 53:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 98:

բեմն գետերով, երբեմն առվակներով, մինչև որ մեծ հոկտեմբերի կրտսեր զավակը, սևաչյա նոյեմբերը հայտնվեց Հայաստանում»<sup>1</sup>:

Ճշմարիտ է, մեծ տերությունների միջամտության հույսով ազատագրական տարանջատ ձեռնարկները 1890-ական թթ. հետո էլ շարունակվեցին, բայց այստեղ այն տպավորությունն է ստեղծվում թե «արյան գետերի» միակ պատճառը հայ հեղափոխականներն էին:

Հարկավ, այդպես չէր: Հայ հեղափոխականներն անկեղծորեն իրենց ժողովրդին նվիրված գործիչներ էին ու միամտաբար երբեմն ջարդերի ավելորդ առիթներ էին տալիս, որոնց պատճառներն ավելի խորն էին՝ դրանք պետականորեն և վաղուց մտածված ու մանրակրկիտ մշակված և ամենավայրագ մեթոդներով իրականացված ծրագրերի իրագործում էին: Վիճելի է նաև «Մեծ Հոկտեմբերի» կամ «սևաչյա» նոյեմբերի փրկարար դերը: Հայտնի են դրանց հաջորդած արյունոտ իրադարձությունները, որոնք հանգեցրին 1921թ. փետրվարյան ժողովրդական ելույթին և թուրք-բոլշևիկյան դաշինքի արդյունքում Հայաստանի ծվատմանը:

Սա կարելի է համարել քաղաքական սեթևեթանք, քանզի Փ. Թերլեմեզյանը շատ լավ գիտեր այս ամենը: Առավել անխոցելի է նրա հետևյալ ընդհանրացումը. «Հայկական հարցը և արյունը շահագործվում էր ամենքից»<sup>2</sup>:

Ընդունելի են նաև 1905–06 թթ. հայ-թաթարական ընդհարումների վերաբերյալ նրա արտահայտած տեսակետները: Նրա կարծիքով՝ այդ ընդհարումները պետք էին «ոճրագործ ցարական

կառավարությանը՝ իր նողկալի տիրապետությունը ամրացնելու համար»<sup>1</sup>:

Սա պատմականորեն հիմնավորվող տեսակետ է:

Թեև Փ. Թերլեմեզյանը ոչ հիմնավոր պատճառներով է բացատրում այս շրջանում ՀՅԴ ուժեղացումը՝ կապելով դա հայ բուրժուազիայի հետ, որը որոնում էր ինքնապաշտպանվելու ինարավորություն, բայց ճիշտ է, երբ գտնում է, որ, մտնելով կովկասյան ռազմաբեմ, այդ կուսակցությունն ունեցավ պայքարող երկու ճակատ՝ ռուսների և թուրքերի դեմ:

Բավական հետաքրքիր են հայ երեք ավանդական կուսակցությունների գործունեության տեսական հիմքերի նրա գնահատականները: Ըստ Փ. Թերլեմեզյանի, Հնչակյան կուսակցությունն իրենից ներկայացնում էր պլեխանովյան սոցիալ-դեմոկրատական ծրագրերից շատ բան փոխառած կազմակերպություն, մարքսիստական, բայց, որը «աշխատավորական ժողովրդի հետ կապ չուներ, որով հող չուներ իր ոտքի տակ»<sup>2</sup>:

Համաձայն մարքսիզմի՝ աշխատավորության հետ կապն անհրաժեշտ էր (հիմնականում պրոլետարիատի)՝ որպես կապիտալիզմի դեմ հեղափոխական պայքարի շարժիչ ուժի: Բայց Արևմտյան Հայաստանում կապիտալիստական հարաբերությունները նույնիսկ չէին էլ սաղմնավորվել, ուստի և ավելորդ էր խոսել դասակարգային հեղափոխության մասին:

Արևմտյան Հայաստանում խոսք կարող էր գնալ միայն ողջ ժողովրդի մասնակցությամբ ազգային հեղափոխական պայքարի մասին, պայքար, որի հիմնական շարժիչ ուժը հենց աշխատավորությունն էր: Բայց, իսկապես, ազատագրական պայքարի մղելու

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 99: Այստեղ, անշուշտ, պետք է նկատի առնենք մի կարևոր հանգամանք. հուշերը գրվել են կոմունիստական մենատիրական գաղափարախոսության պայմաններում, որոնց փառաբանումն ու մեծարումը պարտադիր էր, իսկ դրանցից յուրաքանչյուր աննշան շեղումն իսկ կարող էր ունենալ ողբերգական հետևանքներ:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 100:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 92–93:

տեսանկյունից էլ հնչակյան կուսակցության կապը ժողովրդի հետ սերտ չէր:

Արմենական կուսակցության մասին Փ. Թերլեմեզյանն այն կարծիքին է, որ «նրա գլխավոր ձգտումն է եղել հնար եղածին չափով քիչ գրգռել թուրքերին և գիներ, պատրաստել ժողովրդին ու պատեհ առիթի սպասել»<sup>1</sup>:

Որ իրոք այսպես էր, կասկածից վեր է և դրանում արդեն մենք համոզվել ենք վերոհիշյալ արմենական գործիչների աշխատությունները վերլուծելիս:

Դաշնակցություն կուսակցության 1892 թ. ընդունած ծրագրի վերաբերյալ գրում է. «Այդ ծրագիրն էլ հեռավոր ու մոտավոր նպատակներ ուներ: Հեռավորի մեջ հարուստներին չխրտնեցնելու համար, քողարկված էին սոցիալիստական մտքեր, բայց մոտավոր նպատակը զուտ ազգայնական, հայդուկային ձգտումներ ուներ: Ուրեմն այդ երկերեսանի ծրագիրը թե սոցիալիստական հակում ունեցողներին և թե թրքահայ ազգայնական խմբապետներին հրավիրում էր յուր գիրկը»<sup>2</sup>:

Այս տեսակետը փոքր-ինչ վիճելի է, որովհետև սոցիալիզմն այդ կուսակցության համար երբեք առաջնակարգ չի եղել ոչ թե հարուստներին չխրտնեցնելու համար, այլ՝ այն համոզումով պայմանավորված, որ քանի դեռ չի լուծվել արևմտահայության ազգային ազատագրության խնդիրը, ավելորդ է խոսել սոցիալիզմի մասին: Ուստի, ավելորդ է նաև խոսել ծրագրի «երկերեսանի» լինելու մասին: Այլ հարց է, որ Փ. Թերլեմեզյանը չի սխալվում, գրելով, որ հայ կուսակցությունները հստակ պատկերացում չունեին այն մասին, թե ինչպիսի քաղաքական կարգավիճակ պետք է ունենար ազատագրված Հայաստանը: Նա գրում է. «Մենք ռոմանտիկ երա-

զողներս առանց որոշակի ծրագրի՝ տարերայնորեն խիզախում էինք մշուշի մեջ (1880–90– ական թթ.-ին - Ս. Ս.): Դա մի գաղափարական ու կազմակերպչական խառնաշփոթության փամանակաշրջան էր...»<sup>1</sup>:

«Համարձակ կարելի է անդել,-- շարունակում է հեղինակը,-- որ մեր անորոշության մեջ խարխափող ռոմանտիկ ուսուցիչների համար էլ պարզ չէին այդ կենսական խնդիրները: Իրավացի կերպով կարող են հարց տալ, ուրեմն ի՞նչ էիք ուզում, ձեր ընթուստության նպատակն ի՞նչ էր: Մենք ուզում էինք մեր լեզվի և գործունեության խեղդող ու ստրկացնող կապանքները փշրել, որը հնարավոր էր միմիայն այն ատեն, եթե կործանվեր սուլթանությունը և յուր ռեժիմը»<sup>2</sup>:

Փ. Թերլեմեզյանը թեև կտրուկ է իր գնահատականներում, սակայն մի բան ակնհայտ է, և դա վկայում է նաև մեր ընդգծած նախադասությունը, որ հայ ազգային կուսակցությունները նետվելով ազատագրական պայքարի գիրկը, չնայած ծրագրային ձևակերպումներին, այնքան էլ հստակ չգիտեին, թե այդ պայքարի արդյունքում կոնկրետ ինչ քաղաքական ապագա են նախատեսելու Արևմտյան Հայաստանի համար: Նրանք (մասնավորապես Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունները) դնելով ազգային ազատության խնդիր, ավելի հաճախ բավարարվել են բարենորոգումների պահանջով:

Բայց Փ. Թերլեմեզյանի այս ամենից հետո արած այն հետևությունը, թե «կապիտալիզմի և պրոլետարիատի զարգացումն էր միայն, որ հնարավոր պայմաններ պիտի ստեղծեր իրական ազատության հասնելու մեր բուռն ցանկություններին»<sup>3</sup>,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 94:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 94–95:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 55:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 56:

միանգամայն արհեստական է և խորհրդային կոնյուկտուրայի ազդեցության ակնհայտ հետևանք:

Եվ վերջապես հարկ ենք համարում առանձնացնել Փ. Թերլեմեզյանի տեսակետները 1908 թ. երիտթուրքական հեղաշրջման և նրան նախորդած 1907 թ. դեկտեմբերին ՀՅԴ նախաձեռնությամբ Փարիզում կայացած Օսմանյան կայսրության ընդդիմադիր տարրերի կոնգրեսի վերաբերյալ: Նրա կարծիքով՝ այդ կոնգրեսի հայտարարագիրը «մի հոյակապ խոստում էր իսկապես եղբայրական կապեր հաստատելու համար՝ մինչև այդ իրար ատող տարբեր ազգությունների, ճնշված ու շահագործված ժողովուրդների միջև»<sup>1</sup>:

Սակայն, նա գտնում է, որ միավորված ուժերի հեղափոխական գործունեությունը հաստատուն հիմք չուներ, որովհետև. ա) երիտթուրքերը նեղմիտ ազգայնականներ էին և նրանց սկզբունքները հակասում էին եղբայրական մերձեցման ձգտումներին, բ) նրանք ավելի շատ կառչած էին 1876 թ. միդհատյան սահմանադրությանը, որը նշանակում է, դեմ էին հեղափոխական փոփոխությունների<sup>2</sup>: Եվ պատահական չէ, որ եթե Աբդուլ Համիդն իր քաղաքական գործունեության տեսական հիմնավորումը որոնում էր պանիսլամիզմի մեջ, ապա երիտթուրքերը՝ պանթուրքիզմի: Սա նշանակում է, որ գործնականում նրանք իրարից գրեթե չէին տարբերվում: Կարծում ենք, որ սրանք են այն հիմնական և կարևոր ընդհանրացումները, որոնք կատարում է Փ. Թերլեմեզյանը հայ ազգային-ազատագրական պայքարի, նրա առաջնորդ քաղաքական ուժերի, մեծ տերությունների քաղաքական դիրքորոշումների վերաբերյալ: Եվ այդ ընդհանրացումները համարժեք են պատմագիտական հայեցակարգերի:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 159:

<sup>2</sup> Նույն տեղում:

Կուսակցական պատմագիտական միտքը ոչ բոլոր դեպքերում է, որ կարող է հայեցակարգային ընդունելի մոտեցումներ առաջադրել ընդհանրապես և պատմության այս կամ այն ժամանակահատվածի վերաբերյալ, մասնավորապես: Սա այն պարզ պատճառով, որ կուսակցությունները լինելով քաղաքական կառույցներ, ավելի հազվադեպ են քննադատական մոտեցում ցուցաբերում այն իրադարձությունների նկատմամբ, որոնցում իրենք ունեն որոշակի դերակատարություն, կամ դրանք ընդհանրապես կապված են իրենց հետ: Անաչառության կամ անկողմնակալության միտումը կուսակցական պատմագիտության մեջ միշտ չէ, որ առաջնահերթային է, և դա բնական է: Բայց, դրանով հանդերձ, կուսակցական պատմագրությունն էլ կարող է շատ իրադարձությունների վերաբերյալ ներկայացնել ճշմարիտ գնահատականներ կամ մոտեցումներ, որոնք կարող են հիմք դառնալ տվյալ ժողովրդի ակադեմիական պատմագրության հայեցակարգային մշակումների համար:

Ի վերջո, թե՛ անկախ և թե՛ կուսակցական պատմագրությունը կոչված է պատմագիտական միտք կամ հայեցակարգեր մշակել և մատուցել առհասարակ պատմության կամ նրա որևէ դրվագի վերաբերյալ:

Սակայն, պատմագիտական հայեցակարգեր կարող են ներկայացվել ոչ միայն պատմաբան մասնագետների, այլև կուսակցական, քաղաքական գործիչների, տվյալ պատմական իրադարձությունների մասնակիցների հրապարակած ոչ պատմագիտական բնույթի աշխատություններում կամ հուշագրություններում ևս, որոնք հաճախ նմանաբնույթ գործերի որոշակի մասին հաղորդում են պատմագիտական արժեք:

Սա նշանակում է, որ պատմագիտական մտքի գնահատումն ամենևին չպետք է սահմանափակել պատմական աշխատություններում դրանց արտահայտություններով միայն:

Սույն աշխատությամբ խնդիր է դրված պատմաբաններին, քաղաքագետներին և ընթերցող լայն շրջաններին ներկայացնել 1885–1908 թթ. Արմենական կուսակցական պատմագիտական միտքը և ոչ թե պատմագրությունը: Վերլուծության են ենթարկված այդ կուսակցության ղեկավար և շարքային գործիչների, նաև պատմաբանների, մեր կարծիքով, կարևոր աշխատություններն ու հոդվածները, որոնք.

ա) իրենցից ներկայացնում են միայն կուսակցական պատմագիտական բնույթի աշխատություններ,

բ) ունեն հուշագրությունների բնույթ, բայց շատ իրադարձությունների ընթացքի վերաբերյալ ներկայացնում են արժեքավոր պատմագիտական մոտեցումներ:

Իհարկե, դա դյուրին խնդիր չէ, և պահանջում է եղած հրապարակումների խորին հետազոտություն և վերլուծություն: Արմենական կուսակցությունը, որը հայ առաջին քաղաքական կազմակերպությունն էր, ըստ էության ունեցավ 10-ամյա ակտիվ գործունեություն: 1896 թ. Վանի հերոսական ինքնապաշտպանությունից հետո մեծաքանակ զոհեր տալով այն սաստիկ թուլացավ և զրկվեց գրեթե բոլոր կարող ուժերից: Փաստորեն, մնաց ոչ թե կուսակցությունն իր գործունե կառույցներով, այլ՝ կուսակցության ցաքուցրիվ ու ոչ ուժեղ, երկրորդական, ոչ հիմնական դերակատարություն ունեցող անդամներ ու մի քանի փոքրիկ խմբեր: Լինելով Արևմտյան Հայաստանում սկզբնավորված միակ կուսակցությունը և առավել ծանոթ լինելով տեղական պայմաններին, ազատագրական պայքարի կազմակերպման դժվարություններին՝ այս կուսակցությունն ընտրել էր ավելի կշռադատված, խոհեմ և ցուցամոլուր-

յունից հեռու գործելակերպ: Բայց կորցնելով իր ղեկավար գործիչներին և 1890–ական թթ. երկրորդ կեսերից իր դիրքերը զիջելով Ղազնակցությանը՝ այս կուսակցությունը փաստորեն զիջեց ասպարեզը և ի վերջո, մաս կազմելով Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցությանը՝ այնքան էլ հարուստ գրական ժառանգություն չթողեց իր գործունեության պատմական արժեքի գնահատման տեսանկյունից:

Սակայն եղածն էլ բավական է ընդհանուր պատկերացում կազմելու Արմենական կուսակցության գործունեության սկզբունքների մասին ու նրա պատմագիրների և հուշագիրների պատմագիտական ընդհանրացումներից առանձնացնելու նրանք, որոնք վերաբերում են ողջ ազգային-ազատագրական պայքարի ընթացքին:

Արմենական կուսակցական պատմագիտական միտքն ընդհանրապես 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ ակադեմիական հայեցակարգային մոտեցումների կարևոր բաղադրամասերից մեկն է:

Աշխատության մեջ վերլուծության է ենթարկված Արմենական կուսակցության նշանավոր գործիչների ուսումնասիրությունների կամ հուշագրությունների պատմագիտական միտքը:

Նախ և առաջ վերլուծության է ենթարկված Արմենական կուսակցական նշանավոր գործիչ Արտակ Ղարբինյանի աշխատությունը: Այն իրենից ներկայացնում է ոչ միայն հուշագրական բնույթի կարևոր սկզբնաղբյուր, այլ նաև՝ պատմագիտական արժեք ունեցող կարևոր ուսումնասիրություն: Նրա պատմագիտական հայացքների հիմքում ընկած է հայ ավանդական կուսակցությունների գործունեության միասնականության ձգտումը, որի դրական արդյունքները հեղինակը ներկայացնում է փաստերով: Բացի այդ, Ա. Ղարբինյանը սխալ է համարում եվրոպական տերությունների միջամտությանը հոգուտ Հայկական հարցի լուծման հայ

ազատագրական պայքարի տարանջատ ձեռնարկներով հասնելու ձգտումը և հակված է դեպի լուռ ու գաղտնորեն ընդհանուր ապստամբություն կազմակերպելու ուղղությանը՝ առանց ցնցումների, ժամանակավրեպ ձեռնարկների և հայության ուժերը ջլատելու համար թշնամուն նոր առիթներ տալու: Այս ամենը լիարժեք հիմք են տալիս նրան դասելու հայ ազգային-ազատագրական պայքարի սակավ իրատես գործիչների թվին:

Այնուհետև վերլուծվում են Արմենակ Եկարյանի պատմագիտական հայացքները: Վերջինս թեև հուշագիր է, բայց բավական կարևոր տեսակետներ է ներկայացնում հայ ազատագրական պայքարի հակասական ընթացքի, առանձին դրվագների արդյունավետության, միջկուսակցական հարաբերությունների, մեծ տերությունների դավադիր դիրքորոշումների և հայկական ջարդերի պատճառների վերաբերյալ: Նա կողմնակից է հայ ազատագրական պայքարի այնպիսի ուղիով զարգացման, որն առիթ չէր տա ավելորդ ջարդերի, ինչն արևմտահայության ազատագրման տեսանկյունից ավելի դրական արդյունք կարող էր ապահովել:

Հայ ազատամարտի և Արմենական կուսակցության վերաբերյալ հետաքրքիր հայեցակարգային մոտեցումներ է մշակել Միքայել Նաթանյանը: Նրա աշխատասիրած գործն արժեքավոր է և գնահատելի երեք տեսանկյունից.

ա) այն պատմագիտական ուսումնասիրություն է, ընդ որում բավական անաչառ և հաջողված,

բ) ունի հուշագրային սկզբնաղբյուրի արժեք, որովհետև ներկայացնում է նաև հեղինակի հուշերը ազատագրական պայքարի իր մասնակցած դրվագների վերաբերյալ,

գ) պարունակում է արխիվային վավերագրեր ու վկայություններ Արմենական կուսակցության, ՀՍՌԿ-ի, ՌԱԿ-ի ծրագրերի և այլ դրույթների մասին:

Իր ուսումնասիրության մեջ Մ. Նաթանյանը տալիս է Արմենական կուսակցության ազատագրական պայքարի առաջին քայլերից մինչև ամենավերջին գործողությունների նկարագրությունը՝ միաժամանակ գնահատելով դրանք: Եվ սրանում է կայանում դրա պատմագիտական արժեքը:

Ամենագնահատելին թերևս այն է, որ Մ. Նաթանյանը հայ ավանդական կուսակցությունների գործունեությունը գնահատում է՝ հաշվի առնելով դրանց արդյունավետությունը արևմտահայ դատի լուծման տեսանկյունից:

Սույն աշխատության մեջ գնահատված է նաև պատմագիտական միտքը Փանոս Թերլեմեզյանի հուշերում: Թեև դրանք կրում են նկարագրական բնույթ, բայց այնտեղ առկա են ընդհանրացումներ, որոնք համարժեք են պատմագիտական հայեցակարգերի: Այդ ընդհանրացումները վերաբերում են՝

ա) Հայկական հարցին և դրա նկատմամբ մեծ տերությունների վերաբերմունքին,

բ) հայ ավանդական կուսակցությունների գործունեության ձևերին և դրանց արդյունավետությանը,

գ) ազատագրական պայքարի զարթոնքին,

դ) հայկական ջարդերին և դրանց պատճառներին:

Վերոհիշյալ գործիչների պատմագիտական միտքը փորձել ենք վերլուծել չեզոք կամ անաչառ դիրքերից՝ որքան հնարավոր է՝ հավատարիմ մնալով ակադեմիական պատմագիտության սկզբունքներին:

## Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

### *Արխիվ*

Հայաստանի ազգային արխիվ՝

ՀԱԱ, ֆ. 427, ց. 1, գ. 1, 8, 15, 46, 66, թ. 7:

ՀԱԱ, ֆ. 424, ց. 1, գ. 50, 55, 59:

ՀԱԱ, ֆ. 424, ց. 2, գ. 116:

ՀԱԱ, ֆ. 408, ց. 2, գ. 8:

Հայաստանի ազգային պատկերասրահ, գույքահամար 423, ֆոնդ 60, թղթապանակ 3, Թերլեմեզյան Փ., Կյանքիս հուշերը (մեքենագիր):

### *Տպագիր սկզբնաղբյուրներ*

Ռամկավար ազատական կուսակցութիւն, հիմնական ծրագրեր, կանոնագրեր եւ վաւերագրեր, կազմեց ղոկոտ. Վաչե Ղազարեան, Պեյրութ, 1988:

### *Գրականություն*

Ա-Ղո, Մեծ դեպքերը Վասպուրականում 1914-1915 թվականներին, Ե., 1917:

Արամը մահուան յիսնամեակին առթիւ, Ե., 1991:

Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առձակատումներում(16-րդ դարից 1917 թ.), Ե., 2004:

Ղարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890էն 1940, Փարիզ, 1947 և Բ տպագրություն, Ե., 2003:

Ղալլաքյան Կ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն (1921-1940), գիրք առաջին, Ե., 1999:

Եկարեան Ա., Յուշեր Արմենակ Եկարեանի, Պեյրութ, 1985:

Կարապետյան Ա., Արմենական կուսակցության կազմավորումն ու գործունեությունը, «Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ /1885-1914թթ./», Է. Ա. Կոստանդյանի խմբ., Ե., 2003:

Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2000:

Կոստանդյան Է. Ա., Ակնարկներ արևմտահայ մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի պատմության (19-րդ դարի 80-ական թվականներ), Ե., 2005:

Համբարյան Ա., Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990:

Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակը և պատմության դասերը, գիտաժողովի նյութեր Ս. Ստեփանյանի խմբագրությամբ, Ե., 2009:

Հարիրամեակ արմենական կուսակցութեան կազմութեան 1885-1985, Փարիզ, 1985:

Ղազարեան Վ., Արմենական կուսակցութիւնը, ակնարկներ, Պեյրութ, 1985:

Ղամբարյան Ա., Հայկական հարցը 1912-1914թթ. և Մեծ Բրիտանիան, Ե., 2006:

Մարտիկյան Ե., Փանոս Թերլեմեզյան, Ե., 1964:

Նաթանեան Մ., Արմենական կուսակցութիւնը, ծագումէն սկսեալ մինչեւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութեան կազմութիւնը, Գահիրե, 1990:

Ներսիսյան Ա., Ազգային ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., Ե., 1999, էջ 64-73:

Պողոսյան Վ., 1909թ. հայկական կոտորածները Կիլիկիայում ֆրանսիական պատմագրության գնահատմամբ, Ե., 2009:

Ուսման վար Ազատական Կուսակցություն, Ուղեցույց և համառոտ պատմություն, Ե., 1991, էջ 42:

Ռուբին, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Բ(2), և հ. Գ (3), Lou Անճէլըս, 1952:

Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Ե., 2005:

Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական թանկավար կուսակցություն (1908-1921թթ.), Ե., 2009:

Սերոբեան Մ., Մեր պայքարը հայ ազատագրութեան ուղիով, վերլուծումներ հայկական հարցին շուրջը, Գահիրե, 1948, էջ 191:

### *Մամուլ*

«Բանբեր Երևանի Համալսարանի», թիվ 2, 1989, էջ 109-119, Ներսիսյան Ա., Ընդհանուր ապստամբության կազմակերպման հարցը 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի արևմտահայ ազգային-ազատագրական պայքարում, «Դրօշակ», թիվ 1558, 27 յուլիս-10 օգոստոս, 1999:

«Էջմիածին» ամսագիր, թիվ Ե, էջմիածին, 2008, էջ 98-110, Սարգսյան Ս., Արմենակ Եկարյանի պատմագիտական հայացքները:

«Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2, Ե., 2008, էջ 46-57, Սարգսյան Ս., 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը Արտակ Ղարբինյանի գնահատմամբ: «Հայրենիք» ամսագիր, 1937թ., թիվ 4, էջ 148, Արամայիս Ազնաուրեանի յուշերը:

«Վասպուրական» ամսաթերթ, թիվ 3, մարտ, 1914 և թիվ 9, սեպտեմբեր, 1941:

«Վեն», Փարիզ, թիվ 5, 1934, էջ 89:

### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արմենական	5, 7, 8, 12, 17, 20, 21, 23, 25, 26, 27, 28, 29, 41, 46, 47, 48, 49, 50, 52, 53, 57
Արևմտյան Հայաստան	6, 9, 16, 18, 35, 36, 38, 40, 45, 51, 58, 59, 65, 66, 82, 84, 87
Ավետիսյան Մ.	10, 23, 42, 50, 53, 67, 68, 76
Բաբը Ալի	21
Բանկ-Օտոման	19, 20
Գում-Գափու	21
Խանասոր	25, 26
Խրիմյան Մ.	13, 20, 60, 78
Հնչակյան	4, 9, 10, 17, 18, 20, 23, 27, 29, 44, 46, 64, 65, 70, 74, 75, 79, 80, 82
ՀՅԴ	4, 9, 13, 17, 18, 19, 20, 25, 26, 27, 28
ՀՍՈԿ	6, 10, 11, 13, 14

Վանի «Մեծ դեպք»	6, 8, 23, 26, 91
ՈԱԿ	11, 16, 89
Վան	9, 13, 14, 20, 21, 22, 23, 25, 26, 27, 28, 29, 30, 32, 33, 34, 39, 40, 42, 44, 46, 47, 48, 49, 52, 53, 54, 56, 60, 61, 62, 63, 64, 67, 68, 70, 71, 76, 78, 87
Վերակազմյալ հնչակյան	10, 75
Փորթուզալյան Մ.	13, 21

## СУРЕН САՐԳՏՅԱՆ

### НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА АРМЯНСКОГО НАРОДА В 1885-1908 гг. В ОЦЕНКЕ ДЕЯТЕЛЕЙ ПАРТИИ “АРМЕНАКАНОВ”

#### РЕЗЮМЕ

В 1880-ые годы в период формирования национальных партий, освободительная борьба армянского народа переживала бурный подъем, становясь более организованной и зрелой. Однако в 1908 г. ввиду многих объективных и субъективных причин, она пришла в упадок (она завершилась печальным поражением).

Младотурецкий переворот и конституция 1908 г. притупили бдительность не только рядовых граждан, но и представителей партий и опытных деятелей - руководителей освободительной борьбы. В результате чего, воспользовавшись ситуацией и благоприятными условиями Первой мировой войны, младотурки сумели осуществить свой бесчеловечный план - решить Армянский вопрос посредством геноцида.

Об освободительной борьбе 1885-1908 гг. написано много трудов. Наряду с другими партийными историками к теме обратились также выдающиеся деятели партии “Арменаканов” А. Дарбинян, А. Екарян, М. Натанян, П. Терлемезян. Они, как очевидцы и участники большинства описываемых событий, оставили мемуары и исследования, имеющие большую историографическую ценность.

Несмотря на то, что этим трудам присущ некий партийный субъективизм, в общем в них удалось дать объективную характеристику национально-освободительной борьбы армянского народа и тех политических партий, которые приняли участие в этом движении. В них подчеркивается в особенности превосходство реалистической, лишенной показухи тактики партии "Арменаканов", результатом которой было ванское "Великое событие" 1896 г., ставшее прообразом героической самообороны 1915 г., в результате которого армянство Васпуракана спаслось от резни.

Анализируя деятельность других армянских традиционных партий - СД Гнчакской и АРФ, авторы отмечают их приверженность национальной борьбе, но в то же время подчеркивают, что их борьба была бы более результативной, если бы они своими показательными действиями не давали врагам лишних поводов для агрессивных действий.

В работе анализируются такие проблемы не исследованные в армянской историографии, как наличие или отсутствие возможностей освобождения от турецкого ига без помощи великих держав, дилемма поиска реалистического пути национального освобождения – гайдуцкая борьба или всеобщее восстание, почему освободительная борьба западного армянства не была результативной и т. д. Для того, чтобы ответить на эти и подобные многочисленные вопросы необходимо исследовать, обсудить мемуары и исследования партийных деятелей, без которых невозможно воссоздать реальную картину этих событий, сделать правильные выводы и извлечь из них уроки.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	3
2. 1885-1908 թթ. հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն Արտակ Ղարբինյանի գնահատմամբ	15
3. Արմենակ Եկարյանի պատմագիտական հայացքները	40
4. Միքայել Նաթանյանի պատմաքննական հայեցակարգերը Արմենական կուսակցության և հայ ազատամարտի վերաբերյալ	70
5. Պատմագիտական միտքը Փանոս Թերլեմեզյանի հուշերում	95
7. Ամփոփում	107
8. Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ	112
9. Ծանոթագրություններ	115
10. Բովանդակություն	119

# ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

1885-1908 թթ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ  
ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՄԵՆԱԿԱՆ  
ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՍԲ

СУРЕН САРГСЯН

НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА  
АРМЯНСКОГО НАРОДА В 1885-1908 ГГ. В ОЦЕНКЕ  
ДЕЯТЕЛЕЙ ПАРТИИ “АРМЕНАКАНОВ”

Տպագր. ան սկզբ` 200 օրինակ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՍ ԲՍԳԻՂ՝  
ՏՊԱԳՐԻՉ՝

ԳՅՅ ԱՆԵ ԲՈՐՈՒՑ ԱՆ  
ԼԵՈՆ Ս ՈՒՐԱՅ ԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

375019, Երևան 19, Մարշալ Բաղրամյան 24<sup>Գ</sup>